

Կորոնավիրուսի համավարակի ազդեցությունը խոցելի խմբերի և նրանց աշխատանքային իրավունքների վրա.



Կանանց փորձառության ուսումնասիրություն

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՑԵԼԻ ԽՄԲԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎՐԱ. ԿԱՆԱՆՑ ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Դաշտային աշխատանքների կազմակերպումը՝
Շուշան Աբրահամյանի, Ագապի Իվանյանի

Հարցազրույցները՝
Շուշան Աբրահամյանի, Մարիամ Խալաթյանի, Նվարդ Մարգարյանի

Վերլուծությունը՝
Մարիամ Խալաթյանի, Նվարդ Մարգարյանի

Խմբագրումը՝
Արփի Մանուսյանի

Սրբագրումը՝
Ավնիվ Նասլյանի

Շարվածքը և ձևավորումը՝
Տաթև Եսայանի

Հետազոտությունը կատարվել է «ԵՄ-ն հանուն աշխատանքային իրավունքների. Հայաստանում քաղաքացիական ձայնի և դերի իրականացում հանուն աշխատանքային իրավունքների և սոցիալական պաշտպանության» ծրագրի շրջանակում, որն իրականացնում են ՕքսԵՋեն հիմնադրամը, «Սոցիոսկոպ», «Ասպարեզ» լրագրողների ակումբ, «Հայ առաջադեմ երիտասարդություն», «Բակմակողմանի տեղեկատվության ինստիտուտ. Հայաստան» հասարակական կազմակերպությունները «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ-ի և Եվրասիա համագործակցություն հիմնադրամի հետ համատեղ: Ծրագիրը ֆինանսավորում է Եվրոպական միությունը: Հետազոտության բովանդակության համար պատասխանատու է «Սոցիոսկոպ» ՀԿ-ն: Հետազոտության մեջ տեղ գտած տեսակետները կարող են չհամընկնել Եվրոպական միության եւ ծրագրում ընդգրկված մյուս կառույցների դիրքորոշումների հետ:

«ՍՈՑԻՈՍԿՈՊ» ՀԿ
2022

Բովանդակություն

Ներածություն 4

Հետազոտության մեթոդաբանական շրջանակ 6

Հետազոտության սահմանափակող գործոնները 9

ԳԼՈՒԽ 1. Կորոնավիրուսի համավարակի ազդեցությունը խոցելի խմբերի և նրանց աշխատանքային իրավունքների վրա 10

1.1. Կորոնավիրուսային համավարակից տուժած խոցելի խմբերը և նրանց հիմնական խնդիրները 11

1.2. Կանայք և նրանց աշխատանքային իրավունքները 26

ԳԼՈՒԽ 2. Պետության և քաղաքացիական հասարակության արձագանքը համավարակի առաջ բերած խնդիրներին 35

2.1. Համավարակի հետևանքների չեզոքացման պետական ծրագրերը և օրենսդրական փոփոխությունները 36

2.2. Քաղաքացիական հասարակության և միջազգային կազմակերպությունների աջակցությունը համավարակից տուժած խմբերին 47

ԳԼՈՒԽ 3. Խոցելի խմբերի և կանանց կարիքներին ու խնդիրներին պետության և քաղաքացիական հասարակության արձագանքի բացերը 52

3.1. Փորձագետների ու կանանց տեսակետը համավարակի պատճառների չեզոքացմանն ուղղված սոցիալական աջակցության ծրագրերի և ծառայությունների արդյունավետության շուրջ 53

3.2. Սոցիալական արդարության տեսլականը 67

Ամփոփում և առաջարկություններ 71

Գրականություն և հղումներ 76

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2019-ի դեկտեմբերին Չինաստանի Վուհան քաղաքում բռնկված նոր տեսակի կորոնավիրուսի համավարակը իսկական փորձություն դարձավ ողջ մարդկության համար՝ վտանգելով թե՛ մարդկանց կյանքը, թե՛ կենսապայմանները: Թեև ընդհանուր առմամբ համավարակի տարածման տեմպը դանդաղել է, որոշ սահմանափակումներ արդեն անցյալում են, ավելացել է կորոնավիրուսի դեմ պատվաստված բնակչության թիվը, այնուամենայնիվ, կորոնավիրուսի համավարակն ու դրա ազդեցությունները դեռևս համաշխարհային հիմնախնդիր են և նոր մարտահրավերների առաջ են կանգնեցնում աշխարհին: Հայաստանը ևս բացառություն չէ այս պարագայում: Համաշխարհային առողջապահական այս հիմնախնդիրը Հայաստանում ևս էականորեն փոխեց ոչ միայն հանրային առողջության ոլորտը, այլև բացասաբար ազդեց հարակից, միմյանց պայմանավորող և միմյանցից փոխկախված ոլորտների վրա՝ առողջապահության, կրթության, մշակույթի, տնտեսության և այլն:

ՀՀ-ում կորոնավիրուսի համավարակը մեծապես ազդեց աշխատաշուկայի, աշխատանքային փոխհարաբերությունների և աշխատանքային իրավունքների վրա: Այն ոչ միայն ակնբախ դարձրեց չգրանցված աշխատողների, առանց աշխատանքային պայմանագրի աշխատող մարդկանց խնդիրները և խոցելիությունները, այլև էականորեն սրեց պայմանագրում ամրագրված և իրական աշխատավարձերի միջև անհամապատասխանության, հեռավար աշխատանքի կազմակերպման և աշխատանքային իրավունքներին առնչվող այլ հարցերը: Մյուս կողմից էլ համավարակի հետևանքով էականորեն կրճատվեց աշխատատեղերի քանակը, ինչն էլ խորացրեց երկրում գործազրկության մակարդակը, որը ՀՀ անկախության գրեթե բոլոր տարիներին մշտապես բարձր է եղել[1]: Ավելին՝ այն հանրային խմբերը և շերտերը, որոնք խոցելի էին առողջության և կորոնավիրուսի համավարակի տեսանկյունից, աշխատանքային իրավունքների պաշտպանվածության հարցում դարձան է՛լ ավելի խոցելի ինչպես առողջության, այնպես էլ այլ սոցիալական երաշխիքների տեսանկյունից:

Համաձայն Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) վերջին հրապարակումների՝ աշխարհում գենդերային հավասարության իրադրությունը հետընթաց է ապրել՝ պայմանավորված կորոնավիրուսի համավարակով: Համավարակից առավել շատ տուժած ոլորտներում կանայք աշխատանքի և եկամտի անհամաչափ կորուստ են ունեցել իրենց բարձր ներկայացվածության հետևանքով: Այլ տուժած ոլորտներում էլ կանայք շարունակում են աշխատել առաջնային

1 finport.am. (2020, հունվարի 14). Գործազրկության մակարդակը Հայաստանում 2019 թ. երրորդ եռամսյակում կազմել է 18%. վերցվել է՝ https://finport.am/full_news.php?id=40630&lang=1:

օղակներում՝ տրամադրելով առողջության և խնամքի անհրաժեշտ ծառայություններ՝ հաճախ նաև առանց վարձատրության: Ինչպես ցույց են տալիս հետազոտությունները, համաշխարհային մակարդակում կանայք տղամարդկանցից շատ են տուժել համավարակով պայմանավորված աշխատանքի կորստից: Կանանց աշխատատեղերի 4,2%-ը փակվել է՝ ի տարբերություն տղամարդկանց աշխատատեղերի 3%-ի՝ կազմելով համապատասխանաբար 54 մլն աշխատատեղ կանանց և 60 մլն աշխատատեղ տղամարդկանց համար (ILO, 2021): Սակայն եթե 2021 թ. 2019-ի համեմատ աշխատատեղերը տղամարդկանց համար գրեթե ամբողջությամբ վերականգնվել են (59 մլն), ապա կանանց համար վերականգնվել է 41 մլն աշխատատեղ: Այսինքն՝ 2021 թ. տվյալներով աշխատաշուկայում 13 միլիոնով ավելի քիչ զբաղված կին կա, քան 2019 թ. ցուցանիշն էր (ILO, 2021): Այս վիճակագրությունը և աշխատատեղերի կորստի հարաբերակցությունը տարբերվում են այլ աշխարհամասերում, սակայն մեծ պատկերն, ըստ էության, չի փոխվում (ILO, 2021):

Թվում է՝ աշխարհը որոշակիորեն կարողացել է հաղթահարել կորոնավիրուսի համավարակն ու դրա հետևանքները, սակայն աշխատանքային իրավունքների ոլորտում համավարակով պայմանավորված բացերը վերհանելու, դրանք կարգավորելու և հետագայում նման ճգնաժամային իրադրություններում մարդկանց ապահովագրելու հարցերը բարձրաձայնելն ու լուծումներ գտնելը մնում են արդիական:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿ

Հաշվի առնելով կորոնավիրուսի համավարակի և աշխատանքային իրավունքների վրա դրա ազդեցության համատեքստը՝ 2021 թ. մենք նախաձեռնեցինք «Կորոնավիրուսի համավարակի ազդեցությունը խոցելի խմբերի և նրանց աշխատանքային իրավունքների վրա. կանանց փորձառության ուսումնասիրություն» հետազոտությունը: Համավարակը ցույց տվեց, որ աշխատանքային իրավունքների մասով ամենախոցելի խմբում են չգրանցված աշխատողները, որոնք նման ճգնաժամային պայմաններում սոցիալական աջակցության ծրագրերից ու ծառայություններից օգտվելու որևէ երաշխիք և հնարավորություն չունեն: Հետազոտությունները ցույց են տալիս, որ կանայք չգրանցված աշխատողների շարքում ավելի մեծ խումբ են կազմում, քան տղամարդիկ (World Bank, 2021): Ավելին՝ համավարակն էլ ավելի խոցելի դարձրեց կանանց, որոնք կյանքի տարբեր ոլորտներում շարունակաբար ենթարկվում են խտրականության. ավելացավ նաև ընտանեկան բռնության ենթարկվող կանանց թիվը[2]:

Հաշվի առնելով կանանց հարցերի ուսումնասիրությանն ուղղված մեր մշտական հետաքրքրությունը և կորոնավիրուսի առաջ բերած խնդիրները՝ այս հետազոտության նպատակն է դուրս բերել համավարակի ազդեցությունը Հայաստանում կանանց աշխատանքային իրավունքների իրադրության վրա:

Հետազոտության նպատակով պայմանավորված՝ առանձնացրել ենք հետևյալ հետազոտական հարցերը.

- Ի՞նչ քաղաքականություն է իրականացրել պետությունը կորոնավիրուսի համավարակի հետևանքների մեղմման համար: Արդյոք նախատեսվե՞լ են քաղաքականություններ աշխատանքային իրավունքների առնչությամբ: Ի՞նչ հարցերի լուծմանն են դրանք ուղղված եղել և ինչպիսի՞ գաղափարական հենքեր են ունեցել:

- Սոցիալական աջակցության ի՞նչ ծրագրեր է պետությունն իրականացրել համավարակի ընթացքում, ինչպե՞ս են դրանք առնչվել կանանց աշխատանքային իրավունքներին: Գնահատվե՞լ են արդյոք այդ ծրագրերը, քաղաքականությունները:

- Աշխատանքային իրավունքների առնչությամբ ի՞նչ խնդիրների են բախվել կանայք աշխատավայրում համավարակի ընթացքում, ինչպե՞ս են պաշտպանվել նրանց իրավունքները, անվտանգությունը:

2 unwomen.org. The Shadow Pandemic: Violence against women during COVID-19. վերցվել է՝ https://bit.ly/3w6LBbJ

→ Ի՞նչ տեսլական ունեն պետության իրականացրած սոցիալական քաղաքականությունները կարճաժամկետ և երկարաժամկետ առումներով: Սոցիալական արդարությանն ուղղված ի՞նչ քաղաքականությունների ներդրման կամ իրականացման կարիք կա:

Այս հետազոտական հարցերը դիտարկելով որպես ուղենիշներ՝ իրականացրել ենք եռափուլ հետազոտություն որակական մեթոդաբանությամբ: Առաջին փուլում կատարել ենք ***փաստաթղթերի երկրորդային վերլուծություն***: Քարտեզագրել ենք պետական աջակցության այն ծրագրերը, որոնք իրականացվել են աշխատանքային և սոցիալական իրավունքների ոլորտում 2020 թվականի մարտից: Ինչպես նաև ուսումնասիրել ենք այս հարցերին առնչվող օրենսդրական նախագծերն ու փոփոխությունները և քաղաքացիական հասարակության, միջազգային կազմակերպությունների տրամադրած աջակցության ծրագրերը: Ուսումնասիրված փաստաթղթերը ներառում են.

- Կառավարության իրականացրած սոցիալական և տնտեսական աջակցության ծրագրերը, օրենսդրական նախագծերը և աշխատանքային օրենսգրքի, հարակից օրենքներում փոփոխությունները,
- պարետատան որոշումները և ծրագրերը, սոցիալական աջակցության փաթեթները և ծրագրերը, որոնք ուղղված են եղել կանանց, կանանց աշխատանքային և այլ իրավունքների պաշտպանությանը,
- քաղհասարակության կազմակերպությունների իրականացրած ծրագրերը շահառու խմբերի համար՝ մասնավորապես համավարակի շրջանակում կանանց տրամադրված ծառայությունները,
- հասարակական և հետազոտական տարբեր կազմակերպությունների իրականացրած հետազոտություններ, վիճակագրական տվյալներ, մեդիա նյութեր, հրապարակումներ:

Փաստաթղթերի երկրորդային վերլուծությունից դուրս բերված եզրակացությունների, ինչպես նաև բաց մնացած հետազոտական հարցերին պատասխանելու համար 2021 թ. հոկտեմբեր-նոյեմբերին կազմակերպել և իրականացրել ենք ***փորձագիտական հարցազրույցներ*** ոլորտի պատասխանատուների հետ: Փորձագետները ներկայացնում են հետևյալ կառույցները՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Ազգային ժողով, Առողջության և աշխատանքի տեսչական մարմին, ՄԻՊ, Արհմիությունների կոնֆեդերացիա, ՀԿ-ներ, միջազգային կազմակերպություններ: Ընդհանուր առմամբ իրականացրել ենք ***10 փորձագիտական հարցազրույց***:

Փորձագիտական հարցազրույցների արդյունքում քարտեզագրել ենք կորոնավիրուսի համավարակից հատկապես տուժած տնտեսության ոլորտները և այդ ոլորտներում տուժած խմբերին: Թե՛ փաստաթղթերի երկրորդային վերլուծությունից, թե՛ փորձագիտական գնահատականներից եզրակացնում ենք, որ աշխատանքային իրավունքների տեսանկյունից կանայք հատկապես խոցելի են եղել, իսկ որոշ ոլորտներում դա է՛լ ավելի սուր և տեսանելի դրսևորում է ունեցել: Ուստի կանանց փորձառությունը հասկանալու համար 2022 թ. հունվար-մարտին իրականացրել ենք ***տրիադաներով խմբային քննարկումներ և անհատական խորին հարցազրույցներ***: Հետազոտությանն ընդհանուր առմամբ մասնակցել են 12 կանայք մշակույթի, առևտրի (սնունդ և հագուստ), զբոսաշրջության և հյուրընկալության, թեթև արդյունաբերության, սննդի և ժամանցի կազմակերպման, ծառայությունների մատուցման ոլորտներից:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Ինչպես յուրաքանչյուր հետազոտական գործընթացում, այս պարագայում ևս բախվել ենք մարտահրավերների և սահմանափակումների, որոնք այս կամ այն կերպ ազդել են ուսումնասիրության վրա: Առավել էական խնդիրը, որին առնչվել ենք, փորձագետների հատվածային գիտելիքն ու տեղեկատվությունն են իրենց ոլորտում համավարակի ուղղությամբ իրականացված ծրագրերի և ծառայությունների մասին: Կորոնավիրուսի համավարակի տարածումից ի վեր տուրբուլենտ քաղաքական դաշտում և մասնավորապես այս հարցերով որոշում կայացնող պատասխանատու պաշտոններում տեղի ունեցած կադրային փոփոխությունները սահմանափակում էին ամբողջական տեղեկատվության ստացումը: Պետական համակարգում ինստիտուցիոնալ հիշողության պահպանման և գիտելիքի համակարգման մեխանիզմի բացակայության պայմաններում տեղեկատվությունը հեշտորեն կորչում է: Հետազոտության մեկ այլ սահմանափակող գործոն էր այն, որ նախկին պաշտոնյաները պետության կողմից կորոնավիրուսի համավարակի հետևանքների չեզոքացմանն ուղղված գործողությունների մասին խոսում էին ներկայում իրենց զբաղեցրած դիրքից և քննադատական հայացքով, որը, սակայն, հեռու էր ինքնանդրադարձից և շրջանցում էր սեփական պատասխանատվության հարցը: Իսկ այն մարմինները, որոնք անմիջականորեն են առնչվում աշխատանքային իրավունքների հարցերին, ևս մասնակի էին տիրապետում հետազոտական խնդիրների բացահայտմանն ուղղված հարցերին: Ավելին՝ որոշ փորձագետներ կանանց՝ սեփական աշխատանքային իրավունքների մասին գիտելիքի և սեփական իրավունքների պաշտպանության կարողությունների մասին խոսելիս օգտագործում էին ոչ զգայուն և խտրական լեզու, որը հաշվի չէր առնում կանանց տարբեր հնարավորությունները և սոցիալական միջավայրերը, ինչպես նաև նրանց կյանքի ոչ միանման փորձառությունները: Հետազոտական գործընթացում մյուս խոչընդոտը, որին բախվել ենք, հետազոտությանը մասնակցելու համար կանանց համաձայնությունը ստանալն էր: Աշխատանքային իրավունքները մշտապես օգտագործվում են այլ բնական իրավունքները ոտնահարելու, խախտելու և մարդկանց վերահսկելու համար, ուստի մարդիկ հաճախ խուսափում են իրենց աշխատանքային իրավունքներին առնչվող հարցերը քննարկելուց: Ինչպես ցույց տվեց մեր հետազոտությունը, կանայք ևս խուսափում են իրենց աշխատանքային իրավունքներին առնչվող խնդիրները բարձրաձայնելուց, քանի որ մտահոգ են աշխատանքը կորցնելու կամ գործատուին վնասելու հեռանկարով: Այս խնդիրը շատ ավելի տեսանելի էր արտադրության ոլորտում աշխատող կանանց շրջանում, որոնց էական դժվարությամբ հաջողեցինք հասնել: Հետազոտության ընթացքում նկատել ենք նաև, որ երբեմն գործատուներին չվնասելու և սեփական աշխատանքը կորցնելու մտահոգությունն ունենալով՝ կանայք մեղմում էին գործատուների հետ հարաբերություններում եղած խնդիրները:

ԳԼՈՒԽ I

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՑԵԼԻ ԽՄԲԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎՐԱ

1.1. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԱՄԱՎԱՐԱԿԻՑ ՏՈՒԺԱԾ ԽՈՑԵԼԻ ԽՄԲԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Կորոնավիրուսի համավարակը հումանիտար և զարգացման ճգնաժամ է, որի առաջ բերած սոցիալ-տնտեսական խոր հետևանքները ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ առումներով ազդում են հասարակության հատկապես ամենախոցելի և լուսանցքային խմբերի վրա: Համավարակն ազդել է աշխարհի բոլոր երկրների և հասարակությունների վրա և հատկապես այն խմբերի և համայնքների, որոնք արդեն իսկ խոցելի էին տարբեր սոցիալական և տնտեսական ազդեցությունների և ճգնաժամերի տեսանկյունից:

Համավարակի հետևանքով տնտեսական համակարգում առաջ եկած ճեղքերը ազդել են և շարունակում են մեծապես ազդել համաշխարհային աշխատուժի և զբաղվածության ոլորտի վրա: Այնուամենայնիվ, աշխատաշուկայի ցնցումները միատեսակ չեն, և համավարակի հետևանքով կան ինչպես առավել տուժած ոլորտներ, այնպես էլ աշխատողների որոշ խմբեր (ILO, 2020):

Ավելին, թեև համավարակն ազդել է պետությունների տնտեսական համակարգերի վրա, սակայն այն տնտեսությունները, որոնք մինչ համավարակը խոցելի էին, համավարակի պայմաններում դարձան առավել խոցելի: Հայաստանյան տնտեսությունը 1990-ականներին՝ Խորհրդային Միության փլուզումից հետո, տուժել է արտադրողական աշխատատեղերի լուրջ դեֆիցիտից: Երկար տարիներ այս դեֆիցիտն արտահայտվել է թե՛ ներքին տնտեսական շուկայում աշխատանքային հնարավորությունների պակասով, թե՛ զբաղված աղքատների մեծ թվաքանակով: Եթե նախկին տարիների ընթացքում աշխատող աղքատների թիվը կրճատվել է, աշխատատեղերի դեֆիցիտը մնացել է բավականին բարձր (Campbell et al, 2019): 2000-ականների համաշխարհային տնտեսական աճով պայմանավորված՝ Հայաստանում աղքատ բնակչության թիվը 2004-2008 թվականներին նվազեց՝ 54%-ից իջնելով մինչև 27% (UNICEF Armenia, 2020): Սակայն Հայաստանը մեծապես տուժեց 2008 թ. համաշխարհային ֆինանսական ճգնաժամից, որի հետևանքով սոցիալ-տնտեսական զարգացման տեմպերը դանդաղեցին (UNICEF Armenia, 2020): Տնտեսությունը վերականգնվեց 2008-2009 թթ. հետո. 2010 թ. ՀՆԱ 2.2% աճից հասավ 7.2% 2012 թ., բայց 2013 թ. աճը դանդաղեց՝ իջնելով մինչև 3.5%[3]: Մինչև 2018 թ. Թավշյա հեղափոխությունը՝ 2017 թ. ընթացքում, հասարակական բարեկեցության տեսանկյունից էական փոփոխություններ տեղի չեն ունեցել[4]: 2014-2025 թթ. համար ՀՀ Կառավարության մշակած և ընդունած զարգացման ռազմավարությունը, ըստ տարբեր փորձագիտական գնահատականների, չէր ներառում Հայաստանի բնակչության սոցիալական վիճակի բարելավմանն ուղղված

3 adb.org. Երկրի գործընկերության ռազմավարություն. Հայաստան, 2014-2018. վերցվել է՝ https://bit.ly/3kJzz1k:

4 Նույն տեղում:

անհրաժեշտ բաղադրիչներ[5]: Ըստ ՀՀ ֆինանսների նախարարության 2020 թվականի մակրոտնտեսական վերլուծության և հեռանկարների՝ ՀՀ-ում գրանցվել և պահպանվել են բարձր տնտեսական աճի միտումներ մինչև համավարակի սկիզբը[6], և ըստ Կենտրոնական բանկի գնահատականների՝ Հայաստանը 2020 թ. ճգնաժամ մտել է ավելի լավ մակրոտնտեսական ցուցանիշներով, քան 2008-2009 թթ. (ILO, 2020):

Կորոնավիրուսի համավարակով, ինչպես նաև Ղարաբաղյան երկրորդ պատերազմով պայմանավորված՝ 2020 թ. գրանցված 7,4% տնտեսական անկման պայմաններում Հայաստանում բնակվող մարդկանց կենսամակարդակը վատթարացել է: 2021 թ. նոյեմբերի 30-ին ՀՀ վիճակագրական կոմիտեն հրապարակել է «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը. 2021» վիճակագրական վերլուծական զեկույցը, ըստ որի՝ 2020-ին 2019-ի համեմատ աղքատության[7] մակարդակը աճել է 0,6%-ով՝ կազմելով 27% (ՀՀ վիճակագրական կոմիտե, 2021): Համաշխարհային բանկի կողմից հաստատված նոր մեթոդաբանության համաձայն՝ 2020-ին ծայրահեղ աղքատության մակարդակը կազմել է 0,7% (2019 թ.՝ 1,4%), աղքատությունն ըստ ստորին գծի՝ 9,7% (2019 թ.՝ 10,2%), աղքատությունն ըստ վերին գծի՝ 47,6% (2019 թ.՝ 43,8%), իսկ աղքատության միջին գիծը՝ 27% (2019 թ.՝ 26.4%) (ՀՀ վիճակագրական կոմիտե, 2021): Այս թվերի վերլուծությունից հասկանում ենք, որ 2020 թվականին ծայրահեղ և ստորին գծի աղքատների թիվը կրճատվել է, իսկ ընդհանուր աղքատության մակարդակը հիմնականում պայմանավորված է միջին խավի աղքատացմամբ: Ըստ էության՝ աղքատների շարքերը համալրել են նախկինում աշխատանք ունեցող մարդիկ, որոնց վրա էլ մեծապես ազդել է կորոնավիրուսի համավարակը:

Ուսումնասիրելով ՀՀ վիճակագրական կոմիտեի «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2020 թվականի հունվար-դեկտեմբերին» հրապարակման «Կազմակերպությունների թիվը, աշխատողների թվաքանակը և միջին ամսական անվանական աշխատավարձը. 2019-2020 թթ.» աղյուսակը՝ տեսնում ենք, որ 2020 թվականի մարտ-մայիսին նկատվել է թե՛ կազմակերպությունների թվի, թե՛ աշխատողների թվաքանակի և թե՛ միջին ամսական աշխատավարձի անկում: Այսպես, եթե 2020 թվականի մարտի տվյալներով

5 hetq.am. (2018, հունվար). Հայաստանի տնտեսության 2017 թ. իրավիճակային գնահատում, հիմնական ազդեցության գործոններ. 2018 թվականից կարևոր սպասելիքներ. վերցվել է՝ https://hetq.am/hy/article/85081:

6 ՀՀ ֆինանսների նախարարություն. (2021). Մակրոտնտեսական զարգացումներ և կանխատեսումներ. վերցվել է՝ minfin.am:

7 Ծայրահեղ (պարենային) աղքատության գիծը կիրառվում է շատ աղքատ և ծայրահեղ աղքատության մեջ ապրող մարդկանց որոշելու համար: Դա այն գումարն է, որն անհրաժեշտ է նվազագույն պարենային պահանջները բավարարելու համար: Այսինքն՝ մարդիկ, որոնց սպառումը չի բավականացնում նվազագույն պարենային պահանջները բավարարելու համար, համարվում են ծայրահեղ աղքատ: Աղքատության ընդհանուր գիծը ներառում է աղքատության պարենային գիծը և ոչ պարենային ապրանքների օրական սպառումը, քանի որ անձը պետք է կարողանա հոգալ ոչ միայն իր նվազագույն պարենային պահանջը, այլև կարևոր կամ նվազագույն ոչ պարենային ապրանքների պահանջը (ՀՀ վիճակագրական կոմիտե, 2009):

եղել է 48,802 կազմակերպություն, ապա այս ցուցանիշը ապրիլի համար եղել է 46,082: Արդեն մայիսին կազմակերպությունների թիվն ավելին է եղել, քան մինչև կորոնավիրուսի համավարակի և արտակարգ դրության հայտարարման սկիզբը՝ 49 010 կազմակերպություն: Աշխատողների թվաքանակը ևս նվազել է ապրիլին և աստիճանաբար վերականգնվել մայիսին և հունիսին: Այսպես, եթե մինչև համավարակի սկիզբը՝ 2020 թվականի փետրվարին և մարտին, աշխատողների քանակը համապատասխանաբար 614,812 և 618,565 էր, ապա ապրիլին այս թիվը դարձավ 585,103 (ՀՀ վիճակագրական կոմիտե, 2021):

Աղյուսակ 1. Կազմակերպությունների թիվը, աշխատողների թվաքանակը և միջին ամսական անվանական աշխատավարձը. 2019-2020 թթ. ամիսներ[8]:

	Կազմակերպությունների թիվը		Աշխատողների թվաքանակը. *մարդ*		Միջին ամսական աշխատավարձը. *դրամ*	
	2019	**2020**	**2019**	**2020**	**2019**	**2020**
Հունվար	40 676	46 200	560 612	600 340	172 827	191 012
Փետրվար	41 391	48 186	569 275	614 812	172 124	186 954
Մարտ	41 576	48 802	569 450	618 565	177 222	192 448
Ապրիլ	42 931	46 082	588 243	585 103	179 002	183 035
Մայիս	43 639	49 010	596 718	607 848	179 580	182 799
Հունիս	44 290	51 188	601 524	632 964	179 475	182 149
Հուլիս	44 655	51 879	603 017	632 591	187 280	191 592
Օգոստոս	44 936	52 658	602 373	635 414	180 935	186 990
Սեպտեմբեր	45 577	53 560	614 459	648 306	178 421	185 270
Հոկտեմբեր	45 792	52 902	620 552	639 091	179 941	181 734
Նոյեմբեր	46 099	52 109	624 763	632 313	177 647	183 637
Դեկտեմբեր	46 392	52 427	627 831	637 389	224 517	228 342

8 Ինչպես բացատրում է իր մեթոդաբանությունը ՀՀ վիճակագրական կոմիտեն, 2020 թ. ապրիլից կորոնավիրուսի համավարակի տնտեսական ազդեցությունը հնարավորինս գնահատելու նպատակով կազմակերպությունների թվի, աշխատողների թվաքանակի և միջին աշխատավարձի ցուցանիշների հաշվարկներում ներառվել են նաև աշխատողներին ամբողջությամբ կամ նրանց մի մասին չվճարվող հարկադիր պարապուրդ ուղարկած կազմակերպությունների տվյալները: Այդ աշխատողների աշխատանքային գործունեությունը չի դադարեցվել, սակայն նրանք չեն վարձատրվել: Հարկ է, սակայն, նկատի ունենալ, որ ՀՀ ՊԵԿ տվյալների բազայում հարկադիր պարապուրդի վերաբերյալ փաստական տվյալներ առկա չեն: Այնուհանդերձ, նույն բազայի շրջանակում՝ գործատուներից հավաքվող այլ տվյալների հիման վրա, հաշվարկային կարգով դրանք մոտարկվել են: Մասնավորապես, ՀՀ ՊԵԿ-ից լրացուցիչ ստացվել են տվյալներ այն գործատուների մասին, որոնք տվյալ ամսում ունեցել են 0-ական ԱՎՀՎ ունեցող աշխատողներ, որոնք չեն եղել քաղաքացիաիրավական պայմանագրի հիման վրա աշխատողներ, չեն գտնվել չվճարվող արձակուրդում կամ ժամանակավոր անաշխատունակության մեջ:

Աշխատանքի միջազգային կազմակերպությունը, վերլուծելով Հայաստանում առկա վիճակագրական տվյալներն ու հասանելի փաստաթղթերը, իր «Հայաստան. COVID 19 – աշխատաշուկայի արագ գնահատում» հետազոտության շրջանակում իրականացրել էր մոտավոր հաշվարկ, թե ինչպես է համավարակն ազդելու թե՛ տնտեսության, թե՛ առողջության վրա (ILO, 2020), որն արտացոլված է ստորև ներկայացված աղյուսակում:

Աղյուսակ 2. Կորոնավիրուսի ազդեցությունը տնտեսական ոլորտի վրա զբաղվածության և առողջապահության տեսանկյունից

		Տոկոսային արտահայտում, %				
		ՀՆԱ	Զբաղվածություն	% կանայք	Զբաղվածության վրա ազդեցություն	Առողջության վրա ազդեցություն
A	Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն	15,0	25,4	47,6	ցածր	շատ ցածր
B	Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	3,2	0,9	6,6	միջին	միջին
C	Մշակող արդյունաբերություն	12,4	9,9	39,6	չափազանց բարձր	բարձր
D	Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	4,0	2,1	17,7	ցածր	միջին
E	Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում	0,5	0,4	35,1	ցածր	միջին
F	Շինարարություն	7,3	9,4	1,0	չափազանց բարձր	միջին
G	Մեծածախ և մանրածախ առևտուր	12,4	11,4	43,3	չափազանց բարձր	բարձր
H	Փոխադրումներ և պահեստային տնտեսություն	3,5	4,3	14,9	ցածր	բարձր
I	Կացության և հանրային սննդի կազմակերպում	2,0	2,5	50,2	չափազանց բարձր	բարձր

J	Տեղեկատվություն և կապ	3,5	2,0	38,6	միջին	ցածր
K	Ֆինանսական և ապահովագրական գործունեություն	5,8	1,4	55,5	միջին	ցածր
L	Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	8,7	0,2	37,5	միջին	միջին
M	Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն	1,3	1,4	59,5	ցածր	շատ ցածր
N	Վարչարարական և օժանդակ գործունեություն	1,1	0,4	48,8	ցածր	շատ ցածր
O	Պետական կառավարում	4,6	8,7	27,8	ցածր	միջին
P	Կրթություն	2,8	10,1	79,3	միջին	միջին
Q	Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում	4,6	4,4	84,0	ցածր	չափազանց բարձր
R	Մշակույթ, զվարճություններ և հանգիստ	6,2	1,6	48,2	չափազանց բարձր	միջին
S	Սպասարկման այլ ծառայություններ	1,0	2,9	45,0	չափազանց բարձր	միջին
T	Տնային	0,1	0,4	68,3	միջին	բարձր
U	Էքստրատերիտորիալ	0,0	0,3	27,3	ցածր	շատ ցածր
ԲՈԼՈՐ ՈԼՈՐՏՆԵՐԸ		**100,0**	**100,0**	**45,5**		

Այսպես՝ այս աղյուսակից պարզ է դառնում, որ կորոնավիրուսի համավարակից ամենաշատը տուժել են մշակող արդյունաբերության, շինարարության, առևտրի, հյուրանոցային և հանրային սննդի կազմակերպման, մշակույթի, ժամանցի և սպասարկման այլ ծառայությունների ոլորտները: Ընդ որում՝ զգալի տուժած մշակվող արյունաբերության, շինարարության, առևտրի ոլորտները ՀՆԱ-ի կտրվածքով ունեն էական տեղ տնտեսության մեջ: Հատկանշական է, որ չափազանց տուժած առևտրի, հյուրանոցային և հանրային սննդի կազմակերպման, մշակույթի և զվարճանքի, սպասարկման այլ ծառայությունների ոլորտում կանանց ներգրավվածությունը բավականին բարձր է: Եթե կանանց ընդհանուր զբաղվածությունն աշխատաշուկայում 45,5% է, ապա այս տուժած ոլորտներում նրանց ներգրավվածությունը (օրինակ՝ հյուրանոցային և հանրային սննդի ապահովման, մշակույթի և ժամանցի, սպասարկման այլ ծառայություններ) հասնում է մինչև իսկ 50%-ի:

Մեր հետազոտությանը մասնակցած փորձագետները ևս առանձնացրել են շինարարության, առևտրի, ժամանցի և զվարճությունների կազմակերպման, ծառայությունների տրամադրման ոլորտներն իբրև համավարակից ամենաշատը տուժածներ:

Այսպես, ըստ ՀՀ-ում 2020 թվականի մարտին հայտարարված արտակարգ դրության, ինչպես նաև պարետի որոշումների, ՀՀ ողջ տարածքում կիրառվեցին տնտեսական գործունեության տեսակների նկատմամբ ժամանակավոր սահմանափակումներ՝ ըստ կորոնավիրուսային հիվանդության տարածման կանխարգելման, դրա հետևանքների վերացման կարիքների[9]:

Տվյալ որոշմամբ մասամբ արգելվեց մշակող արդյունաբերության, շինարարության, առևտրի, հանրային սննդի, մշակույթի, զվարճությունների և հանգստի և այլ ոլորտների գործունեությունը: Ուստի այս ոլորտներում գործունեություն իրականացնող տնտեսվարողները հատկապես տուժեցին համավարակի հետևանքով: Կորոնավիրուսի համավարակը տնտեսական գործունեության վերոնշյալ ոլորտներում ունեցավ էական բացասական ազդեցություն: Ավելին՝ այն ծանր ազդեցություն ունեցավ ոչ միայն պաշտոնապես գրանցված աշխատողների, այլև այլ խմբերի ներկայացուցիչների և հատկապես չգրանցված՝ ստվերում մնացած աշխատողների վրա: Իսկ ըստ ուսումնասիրության շրջանակում հարցված փորձագետների գնահատականների՝ չգրանցված աշխատողները ամենաշատը ներգրավված են հենց այս ոլորտներում:

9 arlis.am. (2020, մարտ). Պարետի որոշում N 27. Արտակարգ դրության իրավական ռեժիմով պայմանավորված Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում կիրառվող սահմանափակումների վերաբերյալ. վերցվել է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=141040:

Համավարակից տուժած ոլորտները

Շինարարության ոլորտ

Շինարարության ոլորտում հիմնականում ներգրավված են օրավարձով աշխատող բանվորները, որոնց հետ, ըստ էության, չեն կնքվում ոչ աշխատանքային, ոչ ծառայությունների մատուցման պայմանագրեր: Համավարակի շրջանակում հայտարարված արտակարգ դրության պայմաններում ժամանակավորապես դադարեցվեցին շինարարության ոլորտի աշխատանքները, ինչի հետևանքով բազմաթիվ քաղաքացիներ մնացին առանց եկամտի: Ավելին, քանի որ շինարարության ոլորտում ընդգրկված աշխատողների գերակշիռ մեծամասնության աշխատանքը իրավականորեն ամրագրված չէր, նրանք նաև դուրս մնացին պետության կողմից տրամադրվող՝ կորոնավիրուսի համավարակի տնտեսական և սոցիալական ազդեցությունների չեզոքացման համար մատուցվող ծրագրերից:

> *Մենք մի պահ համավարակի ամենապիկի ժամանակ շինարարության ոլորտի դադար ունեցանք, իսկ շինարարությունը հայտնի է որպես չգրանցված աշխատողների ոլորտ:*
>
> ***ԱԺ պատգամավոր***

Ծառայությունների մատուցման և սպասարկման ոլորտ

Ինչպես շինարարության ոլորտի պարագայում, հայտարարված արտակարգ դրության ժամանակ տնտեսական գործունեության որոշակի սահմանափակումներ մտցվեցին և կիրառվեցին նաև առևտրի, սպասարկման, մեծածախ և մանրածախ վաճառքի, ռեստորանների, ճաշարանների և այլ ծառայությունների մատուցման ոլորտներում:

> *Ամենախոցելիները երևի ծառայության ոլորտում աշխատող մարդիկ էին՝ ռեստորանային ցանցերը, սպասարկման այլ ոլորտները... Սովորաբար մարդիկ մատուցող են աշխատել, հավաքարար և մնացին փաստացի անաշխատանք և չէին կարողանում աշխատանք գտնել, ու ինչ-որ պահից այդ մարդիկ արդեն ունեին պարենի խնդիր:*
>
> ***ԱԺ նախկին պատգամավոր***

Մշակույթի, զվարճությունների և հանգստի ոլորտ

Արտակարգ դրության պայմաններում սահմանափակվեց մշակութային հաստատությունների, զվարճությունների սրահների և հանգստի կազմակերպման

կազմակերպությունների գործունեությունը, ինչի հետևանքով հատկապես տուժեցին մշակույթի ոլորտի անհատ ստեղծագործողները, արվեստի ոլորտի ներկայացուցիչները և այլն: Ընդ որում՝ նման կազմակերպությունների գործունեությունը վերականգնվեց ավելի ուշ: Մյուս կողմից, քանի որ համավարակն էապես ազդեց երկրի սոցիալ-տնտեսական դրության վրա, մշակույթը, զվարճությունները և հանգիստը հանրության համար կորցրին կարևորությունը:

Համավարակից ամենաշատը տուժել են կվարճանքի կենտրոնների, այդ թվում՝ սպորտ դահլիճների, ժամանցի կենտրոնների աշխատողները: Հանդիսավարները, որոնք ոչ որպես անհատ ձեռնարկատեր են գրանցված (որ հարկեր չվճարեն), ոչ էլ ինչ-որ մեկի մոտ աշխատում են (իրենք ուղղակի պատվերը ընդունում են ու գնում են, իրենց գործը անում են, ըստ էության իրենք հարկային դաշտ էլ մտած չեն), ևս դուրս մնացին համավարակի չեկոքացման ծրագրերից: Բայց ամենամեծ աղմուկը մեկ մոտ եղել է հենց անհատ երգիչ-կատարողների ու թամադաների ինստիտուտի կողմից, որովհետև իրենք առանց գործ մնացին:

ԱԺ պատգամավոր

Կրթության և սպորտի, մշակույթի ոլորտները շատ տուժել են և դրանց կրթական հատվածը: Եթե ասում եմ սպորտ, մշակույթ, նկատի չունեմ, որ մշակույթը միայն թատրոնն է, խմբակներն էլ են տուժել: Կան բաներ, որ հեռավար իրականացնել հնարավոր չէ: Քովիդի որոշակի ժամանակահատվածներում պարը, պարային խմբակները, պարուսույցները, սպորտը շատ տուժեցին: ...Աշխատողների մի մասը հաստիքային էին, մի մասը՝ ոչ, չնայած բոլորն ունեին նորմալ աշխատանքային պայմաններ: Հաստիքայիններին ուղարկել էին տուն, հեռավար աշխատանք չկար, [քանի որ] սպորտային, երաժշտական խմբակներ էին: Մոտավորապես այսպիսին էր պատկերը. 22 աշխատողից 7-ը հաստիքային էին, որոնց քաղաքապետարանը ֆինանսավորում էր, և իրենք աշխատավարձ էին ստանում, մյուսները՝ ոչ: Ի՞նչ փողով պիտի մարդիկ ապրեին: Ինչքան էլ էդ հարցը բարձրացրինք, լուծել չստացվեց, որովհետև ասում էին, որ այդ մարդիկ աշխատանքային պայմանագրով չէին:

Արիմիության ներկայացուցիչ

Մշակույթի, զվարճությունների և հանգստի ոլորտում տուժել են նաև զբոսաշրջության և հյուրընկալության ենթաոլորտները, որովհետև տնտեսական սահմանափակումներն անմիջականորեն առնչվում էին դրանց:

...Հյուրանոցային բիզնեսը սկսեց քիչ-քիչ փակվել, տուրիզմի և հյուրընկալության ոլորտի աշխատակիցները սկսեցին աշխատանքը կորցնել՝ լբոսավարներ, տուրիստական ընկերությունների, ավիաընկերությունների, տեղափոխող և փոխադրող ընկերությունների, հյուրանոցների աշխատակիցները և սպասարկող անձնակազմը կորցրեց աշխատանքը:

Հասարակական կազմակերպության ներկայացուցիչ

Որոշ փորձագետների գնահատմամբ, սակայն, հյուրանոցային ոլորտն այդքան չի տուժել, որովհետև Հայաստանում համավարակի բռնկման սկզբում պետությունը կոնտակտավոր և հնարավոր կոնտակտավոր անձանց մեկուսացրել է հենց հյուրանոցներում և հյուրատներում, վճարել է դրանց դիմաց: Թեև պետության այս մոտեցումը հետահայաց մեկնաբանելով փորձագետները կարևորում են դրա ազդեցությունը զբոսաշրջության ոլորտի պահպանության վրա, սակայն հանրային առողջության, համավարակի շղթան կոտրելու տեսանկյունից այն համարում են ոչ արդյունավետ, ինչպես նաև պետության կողմից իր վրա վերցված և չարդարացված ֆինանսական մեծ բեռ:

Իշխանությունը շատ գոհ էր իր պահվածքից, որ մարդկանց մեկուսացնում էր հյուրանոցներում: Իմ կարծիքով դա այդքան ուղղված չէր մարդկանց պաշտպանելուն, որքան մտածված էր բիզնեսին պաշտպանելու համար, որովհետև հյուրանոցներին գումարներ վճարվեցին: Եթե դրա համար է արվել, ու պարզ ասվեր, որ տուրիզմն են պահել, որ չքանդվի, նորմալ է: Եթե դա մարդկանց համար է արվել, ինչո՞ւ մի շրջան արվեց, հետո չարվեց: Ստացվում է՝ մեծ գումարներ ծախսեցին այն ժամանակ, երբ դեռ վիրուսը շատ տարածված չէր, իսկ հետո հիվանդները ապատ ման էին գալիս:

Արհմիության ներկայացուցիչ

Գրեթե բոլոր փորձագետների գնահատականներով, անկախ ոլորտային ներգրավվածությունից, կորոնավիրուսի համավարակից ամենաշատը տուժել են հենց աշխատող մարդիկ և հատկապես նրանք, որոնց աշխատանքը ամրագրված չի եղել իրավական համապատասխան փաստաթղթերով՝ աշխատանքային, ծառայությունների մատուցման պայմանագրերով և այլն: Սակայն ըստ փորձագետների մի մասի՝ կորոնավիրուսի համավարակից էապես տուժել են նաև մասնավոր ոլորտի այն բիզնես կազմակերպությունները, որոնք տարբեր սխեմաներով և անօրինականություններով թաքցրել էին իրենց իրական եկամուտները, շահույթը, ինչպես նաև իրական աշխատակիցների թիվը: Նման եզրակացության փորձագետները հանգել էին բիզնես կազմակերպությունների բարձրաձայնած բողոքներից հետո, երբ վերջիններս պարզել էին, որ իրենց

կազմակերպությունները կամ իրենց կազմակերպություններում ներգրավված աշխատակիցները համավարակի տնտեսական հետևանքների հաղթահարման Կառավարության այս կամ այն ծրագրի շահառուներ չեն:

> *Կորոնավիրուսը մեծապես ազդեց բիզնեսի վրա: Երբ փորձեցինք աջակցություն տրամադրել բիզնեսներին, քանի որ տուժել էին, պարզվեց, որ իրենք էլ իրենց շրջանառությունն են թաքցրել, իսկ մենք գումարը տալիս էինք ըստ տարեկան շրջանառության տոկոսի, այսինքն՝ եթե տոկոսը շատ է, գումարը շատ է, կամ ըստ գրանցված աշխատողների թվի. գրանցված աշխատողները քիչ էին, սկսում էր դժգոհել, բայց պատճառն այն էր, որ ինքը չէր գրանցել իրական աշխատողներին, այլ թաքցրել էր նրանց թիվը:*
>
> ***ԱԺ պատգամավոր***

> *Ես բացահայտեցի, որ մեկ մոտ շատ էին կահույքի արտադրամասերում թաքնված աշխատողները, որովհետև հիմնական դիմումները գալիս էին նաև կահույքագործներից: Նրանք երևի աշխատում էին գործավարձով, օրավարձով ու չէին գրանցվում:*
>
> ***ԱԺ պատգամավոր***

Հետազոտությանը մասնակցած փորձագետները առանձնացնում են նաև այն խմբերին, որոնք, անկախ տուժած ոլորտներում ներգրավվածությունից, ևս բախվել են խնդիրների համավարակի ընթացքում:

Համավարակից տուժած սոցիալական խմբերը

Կանայք

Փորձագետների գնահատմամբ համավարակի հետևանքով ամենաշատը տուժել են կանայք, ընդ որում՝ նրանց մեջ դժվարությունների են հանդիպել հատկապես միայնակ մայրերը, խնամքի տակ երեխա ունեցող աշխատող կանայք, խնամքի տակ հաշմանդամություն ունեցող կանայք, ցածր վարձատրվող աշխատանք կատարող կանայք, այն կանայք, որոնք ենթարկվում են ընտանեկան բռնության և այլն:

> *Միայնակ մայրերը ընտանիքում միակ կերակրողն էին, և [այդ կանայք] չափազանց շատ էին: Նրանք լոքդաունի ժամանակ կորցրել էին աշխատանքը, չէին կարողանում նոր աշխատանք գտնել: Կանայք նաև չունեին խնայողություններ, որպեսզի կարողային երկարատև հոգ տանել երեխաների համար:*
>
> ***Հասարակական կազմակերպության ներկայացուցիչ***

Կարծում եմ՝ ամենաշատը կանայք տուժեցին՝ երեխաներ, աշխատանք, տնային գործեր: Եվ հատկապես ցածր վարձատրվողները՝ մաքրուհիները, աղբահանությամբ զբաղվողները, որովհետև առանց իրենց աշխատանքը հնարավոր չէր կազմակերպել: Երևի թե ցածր վարձատրվողներն ավելի շատ տուժեցին. տանն ես, հոսանք, ջուր, գազ ավելի շատ ես ծախսում, բայց դրա համար ոչ ոքի փոխհատուցում չի տրվում: Երբ գնում ես աշխատանքի, թեկուզ սուրճը էնտեղ խմում ես, տանը հոսանք չես ծախսում, չէ՞:

Արիմիության ներկայացուցիչ

Կանանց՝ իբրև համավարակի տեսանկյունից առավել խոցելի խմբի մասին փորձագետների գնահատականները, սակայն, միանշանակ չեն: Այսպես՝ որոշ փորձագետներ կարծում են, որ համավարակից ամենաշատը տուժել են կանայք, սակայն փորձագետների մեկ այլ խմբի կարծիքով էլ տնտեսության տուժած ոլորտներում ներգրավված քաղաքացիները համավարակից տուժել են ըստ այդ տուժած տնտեսության ճյուղին բնորոշ խնդիրների, ոչ թե ըստ սոցիալական խմբի կամ սեռային պատկանելության:

Ես կարծում եմ, որ կանանց նույնքան վնասեց, որքան տղամարդկանց: Հանդիսավարները չեն աշխատել, լողավազանները չեն աշխատել, հիմնականում փակ էին, և նույն ձևով տղամարդ ու կին մարզիչներն էին տուժում:

ԱԺ պատգամավոր

Տարեց մարդիկ

Որոշ փորձագետների գնահատմամբ համավարակից առավել տուժել են տարեց և կենսաթոշակային տարիքի մարդիկ: Տարիքով պայմանավորված՝ տարեց անձինք առհասարակ վարակի տեսանկյունից բարձր ռիսկային գոտում են, միաժամանակ նրանք չունեին համապատասխան կարողություններ և հմտություններ՝ օգտվելու համավարակի ազդեցության չեզոքացմանն ուղղված պետական ծրագրերից:

Տարեցները, բնականաբար, շատ տուժեցին: Նրանք նշում էին, որ սոցիալական ծրագրերը իրենց հասանելի չեն, և իրենք չէին կարող օգտվել:

Հասարակական կազմակերպության ներկայացուցիչ

Տեսակետների բախում կա նաև տարիքային խմբով պայմանավորված

խոցելիությունների հետ: Այսպես՝ փորձագետներից ոմանք համարում են, որ կենսաթոշակային տարիքի տարեց անձինք են առավելապես տուժել կորոնավիրուսային համավարակից: Սակայն փորձագետների մեկ այլ խմբի գնահատմամբ էլ տարեց անձինք էականորեն չեն տուժել և չեն տուժել այնպես, ինչպես, օրինակ, տնտեսության տուժած ճյուղի աշխատակիցները: Ըստ այս փորձագետների՝ տարեց անձանց խոցելիությունները կապված են եղել միայն առողջության տեսանկյունից առկա խոցելիությունների հետ:

Երբ ասում են, որ թոշակառուն տուժեց, ես ասում եմ՝ ոչ, թոշակառուն չտուժեց: Ինքը ինչպես տանը նստած ստանում էր իր թոշակը, այնպես էլ շարունակեց կորոնավիրուսի ժամանակ ստանալ այն: Իրենք ուրիշ կերպ տուժեցին, որ ելումուտը սահմանափակվեց, ռիսկային խմբում էին, ու չէր թույլատրվում տնից դուրս գալ:

ԱԺ պատգամավոր

Չգրանցված աշխատողներ

Բոլոր փորձագետներն առանձնացրել են չգրանցված կամ ծառայությունների մատուցման պայմանագրով աշխատող անձանց՝ որպես համավարակից առավել տուժած և խոցելի խմբի: Այս խմբից փորձագետներն առանձնացրել են հատկապես հետևյալ ոլորտներում ներգրավված անձանց.

Տաքսու վարորդներ

Տաքսիստները, օրինակ, գրանցված չեն, և սա անկառավարելի մի հատված է. 50-100 հազար մարդ տաքսի է քշում: Կարծում եմ՝ համակարգային լուծումներ էլի չեն տրվել:

Արհմիության ներկայացուցիչ

Անապահով, պետական նպաստ համակարգում ընդգրկված անձինք և ընտանիքներ

Տուժեցին առավել խոցելի խավերը, հատկապես նպաստառու ընտանիքները, իրենք էլ ավելի շատ են տուժել, քանի որ մեծ մասամբ իրենք էին ստվերում աշխատում:

Միջազգային կազմակերպության ներկայացուցիչ

Քրոնիկ հիվանդություններ ունեցող անձինք

Քրոնիկ հիվանդություն ունեցող անձինք հարկադրված են եղել գնալ աշխատանքի, սակայն շատերը հրաժարվում էին գնալուց [աշխատանքի], ինչի արդյունքում այլ խնդիրներ են ունեցել:

Հասարակական կազմակերպության ներկայացուցիչ

Տուժեցին քովիդով հիվանդ մարդիկ կամ ընտանիքները, որտեղ քովիդի դեպք կար, ովքեր չէին կարողանում տնից դուրս գալ և պարտադիր մեկուսացման մեջ էին:

Հասարակական կազմակերպության ներկայացուցիչ

Վարձակալությամբ բնակվողներ

Մարդիկ բնակարանի վարձակալության խնդիր ունեին: Երևանում շատերը, որ սոցիալական աջակցության ծրագրերի թիրախում էին, հիմնականում ապրում էին վարձակալությամբ և ինչ-որ պահից չկարողացան [տան] վարձը վճարել ու կանգնեցին [ֆինանսական] խնդրի առաջ:

ԱԺ նախկին պատգամավոր

Որոշ փորձագետներ հետազոտության ընթացքում մատնանշում էին նաև այնպիսի ոլորտներում ընդգրկված աշխատակիցների խոցելիությունը, որոնք, ըստ էության, համավարակից չէին տուժել, սակայն աշխատանքային պայմանների էական փոփոխություններն այդ ոլորտներում ներգրավված անձանց համավարակի տեսանկյունից դարձրին անպաշտպան, օրինակ՝ փակ և կիսափակ հաստատություններում աշխատող անձանց: Փորձագետների գնահատմամբ փակ կամ կիսափակ հաստատություններում աշխատող անձինք հատկապես խոցելի էին այն ժամանակ, երբ նրանց աշխատանքը դարձավ հերթափոխային այն պարագայում, երբ համաձայն աշխատանքային պայմանագրի՝ նրանք հերթափոխային աշխատողներ չէին: Ճիշտ է, ըստ փորձագետների գնահատականի, այս մարդիկ իրենց աշխատանքի համար հավելյալ վճարվել են օրենքով սահմանված կարգով, և հերթափոխն անհրաժեշտ միջոցառում էր առավել խոցելի խմբերի շրջանում վարակի շղթան կոտրելու համար, սակայն այս որոշումը աշխատողներին սոցիալական առումով խոցելի է դարձրել:

Հասկանալի է, որ փակ հաստատություններում ապրող տարեցները խոցելի խումբ են, բայց այնտեղի հերթափոխային աշխատողներն ուղղակի մնացել են ինտերնատներում՝ իրենց ընտանիքներից կտրված:

ՄԻՊ գրասենյակի ներկայացուցիչ

Փորձագիտական կարծիքները տարբերվում են նաև հասարակական կազմակերպությունների և արհմիությունների՝ համավարակից տուժելու հարցի շուրջ: Ինչպես իրենք՝ արհմիությունների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներն են կարծում, այս ոլորտները համավարակից տուժել են:

Թեթև արդյունաբերության արհմիությունը շատ տուժեց, որովհետև աշխատողները չէին աշխատում, անդամավճար չէին կարողանում տալ, ու իրենք ընդհանրապես չէին կարողանում գործել:

Արհմիության ներկայացուցիչ

Հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները տուժեցին, որովհետև դոնոր կազմակերպությունները կամ սառեցրին իրենց ծրագրերը, կամ էլ փոխեցին առաջնահերթությունները:

Հասարակական կազմակերպության ներկայացուցիչ

Սակայն ըստ պետական ոլորտի փորձագետների գնահատականների՝ արհմիությունների և հասարակական կազմակերպությունների գործունեությունը շատ քիչ է տուժել կամ գրեթե չի տուժել:

Մի քիչ ավելի քիչ խոցելի էր գրասենյակային աշխատանքի ոլորտը՝ think tank-ները, ՀԿ-ները, որոնք կարող էին տնից աշխատել օնլայն գրաֆիկով:

ԱԺ պատգամավոր

Բժիշկներ, առողջապահության ոլորտում աշխատող այլ մասնագետներ

Թեև առողջապահության ոլորտի աշխատակիցները որոշակի առումով խոցելի էին աշխատանքային իրավունքների տեսանկյունից, սակայն առավել անպաշտպան էին հենց առողջապահական տեսանկյունից, քանի որ համավարակի բռնկումից ի վեր կորոնավիրուսի տարածվածությունը առողջապահության ոլորտի աշխատակիցների շրջանում հատկապես բարձր էր:

Համավարակից տուժեցին նախևառաջ բժիշկները, ինչպես նաև բժշկական հաստատություններում աշխատող այլ մարդիկ, մասնավորապես ադմինիստրատիվ աշխատակիցները, վարորդները:

Միջազգային կազմակերպության ներկայացուցիչ

Համաձայն Մարդու իրավունքների պաշտպանի մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդման՝ 2020 թ. ընթացքում աշխատանքային իրավունքներին առնչվող հարցերով Պաշտպանի գրասենյակին դիմած քաղաքացիների խնդիրների շրջանակը վերաբերել է համավարակով

պայմանավորված հայտարարված արտակարգ դրության ժամանակահատվածին:

«Արտակարգ դրության սահմանափակումների պատճառով առաջացած աշխատանքային խնդիրների վերաբերյալ դիմում-բողոքները հիմնականում ուղղված են եղել մասնավոր ոլորտի գործատուների դեմ: Ստեղծված իրավիճակում Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրել է այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են աշխատողների համար անվտանգ և նրանց առողջության համար անվնաս աշխատանքային պայմաններ չապահովելու դեպքում գործատուի կողմից աշխատողներին աշխատանքի ներկայանալուն պարտավորեցնելը, ոչ աշխատողի մեղքով պարապուրդում գտնվող աշխատողներին պարապուրդի յուրաքանչյուր ժամվա համար ՀՀ աշխատանքային օրենսգրքի 186-րդ հոդվածով սահմանված կարգով չվճարելը, ոչ աշխատողի մեղքով պարապուրդում գտնվող աշխատողներին վճարվող կամ չվճարվող արձակուրդ տրամադրելու դիմում ներկայացնելուն հարկադրելը և հակառակը՝ ամենամյա արձակուրդ չտրամադրելը» (ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան, 2020): Այս և նման այլ խնդիրների ի հայտ գալը հայտարարված արտակարգ դրության ժամանակահատվածում պայմանավորված էր նրանով, որ աշխատողներն այս մասին իմացան միայն այն ժամանակ, երբ մերժում ստացան Կառավարության կողմից տրվող հակաճգնաժամային սոցիալ-տնտեսական աջակցության ծրագրերին դիմելիս, քանի որ գործատու-աշխատող հարաբերություններում առկա էին իրավական ձևակերպումների խնդիրներ: Ինչպես պարզ էր դառնում աջակցության ծրագրերին դիմելուց հետո, աշխատողները, մասնավորապես, կամ գրանցված չէին և դրա մասին տեղյակ չէին, կամ աշխատանքային պայմանագրի փոխարեն կնքել էին ծառայությունների մատուցման պայմանագիր, ինչպես նաև աշխատանքային պայմանագրում ամրագրված աշխատավարձի գումարը չէր համապատասխանում իրական աշխատավարձի թվին և այլն:

Այսպիսով՝ համավարակը էապես ազդել է և շարունակում է ազդել թե՛ հանրային առողջության, թե՛ տնտեսության և հանրային կյանքի այլ ոլորտների վրա: Նոր տեսակի կորոնավիրուսի բռնկմամբ փոխվել են տնտեսության կառուցվածքի մասին կանխատեսումները, տնտեսական ճգնաժամը շարունակում է ՀՆԱ-ի աճի նվազման, գնաճի և այլ տնտեսական ցուցանիշների վրա բացասաբար ազդել: Սրան նպաստել են նաև Ղարաբաղյան երկրորդ պատերազմը, ինչպես նաև ռուս-ուկրաինական պատերազմը, տարածաշրջանում տեղի ունեցող տարբեր գործընթացները: Կորոնավիրուսային համավարակը էապես ազդել է աշխատանքի և աշխատանքային իրավունքների վրա՝ առաջին հերթին հարվածելով չգրանցված՝ հատկապես օրավարձով աշխատողներին, տնտեսության տուժած ճանաչված ոլորտներում ներգրավված անձանց՝ սպասարկման ոլորտից մինչև շինարարության և արտադրության ոլորտ, ինչպես նաև հասարակության առավել խոցելի խմբերին և հատկապես կանանց:

1.2. ԿԱՆԱՅՔ ԵՎ ՆՐԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

ՄԱԿ-ի մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակը 2020թ. մայիսին հրապարակեց կանանց իրավունքների վրա կորոնավիրուսի համավարակի ազդեցության վերաբերյալ զեկույց, համաձայն որի՝ կանայք հատկապես խոցելի են անկայունության վիճակում, և այդ խոցելիությունները հստակ երևան են եկել և սրվել են հենց համավարակի շրջանակում: Բազմաթիվ պետություններում կանայք ավելի շատ ներգրավված են ցածր աշխատավարձով և ոչ ֆորմալ աշխատանքի հատվածներում, ինչը նշանակում է, որ կանանց պարագայում ավելի բարձր են չգրանցված աշխատելու, արձակուրդ չստանալու, հիվանդության դեպքում վճարվող արձակուրդ չստանալու, առողջության ապահովագրություն չունենալու հավանականությունը և առհասարակ՝ սոցիալական երաշխիքների բացակայությունը: Ուստի կանանց պարագայում վտանգված է կենսապահովման բավարար միջոցներ ունենալը, իսկ եկամուտների կորուստն ազդում է նրանց ընտանիքների բարօրության վրա, հատկապես, երբ ընտանիքում միայն նրանք են ապրուստի միջոց վաստակողները (ՀՔԱՎ, 2020):

Համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի 2020 թ. տվյալների՝ աշխատանքային շուկայում զբաղված է կանանց 41%-ը, իսկ տղամարդկանց՝ 56%-ը: Աշխատանքային տարիքի 10 կանանցից 4-ը ունեցել է աշխատանք, իսկ տղամարդկանց դեպքում՝ 10-ից 6-ը (ՀՀ վիճակագրական կոմիտե, 2021): 2020 թվականին 15-74 տարեկան կանանց 51%-ը չի ունեցել աշխատանք և չի փնտրել՝ հիմնականում զբաղված լինելով տնային տնտեսությամբ: 2020 թ. աշխատուժից դուրս կանանց և տղամարդկանց միջև առկա սեռային խզվածքը 39,3% է, և այն հատկապես բարձր է 25-49 տարիքային խմբում՝ հասնելով 67,3%-ի:

Թե՛ կանայք, թե՛ տղամարդիկ հիմնականում վարձու աշխատողներ են: Գործատուների և ինքնազբաղվածների մեջ տղամարդկանց մասնաբաժինը գերակայում է, մինչդեռ առանց վարձատրության աշխատողների մեջ կանայք կրկնակի գերազանցում են տղամարդկանց (ՀՀ վիճակագրական կոմիտե, 2021):

Համաձայն «Հայաստանում Covid 19-ի ազդեցության գնահատման» զեկույցի (World Bank, 2021)՝ աշխատանք ամենաշատը կորցրել են չգրանցված աշխատողները, և աշխատանք կորցնողների մեջ կանանց մասնաբաժինը վիճակագրորեն առավել մեծ է եղել: Համաձայն սույն հետազոտության տվյալների՝ մինչև կորոնավիրուսի համավարակի բռնկումը հարցվածների 13,3%-ն է ունեցել գրանցված աշխատանք, սակայն 25,6%-ը եղել է զբաղված՝ առանց ֆորմալ գրանցման՝ առանց աշխատանքային պայմանագրի: Ընդ որում՝ զբաղված

տղամարդկանց շրջանում չգրանցված աշխատողների մասնաբաժինը եղել է 56,3%, իսկ կանանց շրջանում՝ 69,06%: Համավարակով պայմանավորված՝ աշխատանքը կորցրել են տղամարդկանց 17,3%-ը և կանանց 19,1%-ը (World Bank, 2021): Այսինքն, եթե կանանց ներգրավվածությունը աշխատանքային ոլորտում արդեն իսկ քիչ էր, ապա համավարակի հետևանքով կանանց աշխատատեղերի կորուստը էականորեն ազդել է կանանց զբաղվածության, աշխատանքային իրավունքների վրա:

Միջազգային արհմիությունների կոնֆեդերացիան Արժանապատիվ աշխատանքի օրվա կապակցությամբ «Արդար աշխատատեղեր» թեմայով հայտարարություն էր տարածել, համաձայն որի. *«...200 միլիոնից ավելի աշխատատեղեր կրճատվել են համավարակի պատճառով, ևս 100 միլիոնը գտնվում են ռիսկային իրավիճակում, հիմնականում կանայք դուրս են մղվում աշխատաշուկայից, և հոկտեմբերի 7-ին՝ Արժանապատիվ աշխատանքի օրը, մենք կոչ ենք անում բոլոր կառավարություններին մշակել աշխատանքային ակտիվ ծրագրեր»*[10]: Մեկ այլ՝ հանրային ծառայությունների միջազգային արհմիության հոկտեմբերի 7-ի՝ Արժանապատիվ աշխատանքի օրվա առնչությամբ հայտարարության մեջ ասվում է, որ համավարակի պատճառով իրենց աշխատանքը կորցրել են 225 միլիոն աշխատողներ, որոնց մեծամասնությունը կանայք են[11]:

Սույն ուսումնասիրության շրջանակում հարցված փորձագետների մեծ մասի գնահատմամբ ևս կորոնավիրուսի համավարակից ամենաշատը տուժել են կանայք՝ հատկապես աշխատանքային իրավունքների առումով: Այս ենթագլխում մենք կամփոփենք, թե Հայաստանում կորոնավիրուսի համավարակի բռնկումից ի վեր և հայտարարված արտակարգ դրության պայմաններում աշխատանքային իրավունքների ինչ խնդիրների են բախվել տարբեր՝ հատկապես տնտեսության տուժած ճյուղեր գնահատված ոլորտներում զբաղված կանայք: Աշխատանքային իրավունքները համարվում են մարդու իրավունքների ամենաչպաշտպանված ոլորտը, և սոցիալական ծանր դրությամբ պայմանավորված, մարդիկ ստիպված են հաշտվել աշխատանքային իրավունքների խախտումների, աշխատանքային ծանր և անարդար պայմանների հետ: Ավելին՝ Հայաստանում մարդու բնական իրավունքների խախտումների մեջ աշխատանքային իրավունքների ոտնահարումների պայմանն ունի տեսակարար մեծ կշիռ: Ինչպես այլ իրավունքների

10 Հայաստանի պետական հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների և հանրային ծառայությունների աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միություն (2021, հոկտեմբերի 7), [Միջազգային արհմիությունների կոնֆեդերացիայի (ITUC) հայտարարությունը Արժանապատիվ աշխատանքի օրվա կապակցությամբ, Just Jobs - Արդար աշխատատեղեր]

11 Հայաստանի պետական հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների և հանրային ծառայությունների աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միություն (2021, հոկտեմբերի 7), [Հանրային ծառայությունների միջազգային արհմիության (PSI) հայտարարությունը հոկտեմբերի 7-ի կապակցությամբ]

պարագայում է, աշխատանքային իրավունքների մասին ևս իրազեկվածության մակարդակը մնում է ցածր և մտահոգիչ: Աշխատանքային իրավունքի կարևորության գիտակցումը, մշակութային առանձնահատկությունները, այս ամենի շուրջ աշխատանքները և այս բոլոր խնդիրները կորոնավիրուսի համավարակով պայմանավորված ավելի խորացել են:

Կանանց փորձառությունը

Կանանց հետ մեր հարցազրույցները թույլ են տալիս եզրահանգել, որ հաճախ կանայք դժվարանում են սահմանել ու իրենց օրինակով մեկնաբանել աշխատանքային իրավունքները, իսկ աշխատանքային իրավունքների խախտումների մասին առավել ևս բարձրաձայն չեն խոսում կամ չեն էլ մեկնաբանում իրենց հետ տեղի ունեցածը որպես իրավունքի ոտնահարում: Կանայք հիմնականում առանձնացնում են կորոնավիրուսի համավարակով պայմանավորված աշխատանքային իրավունքներին առնչվող հետևյալ խնդիրները՝

- աշխատանքային պայմանների էական փոփոխություններ,
- գործատուի կողմից աշխատավարձի չվճարում կամ մասնակի վճարում,
- աշխատողների առողջության համար անվտանգ աշխատանքային պայմանների չապահովում կամ թերի ապահովում,
- աշխատանքի փոփոխություն, աշխատանքային ոլորտի փոփոխություն, թերի վճարված արձակուրդայիններ:

Կորոնավիրուսի համավարակով պայմանավորված՝ տնտեսության տարբեր ոլորտներում խիստ սահմանափակումների նախնական փուլում գործադրվեց աշխատանքի հեռավար կազմակերպման եղանակը, որն ունեցավ իր խնդիրները: Դրանց շարքում կանայք առանձնացնում են աշխատանքի լրացուցիչ ծանրաբեռնվածությունը, աշխատանքային գրաֆիկի փոփոխությունները: Համավարակի պատճառով տարբեր ոլորտներում կանանց աշխատանքը շատացել էր՝ չուղեկցվելով վարձատրման լրացուցիչ հնարավորություններով, իսկ որոշ դեպքերում վարձատրումն ընդհանրապես կրճատվել է:

Սկզբի 3-4 ամիսը ծանրաբեռնվածությամբ ու բարդությամբ չէր տարբերվում սովորական շրջանից, բայց առաջին ամսվանից հետո մեր աշխատավարձերը 50%-ով կրճատվեցին: Ապրիլից մինչև հունիսի կեսերը 10:00-18:00 գրաֆիկը պահպանվում էր: Որոշ աշխատանքներ՝ էլ. մարքեթինգ, SMM, որոնց ծավալը նույնիսկ կրկնապատկվում էր այս դեպքում... Չէր դիտարկվում, որ դու քո գործը նույն կերպ անում ես: Այդ

կիսված աշխատավարձը պահպանվել է մինչև 2021 թ. սեպտեմբեր:

Մշակույթի ոլորտում աշխատող կին

Սպասարկման ոլորտում աշխատանքի ծանրաբեռնվածությունը կորոնավիրուսի համավարակի ընթացքում պայմանավորված է եղել գործընկերների հիվանդանալով և միմյանց փոխարինելով՝ ընդհանուր առմամբ մարդկային ռեսուրսի սղությամբ: Սրա հետևանքով սպասարկման ոլորտի աշխատողները զրկվել են կորոնավիրուսի համավարակի ընթացքում իրենց համար նախկինում սահմանված ազատ ոչ աշխատանքային օրերից և արձակուրդից:

Ո՛չ հանգստյան օր ենք ունեցել, ո՛չ էլ արձակուրդ վերցնելու հնարավորություն էդ օրերին. փետրվարի վերջից մինչև սեպտեմբերի սկիզբը: Անգամ տանը չենք մնացել: Իսկ սովորական պայմաններում շաբաթը մեկ օր տանն ենք եղել ու երբ ցանկություն ենք ունեցել, արձակուրդ ենք գնացել: Գործատուն ասում էր, որ իրավունք չունի նոր աշխատակից ընդունելու, մենք էլ շատ ենք իրենց անհրաժեշտ, ու իրենք չեն կարող մեկ տրամադրել մեր հանգստյան գոնե մեկ օրը:

Մննդի առևտրի ոլորտում աշխատող կին

Քովիդի շրջանում էլ ենք աշխատել, բայց ոչ նույն կազմով: Ովքեր հիվանդանում էին, աշխատանքի չէին գալիս, իրենց գործն էլ էր մնում մեկ վրա: Հիմնականում օնլայն բաժնում էինք աշխատում, խանութ մարդ չէր գալիս: Էդպես ավելի ծանրաբեռնված էր, քան եթե մարդիկ հաճախեին, ու ես գանձապահ աշխատեի: Մարդիկ ապրանքներ էին պատվիրում, դու ընտրում էիր, չգիտեիր՝ կհավանեն, թե ոչ, ու դրա պատճառով լրացուցիչ խնդիրներ էին առաջանում:

Մննդի առևտրի ոլորտում աշխատող կին

Լրացուցիչ ծանրաբեռնվածության հետևանքով ազատ օրերից և արձակուրդից զրկված սպասարկման ոլորտի աշխատակիցները հաճախ անգամ օրվա ընթացքում իրենց հասանելիք ընդմիջման ժամերից օգտվելու հնարավորություն չեն ունեցել: Թեև այս խնդիրները անհանգստացրել են կանանց, միաժամանակ հիմք չեն դարձել սեփական իրավունքները պաշտպանելուն ուղղված քայլեր ձեռնարկելու համար, քանի որ մեծ մասամբ կանայք չեն տիրապետել իրենց աշխատանքային իրավունքներին, իսկ գործատուների կողմից կիրառվող այդ չարաշահումներին ենթարկվելը հաճախ արդարացրել են սեփական աշխատանքը սիրելու հանգամանքով: Մեր հետազոտությունը ցույց է տալիս, որ երբեմն կանայք գիտակցել են իրենց աշխատանքային իրավունքների խախտումները՝ ձևակերպելով դրանք իբրև աշխատանքային իրավունքների ոտնահարում,

սակայն այդ գիտակցումը դրանց մասին բարձրաձայնելու կամ այլ ատյաններում պաշտպանություն փնտրելու գործողության չի վերածել: Հեռավար աշխատանքից զատ, հանրակրթության հեռավար կազմակերպումը կանանց, մայրերի և հատկապես միայնակ մայրերի համար լրացուցիչ խոչընդոտներ է առաջացրել, որոնց մի մասը կապված է եղել ֆինանսական խնդիրների հետ: Համացանցի անխափան առկայության անհրաժեշտությունն աշխատանքի և երեխաների դասապրոցեսի կազմակերպման համար և դրա համար վճարը սոցիալական սուղ պայմաններում ապրող կանանց էլ ավելի վատթար դրության մեջ են դրել:

> *Մենակ ինտերնետի մուծումը, որ կոպիտ ասած՝ քեզանից էլ կտրում էիր, մի բան չէիր առնում կամ չէիր տալիս երեխային, որ դա կապմակերպես, մուծես ժամանակին, որ երեխան դասերից հետ չընկնի: Տեղից դժվար ա. իրանք Zoom-ով են անում, մեկը լսվում ա, մեկը չի լսվում, մեկը ունի ինտերնետ, մեկը՝ չունի, չգիտեմ, էս կողմով մի քիչ թույլ ենք, էլի:*
>
> ***Մննդի առևտրի ոլորտում աշխատող կին***

Կորոնավիրուսի համավարակի պայմաններում և հատկապես հայտարարված արտակարգ դրության ժամանակ աշխատանքային պայմանները էական փոփոխությունների ենթարկվեցին: Այդ փոփոխված պայմաններում կանայք բարձրաձայնում են աշխատավայր հասնելու խնդրի մասին, քանի որ սահմանափակումների սկզբնական փուլում հասարակական տրանսպորտի աշխատանքը ևս դադարեցված էր, ինչը կանանց էական անհարմարությունների և ֆինանսական խնդիրների առաջ է կանգնեցրել:

> *Քովիդի ժամանակ աշխատել ենք, բայց որ տրանսպորտ չկար, այդ ժամանակ ոտքով ենք գնացել տուն կամ տաքսիներով ենք երթևեկել: Չնայած գործատուները պարտավոր էին տաքսիի գումար վճարել, բայց մեկումեջ են վճարել: Ամեն դեպքում, դե չես կարող չաշխատել. ընտանիք ես պահում, երեխա ես պահում... Էն, որ աշխատածիդ կեսն էլ ճանապարհներին ես ծախսել, բայց մի կերպ գնացել ես աշխատանքի:*
>
> ***Մննդի առևտրի ոլորտում աշխատող կին***

Հետազոտությանը մասնակցած կանայք նաև աշխատանքային փորձառություն ունեն այն ոլորտներում, որոնց գործունեությունը համավարակի սկզբնական փուլում ժամանակավորապես դադարեցվել է: Համավարակը առևտրի ոլորտում փոխեց վաճառքի ընթացքը, և որոշ գործատուներ ուշացնում էին աշխատավարձը կամ խնդիրներ առաջացնում այն վճարելիս, ինչն էլ կանանց համար աշխատանքը թողնելու պատճառ էր դառնում: Անգամ գրանցված և պայմանագրով աշխատող կանայք են բախվել նման մարտահրավերների՝ չստանալով

աշխատավարձ կամ որևէ փոխհատուցում գործատուի կողմից:

Մարտից մինչև մայիս չենք աշխատել, ու աշխատել եմ մինչև հուլիսի սկիզբը: Նույն աշխատավարձն էինք էլի ստանում, բայց շատ դժվարությամբ էին աշխատավարձը տալիս, քանի որ նաև վաճառքն էր նվազել, նախկին շրջանառությունը չէր, ու էդ պատճառով ես դուրս եկա:

Հագուստի խանութում աշխատող կին

Ես ամեն դեպքում գործս փոխել էի, բայց ոնց որ իրանք ինձ կես դրույքով պահել էին ու կես դրույքով ինձ ամեն ամիս 9000 դրամ փող էին փոխանցում, չգիտեմ՝ ինչի էր իմ կես դրույքի գումարը էդքան:

Զբոսաշրջության ոլորտում աշխատող կին

Այս դեպքերում կանանց համար ժամանակավոր լուծում են եղել պետության տրամադրած միանվագ աջակցության ծրագրերը: Կանանց փորձառություններն ու կենսապայմանները տարբեր են եղել, և նույնիսկ սահմանափակումների պարագայում ժամանակավոր չաշխատելու հետևանքով ֆինանսական խնդիրները խիստ ծայրահեղ չեն եղել, եթե կանանց ընտանիքներում եղել են այլ աշխատողներ: Սակայն որոշ դեպքերում կանայք միայնակ մայր կամ միակ աշխատող են եղել:

...Մենք մեկ հարմարվել ենք, դե երեխեքս աշխատում էին, ամուսինս աշխատում էր... Ամեն մեկիս տանը երևի մի աշխատող կար, էդ աշխատանքով յոլա էինք գնում, որովհետև էնպիսի հիմնարկներ կային, որ չկանչեցին գործի, բայց ասեցին՝ մնացեք տունը, երբ անհրաժեշտություն լինի, կկանչենք, բայց էդ մարդիկ աշխատավարձ ստացան:

Կարի արտադրությունում աշխատող կին

Կորանավիրուսի համավարակով պայմանավորված՝ գործատուները պարտավոր էին ապահովել աշխատողների առողջության և անվտանգության պայմանները: Համընդհանուր տագնապի և անորոշության, ինչպես նաև մարտի 16-ից հայտարարված արտակարգ դրության պայմաններում, որով սահմանափակվում էր տնտեսության տարբեր ճյուղերի աշխատանքը, արտադրամասերում աշխատող կանայք գործատուի դրդմամբ շարունակել են աշխատել և ավարտին հասցնել աշխատանքը:

Մեր անվտանգության համար կարող էր ինքը [գործատուն] ժամանակին էդ սահմանափակումները մտցնել, բայց քանի որ մենք պատվեր ունեինք, էդ պատվերը պետք էր անպայման հասցնել, մեկ չկարողացան

ժամանակին տուն ուղարկել, մի քանի օր մենք աշխատեցինք, որպեսզի կարողանանք էդ մեր պատվերը հասցնել, հետո նոր գնանք տուն:

Կարի արտադրամասում աշխատող կին

Սպասարկման ոլորտում աշխատող կանայք աշխատողների անվտանգության ապահովման պատրաստակամությունը մեկնաբանում են իբրև գործատուի շահերից բխող մի բան, ոչ թե աշխատակիցների մասին հոգատարության, նրանց իրավունքի և անվտանգության պաշտպանության հարց:

Անվտանգության համար հատուկ պատնեշներ էին դրել, որ մարդկանց հետ շփումը քիչ լիներ, ձեռնոցներ էին տրամադրում, դիմակներ, ալկոգել, որ հնարավորինս պաշտպաներ աշխատակիցներին, քանի որ իրենցից էլ բխում էր շահույթը:

Մննդի առևտրի ոլորտում աշխատող կին

Եթե ընդհանրացնենք, ապա կանայք հիմնականում դրական էին գնահատում համավարակի ընթացքում իրենց գործատուների իրականացրած անվտանգության միջոցառումները և փաստում, որ ամեն ինչ արվել է օրենքի և պարետատան պահանջներին համապատասխան:

Քովիդը որ սկսվեց, մեկ մոտ ալկոգելեր բերեցին, բայց մի երկու շաբաթ հետո փակվեց ընդհանրապես: Հետո, երբ նորից բացվեցինք, ձեռնոցներ, ալկոգել, 5 րոպեն մեկ՝ ախտահանում, 2 ժամը մեկ՝ դիմակ փոխել, օրվա վերջում էլ՝ ավելի մանրակրկիտ ախտահանում, քան նախկինում: Երբ վարակակիրների թիվը նվազեց, էլ ձեռնոցներ չէինք կրում: Հետո՝ պատերազմի ժամանակ, մարդիկ անտարբեր դարձան: Մենք դիմակներ կրում էինք, բայց հաճախորդները չէին կրում: Մենք շարժվում ենք իրենց օրենքներով. ինչ իրենք գործատուին են ասում, գործատուն էլ մեզ է ասում, պահանջում:

Սրճարանում աշխատող կին

Մեկ մոտ խիստ ուշադրություն է դարձնում մեր տնօրենը: Առանց դիմակի թույլ չի տալիս ոչ աշխատողին, ոչ հաճախորդին: Հիմնականում մաքրությանն է հետևում ու պահանջում բռնակների ախտահանում և այլն: Էդպիսի դեպք չի եղել, որ մեկը գա ու ասի, որ մեր մոտից վարակվել է:

Գեղեցկության սրահում աշխատող կին

Սակայն քիչ չեն դեպքերը, երբ կանայք ստիպված են եղել սեփական միջոցներով ապահովել կանխարգելիչ միջոցները իրենց անվտանգության համար:

Հիմնականում մենք մեր միջոցներով ենք մեկ ապահովել անվտանգության պարագաներով: Գործատուն միանգամյա օգտագործման երկու դիմակ էր տրամադրում՝ մի քանի օրը մեկ: Մենք էլ ստիպված բավմակի օգտագործման դիմակներ էինք կրում: Մյուս պարագաներով էլ մենք էինք մեկ ապահովում, որովհետև իրենց տրամադրածը շատ վատ որակի էր, չէինք էլ օգտագործում:

Հագուստի առևտրի ոլորտում աշխատող կին

Ինչպես պատմում են կանայք, անվտանգության միջոցառումներն ավելի խիստ են պահպանվել համավարակի սկզբնական փուլում: Հետազոտությանը մասնակից կանանց մի մասը հետազոտության իրականացման պահին արդեն փոխել էր աշխատավայրը և հետահայաց էր գնահատականներ տալիս, իսկ ներկա աշխատավայրում և համավարակի տվյալ փուլում հակահամաճարակային միջոցառումների պահպանումն արդեն անհետևողական և ոչ խիստ էին:

Սկզբից բոլորս պարտադրաբար ամեն օր ստանում էինք ձեռնոցներ, դիմակներ, հիմա մի քիչ ավելի ապատ է ժողովուրդը, կարծես էս պատերազմից հետո վախն էլ անցավ կովիդի, արդեն չենք կրում տենց բաներ:

Քաղաքապետարանի ենթակայության տակ գտնվող կառույցում աշխատող կին

Ընդհանրապես գործունեությունը դադարեցրած ոլորտներից սպասարկման ոլորտում, հատկապես գեղեցկության սրահներում, զբոսաշրջության և այլ տուժած ոլորտներում աշխատող կանայք համավարակի բերած անորոշության պայմաններում կորցրել են աշխատանքը կամ ստիպված են եղել փոխել աշխատանքի ոլորտը՝ սոցիալ-տնտեսական կայունության հասնելու համար: Սա բարդ փոփոխություն և որոշում է եղել կանանց համար, հատկապես այն պարագայում, երբ արդեն կորցրած աշխատանքն ունենալու համար կանայք իրենց կյանքի տարբեր փուլերում մտավոր, ֆինանսական, ժամանակային մեծ ներդրումներ էին արել և ջանք թափել:

Տենց գոհ չեմ [նոր աշխատանքից]: Ես կուզեի իմ գործը անեի սալոնում, բայց դե հիմա մարդիկ կան՝ վախենում են դուրս գան տանից, քանի որ դեպքերը էլի շատացել են: Հիմա էլի դժվար է շատ հավաքել [հաճախորդներ]: Նայեք՝ ճանապարհները փակ, տուրիստներ չեն գալիս, էդ ամեն ինչը կապ ունի էլի իրար հետ: ...հաճախորդներիս, որ արդեն կորցրեցի, գումար արդեն չաշխատեցի, ոնց որ ավելի դժվարացավ: Երկու ամիս տանն եմ մնացել, հետո գնացի աշխատանքի: Լինում էին գործեր էդ ընթացքում, մեկ, երկու հաճախորդ, հետո իրենք էլ ցրվեցին. մեկը հիվանդացավ, էն մեկը մի այլ պատճառով չեկավ: Ամեն

դեպքում անդրադարձել ա էլի [համավարակը] ու վատ:

Գեղեցկության սրահում աշխատող կին

Ինքը [տուրիզմը] շատ-շատ լավն ա, շատ կայֆն ա, ընտիր ոլորտ ա, էն որ դու ամեն ինչ տեսնում ես... Շատ լավ ա աշխատելը, ես սիրում եմ, բայց հիմա ես ռիսկ չեմ անում հետ դառնամ, որովհետև բացի նրանից, որ 24/7 ա, ու դու դրա դիմաց չես վարձատրվում, դու պիտի շատ սիրես էդ գործը ու վերջ: Հիմա ես ռիսկ չեմ անում...

Զբոսաշրջության ոլորտում աշխատող կին

Աշխատանքը փոխելու դեպքում կանայք գործատուների կողմից իրենց աշխատանքային փորձին ու պայմաններին համարժեք արձակուրդային վճարներ չեն ստացել, ինչի մասին որոշ դեպքերում բարձրաձայնել են, բայց բավարարող պատասխան չեն ստացել, որոշ դեպքերում էլ իրենց ենթադրությունն ու բացատրությունն են գտել:

Եթե դու չես օգտագործում քեզ հատկացվող արձակուրդը 20 օր տարվա մեջ, վերջնահաշվարկի տեսքով վերջում ստանում ես, որովհետև դու չես գնում կամ ինչ-որ գործ ունես, չես կարողանում գնաս: Մեր կազմակերպության դեպքում իրենք պարտադրում էին, որ մինչև տարվա վերջ պարտադիր քո արձակուրդը օգտագործես: Եթե չէիր օգտագործում արձակուրդդ, չէիր գնում, որը քո խնդիրն էր (կարաս գնաս, կարաս՝ չէ), տարվա վերջ ստանում էիր արձակուրդայինդ, որը չգիտեմ ոնց էր հաշվարկվում, իրոք չեմ հասկանում, որ արձակուրդայինը պետք ա լինի քո աշխատավարձի մոտավորապես 80 տոկոսի կարգի, հմ, 80-90 տոկոսին համապատասխան: Մենք 40-50 տոկոս արձակուրդային էինք ստանում: Երբ հարցնում էին՝ ինչի՞, ասում էր. «Դե կովիդի տարում դուք ամբողջ դրույքով չեք աշխատել, կես եք գրանցվել, դրա համար սկզբի 6 ամիսը չի հաշվվում...»: Սենց հեքիաթներ էր պատմում:

Զբոսաշրջության ոլորտում աշխատող կին

Ես կորոնավիրուսով վարակվելու ընթացքում վճարվել եմ իմ կես դրույքի չափ, չեմ ծանուցվել, որ արձակուրդ է ձևակերպվում, բայց վերջնահաշվարկս շատ փոքր գումար է կազմել, այն դեպքում, որ ես ամեն տարի մեկ շաբաթ չօգտագործած արձակուրդ եմ ունեցել: Դրա համար ես ենթադրում եմ, որ էդ ընթացքում արձակուրդ է ձևակերպվել: Ես կզված էի էդ ամեն ինչից ու չեմ պահանջել ոչ մի թուղթ, որ իմանայի՝ ինչ է եղել:

Մշակույթի ոլորտում աշխատող կին

ԳԼՈՒԽ II

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔԸ ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԱՌԱՋ ԲԵՐԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ

2.1. ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵԶՈՔԱՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հաշվի առնելով աշխարհում և Հայաստանում կորոնավիրուսային հիվանդության տարածման դեպքերը և այդ վարակն Առողջապահության համաշխարհային կազմակերպության գլխավոր տնօրենի՝ 2020 թ. մարտի 13-ի հայտարարությամբ «համավարակ» որակելու հանգամանքը՝ 2020 թ. մարտի 16-ին ՀՀ Կառավարության որոշմամբ ՀՀ ողջ տարածքում հայտարարվեց արտակարգ դրություն: Հայտարարված արտակարգ դրության պայմաններում սահմանափակվեցին մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները, ժամանակավորապես արգելվեց տնտեսական առանձին տեսակներով գործունեություն ծավալելը, ինչի հետևանքով էլ ի հայտ եկան այդ ոլորտներում ներգրավված աշխատողների աշխատանքային իրավունքների սահմանափակումներ և ոտնահարումներ[12]:

Սոցիալ-տնտեսական աջակցության ծրագրեր

Թեպետ վիրուսի տարածումը գլխավորապես առողջապահական խնդիր է, այն հանգեցրեց նաև տնտեսական ճգնաժամի: Ճգնաժամի համատեքստում դժվարությունների բախվեցին հասարակության որոշակի՝ առավել անպաշտպան խմբերը, որոնք մինչև համավարակն արդեն իսկ խոցելի էին ոչ միայն առողջության, այլև սոցիալական տեսանկյունից: Ուստի կորոնավիրուսի տարածման հետևանքով առաջ եկած մարտահրավերներին դիմակայելու նպատակով ՀՀ Կառավարությունը մշակեց միջոցառումներ, աջակցության ծրագրեր և ծառայությունների փաթեթներ, որոնք միտված էին չեզոքացնելու կորոնավիրուսի տնտեսական և սոցիալական հետևանքները: ՀՀ Կառավարությունը 2020 թ. մարտի 26-ին ընդունեց կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացմանն ուղղված համալիր միջոցառումների փաթեթ, որը նախատեսում է ՀՀ տնտեսվարողներին օժանդակության տրամադրման մի քանի գործիք:

ՀՀ տնտեսվարողներին պետության կողմից տրամադրվող օժանդակության տեսակներից էր արտոնյալ պայմաններով վարկերը՝ միտված կորոնավիրուսի համավարակի հետևանքով ի հայտ եկած խնդիրների և ժամանակավոր դժվարությունների լուծմանը (*առաջին միջոցառում*[13]), գյուղատնտեսության՝ որպես

12 gov.am. (2020, մարտ 23). Պարետի որոշում ՀՀ ողջ տարածքում տնտեսական գործունեության առանձին տեսակներով գործունեություն ծավալելու նկատմամբ կիրառվող սահմանափակումների վերաբերյալ. վերցվել է՝ https://www.gov.am/files/docs/3966.pdf:

13 arlis.am. (2020, մարտ). ՀՀ Կառավարության որոշում կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման առաջին միջոցառումը հաստատելու մասին. վերցվել է՝ https://bit.ly/3N4KRcF:

առանցքային արտահանման և կորոնավիրուսի համավարակից հատկապես տուժած ոլորտին տրվող աջակցությունը (*երկրորդ միջոցառում*[14]), ՀՀ փոքր և միջին ձեռնարկատիրությամբ զբաղվող տնտեսվարողներին տրամադրվող հրատապ օգնությունը (*երրորդ միջոցառում*[15]): Իրականացվող ծրագրերի շրջանակում ՀՀ Կառավարությունը միանվագ դրամաշնորհների տրամադրման միջոցով (*հինգերորդ*[16], *տասնութերորդ*[17] *և քսանմեկերորդ*[18] *միջոցառումներ*) օժանդակեց ՀՀ առանձին տնտեսվարողներին՝ հակազդելու կորոնավիրուսի տարածման հետևանքով աշխատատեղերի կրճատմանը: Այս միջոցառումները, կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացմանն ուղղված լինելուց զատ, ինչ-որ առումով ուղղված էին նաև աշխատանքային իրավունքների պաշտպանությանը՝ այս պարագայում աշխատատեղերի պահպանմանը: Պետությունը կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացմանն ուղղված միջոցառումներ նախատեսեց և իրականացրեց ՀՀ միկրոձեռնարկատիրության սուբյեկտ հանդիսացող առանձին տնտեսվարողների (*տասներորդ միջոցառում*[19]), բարձր տեխնոլոգիաների ոլորտի առանձին տնտեսվարողների (*տասնյոթերորդ միջոցառում*[20]), ինչպես նաև զբոսաշրջության ոլորտի տնտեսվարողների (*քսաներեքերորդ միջոցառում*[21]) շրջանում առաջացած խնդիրների չեզոքացման համար: Այս ոլորտներում պետության տրամադրած աջակցությունը, միանվագ դրամաշնորհները նպատակ ունեին մեղմելու համավարակի հետևանքով առաջացած ֆինանսական խնդիրները, ապահովելու այս ոլորտներում տնտեսվարողների գործունեության շարունակականությունը, ինչպես նաև նպատակ ունեին պահպանելու ոլորտում առկա աշխատատեղերը:

Բացի կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման համար տրամադրվող արտոնյալ վարկերից, միանվագ աջակցությունից՝ ՀՀ Կառավարությունը նախատեսել և իրականացրել է ծրագրեր, որոնք նպատակ ունեին ընդլայնելու ձեռնարկատիրական գիտելիքները, ֆինանսների հասանելիության

14 arlis.am. (2020, մարտ). ՀՀ Կառավարության որոշում կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման երկրորդ միջոցառումը հաստատելու մասին. վերցվել է՝ https://bit.ly/3N1i099:

15 arlis.am. (2020, մարտ). ՀՀ Կառավարության որոշում կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման երրորդ միջոցառումը հաստատելու մասին. վերցվել է՝ https://bit.ly/3yvQ6xY:

16 arlis.am. (2020, մարտ). ՀՀ Կառավարության որոշում կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման հինգերորդ միջոցառումը հաստատելու մասին. վերցվել է՝ https://bit.ly/3I07IKx:

17 arlis.am. (2020, հունիս). ՀՀ Կառավարության որոշում կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման տասնութերորդ միջոցառումը հաստատելու մասին. վերցվել է՝ https://bit.ly/3Pd75ez:

18 arlis.am. (2020, հունիս). ՀՀ Կառավարության որոշում կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման քսանմեկերորդ միջոցառումը հաստատելու մասին. վերցվել է՝ https://bit.ly/396Xwx0:

19 arlis.am. (2020, ապրիլ). ՀՀ Կառավարության որոշում կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման տասներորդ միջոցառումը հաստատելու մասին. վերցվել է՝ https://bit.ly/3FwGiVT:

20 arlis.am. (2020, մայիս). ՀՀ Կառավարության որոշում կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման տասնյոթերորդ միջոցառումը հաստատելու մասին. վերցվել է՝ https://bit.ly/3ysrDcM:

21 arlis.am. (2020, օգոստոս). ՀՀ Կառավարության որոշում կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման քսաներեքերորդ միջոցառումը հաստատելու մասին. վերցվել է՝ https://bit.ly/3kWPbyB:

բարձրացման միջոցով նպաստելու «զրոյից» բիզնես ստեղծելու ձգտում ունեցող շահառուների ձեռնարկատիրական գաղափարների իրագործմանը և շահառուների գործարար ծրագրերի նորարարական զարգացմանը (*տասնիններորդ միջոցառում*[22]), ինչպես նաև արդեն իսկ պատրաստի արտադրանքի ընթացիկ իրացվելիությանն առնչվող ռիսկերի մեղմմանը (*քսանչորսերորդ միջոցառում*[23]): Կորոնավիրուսի համավարակի տնտեսական հետևանքների չեզոքացման միջոցառումներից և գործողություններից զատ ՀՀ Կառավարությունը նախատեսել և իրականացրել է կորոնավիրուսի համավարակի սոցիալական հետևանքների չեզոքացման ծրագրեր և միջոցառումներ: Սոցիալական հետևանքների չեզոքացման միջոցառումներն ունեցել են առավել թիրախային ուղղվածություն, ինչպես, օրինակ, աջակցության ծրագրեր, փաթեթներ և միջոցառումներ անչափահաս երեխաների համար (*չորրորդ միջոցառում*[24]), անչափահաս երեխա(ներ) ունեցող ընտանիքների համար (*իններորդ միջոցառում*[25]), հղի կանանց (*յոթերորդ միջոցառում*[26]) համար և այլն: Իրականացվել են նաև մի շարք միջոցառումներ՝ ուղղված համավարակի տարածման սկզբնական շրջանում հայտարարված արտակարգ դրության ընթացքում կոմունալ ծախսերի մասնակի փոխհատուցմանը (*տասնմեկերորդ*[27], *տասներկուերորդ*[28], *տասնվեցերորդ*[29] *միջոցառումներ*):

Աշխատանքային իրավունքի տեսանկյունից ՀՀ Կառավարությունը կորոնավիրուսի հետևանքով աշխատանքը կորցրած քաղաքացիների համար ևս արտակարգ դրության պայմաններում նախատեսել և տրամադրել է սոցիալական աջակցության ծրագրերի փաթեթներ (ոլորտային բաժանումներով)՝ ընդունելով, որ համավարակի պայմաններում հատկապես տուժել են զբաղված և աշխատանք ունեցող անձինք: Կառավարությունը մասնավորապես տրամադրել է աջակցություն այն քաղաքացիներին, որոնք աշխատանքային պայմանագրի կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի հիման վրա աշխատանքային հարաբերությունների մեջ են եղել մասնավոր հատվա-

22 arlis.am. (2020, մայիս). ՀՀ Կառավարության որոշում կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման տասնիններորդ միջոցառումը հաստատելու մասին. վերցվել է՝ https://bit.ly/3M2GBud:

23 arlis.am. (2020, օգոստոս). ՀՀ Կառավարության որոշում կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման քսանչորսերորդ միջոցառումը հաստատելու մասին. վերցվել է՝ https://bit.ly/3FuYNKw

24 arlis.am. (2020, մարտ). ՀՀ Կառավարության որոշում կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման երկրորդ միջոցառումը հաստատելու մասին. վերցվել է՝ https://bit.ly/38jambt:

25 arlis.am. (2020, ապրիլ). ՀՀ Կառավարության որոշում կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման երկրորդ միջոցառումը հաստատելու մասին. վերցվել է՝ https://bit.ly/3wkDeIr:

26 arlis.am. (2020, մարտ). ՀՀ Կառավարության որոշում կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման յոթերորդ միջոցառումը հաստատելու մասին. վերցվել է՝ https://bit.ly/3smmrDp:

27 arlis.am. (2020, ապրիլ). ՀՀ Կառավարության որոշում կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման տասնմեկերորդ միջոցառումը հաստատելու մասին. վերցվել է՝ https://bit.ly/3widVXp:

28 arlis.am. (2020, ապրիլ). ՀՀ Կառավարության որոշում կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման տասներկուերորդ միջոցառումը հաստատելու մասին. վերցվել է՝ https://bit.ly/3sqNOfD:

29 arlis.am. (2020, մայիս). ՀՀ Կառավարության որոշում կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման տասնվեցերորդ միջոցառումը հաստատելու մասին. վերցվել է՝ https://bit.ly/3N3diaT:

ծի գործատուի հետ[30] անընդմեջ՝ առնվազն 2020 թ. հունվարի 1-ից մարտի 13-ն ընկած ժամանակահատվածում (կամ հունվարի 1-ից մարտի 13-ն ընկած ժամանակահատվածում աշխատանքից ազատվելու և կրկին աշխատանքի ընդունվելու ժամանակահատվածը չի գերազանցել 3 աշխատանքային օրը), սակայն ազատվել են աշխատանքից 2020 թ. մարտի 13-ից մարտի 30-ն ընկած ժամանակահատվածում և այդ նույն ժամանակահատվածում չեն անցել մեկ այլ աշխատանքի (*վեցերորդ միջոցառում*[31]): Իսկ այն անձանց, որոնք 2020 թ. մարտի 13-30-ը եղել են հյուրանոցային և հյուրատնային ծառայությունների, հանրային սննդի ծառայությունների, զբոսաշրջային ծառայությունների, վարսավիրանոցների և գեղեցկության սրահների ծառայությունների, մանրածախ առևտրի ծառայությունների (բացառությամբ սննդամթերք և դեղորայք վաճառողների), ցամաքային տրանսպորտի գործունեության (երթուղային տրանսպորտ), նախադպրոցական կրթության (մասնավոր մանկապարտեզներ), սպորտի բնագավառում (սպորտային ակումբներ, լողավազաններ), զվարճությունների և հանգստի կազմակերպման այլ գործունեություն իրականացնող ոլորտների վարձու աշխատողներ կամ անհատ ձեռնարկատերեր, տրվել է պետական մեկանգամյա օժանդակություն[32] (*ութերորդ միջոցառում*[33], *քսաներորդ միջոցառում*[34]): Առանձին միջոցառմամբ (*քսաներկուերորդ միջոցառում*[35]) 2020 թվականի մարտի 31-ից հունիսի 1-ն ընկած ժամանակահատվածում աշխատանքից ազատված և նույն ժամանակահատվածում մեկ այլ աշխատանքի չանցած անձանց տրամադրվել է նվազագույն աշխատավարձի չափով միանվագ աջակցություն: Առանձին միջոցառմամբ (*տասներեքերորդ միջոցառում*[36]) միանվագ աջակցություն է տրամադրվել 2020 թ. ապրիլի դրությամբ ընտանեկան և սոցիալական նպաստների իրավունք ունեցող յուրաքանչյուր ընտանիքի, ինչպես նաև մասամբ փոխհատուցվել է սպառվող էլեկտրական էներգիայի վճարը:

30 Բացառությամբ բանկերի, վարկային կազմակերպությունների, գրավատների և ապահովագրական ընկերությունների, արտարժույթի փոխանակման կետերի, արժեթղթերի առք ու վաճառքով զբաղվող կազմակերպությունների, ներդրումային կազմակերպությունների, ներդրումային ֆոնդերի, վճարահաշվարկային կազմակերպությունների, վիճակախաղերի և շահումով խաղերի կազմակերպիչների և նման այլ գործունեություն ծավալողների:

31 arlis.am. (2020, մարտ). ՀՀ Կառավարության որոշում կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման վեցերորդ միջոցառումը հաստատելու մասին. վերցվել է՝ https://bit.ly/3L8ncqA:

32 Վարձու աշխատողների համար՝ նրանց հունվարի և փետրվարի միջին աշխատավարձի 50%-ի չափով, բայց ոչ ավելի, քան 136.000 դրամը, իսկ եթե աշխատողը աշխատել է լրիվ դրույքով, ապա ոչ պակաս, քան 68.000 դրամը: Անհատ ձեռներեցների համար՝ 2019 թ. 4-րդ եռամսյակի իրացման շրջանառության 10%-ի չափով, բայց ոչ ավելի, քան 136.000 դրամը:

33 arlis.am. (2020, մարտ). ՀՀ Կառավարության որոշում կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման ութերորդ միջոցառումը հաստատելու մասին. վերցվել է՝ https://bit.ly/3FCw9a8:

34 arlis.am. (2020, հունիս). ՀՀ Կառավարության որոշում կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման քսաներորդ միջոցառումը և դրա շրջանակում աջակցության տրամադրման կարգը հաստատելու մասին. վերցվել է՝ https://bit.ly/38flMx5:

35 arlis.am. (2020, հունիս). ՀՀ Կառավարության որոշում կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման քսաներկուերորդ միջոցառումը հաստատելու մասին. վերցվել է՝ https://bit.ly/3M8oIPW:

36 arlis.am. (2020, ապրիլ). ՀՀ Կառավարության որոշում կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման տասներեքերորդ միջոցառումը հաստատելու մասին. վերցվել է՝ https://bit.ly/3yu0EO1:

Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման նպատակով գյուղատնտեսական ոլորտում ժամանակավոր աշխատատեղեր ստեղծվեցին բնապահպանական խնդիրներ լուծելու նպատակով (*տասնհինգերորդ միջոցառում*[37]), ինչպես նաև սոցիալական աջակցության փաթեթներ տրվեցին ՀՀ բարձրագույն և հետբուհական (կլինիկական օրդինատուրա) կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ՀՀ քաղաքացի հանդիսացող ուսանողներին (*տասնչորսերորդ միջոցառում*[38]):

Օրենսդրական փոփոխություններ

Կորոնավիրուսի համավարակի ժամանակ գրանցված աշխատատեղերի կրճատումներն աշխատանքային իրավունքների ոտնահարման մի մասն են միայն: Արտակարգ դրության առաջին ամիսներին տասնյակ քաղաքացիներ, որոնք բախվել էին աշխատանքային խնդիրների, անակնկալի էին գալիս՝ տեղեկանալով, որ իրենց անունները ներառված չեն Կառավարության հակաճգնաժամային միջոցառումներից և ոչ մեկի ցանկում: Սակայն խնդիրը ոչ թե ցուցակներն էին, այլ գործատու-աշխատող ոչ իրավական հարաբերությունները, առանց աշխատանքային պայմանագրի կամ առանց գրանցման հազարավոր աշխատողների դրությունը: Համավարակն էլ ավելի խոցելի վիճակում թողեց հենց այս խմբին, որովհետև նրանք զրկվեցին ոչ միայն իրենց աշխատավարձից համավարակի և հարկադիր պարապուրդի պատճառով, այլև հնարավորություն չունեցան օգտվելու Կառավարության նախատեսած սոցիալական աջակցության ծրագրերից, հակաճգնաժամային միջոցառումներից: Այս և մի շարք այլ խնդիրների մասին բարձրաձայնելուց հետո ՀՀ Կառավարությունը և Ազգային ժողովը հանդես եկան մի շարք օրենսդրական առաջարկություններով և նախագծերով, որոնք միտված էին աշխատանքային իրավունքների բարելավմանը: Արտակարգ դրության ռեժիմի սահմանափակումներով պայմանավորված՝ դադարեցվեց որոշ տնտեսվարողների գործունեությունը, և պետական մարմինները կոչ արեցին հնարավորության դեպքում աշխատանքը կազմակերպելու հեռավար: Իրավիճակով պայմանավորված՝ բազմաթիվ գործատուներ անցան հեռավար աշխատանքի՝ առանց գնահատելու իրական ռիսկերը, որոնք կարող են ի հայտ գալ աշխատանքի այս տեսակի կազմակերպման հետևանքով: Օրենսդրական տեսանկյունից ևս բաց կար: ՀՀ աշխատանքային օրենսգիրքը առ 2020 թ. արտակարգ դրության սկիզբը չուներ «հեռավար աշխատանքի» կարգավորումներ, դրա մասին կամ դրա կազմակերպմանն առնչվող դրույթներ: ՀՀ աշխատանքային օրենսգրքում ամրագրված

37 arlis.am. (2020, մարտ). ՀՀ Կառավարության որոշում կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման տասնհինգերորդ միջոցառումը հաստատելու մասին. վերցվել է՝ https://bitly.is/3srnZw9:

38 arlis.am. (2020, ապրիլ). ՀՀ Կառավարության որոշում կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման տասնչորսերորդ միջոցառումը հաստատելու մասին. վերցվել է՝ https://bit.ly/3yuQg94:

չէին նաև դրույթներ, որոնք կկարգավորեին տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների, դժբախտ պատահարների, հրդեհների և արտակարգ այլ հանգամանքների կանխարգելման կամ դրանց հետևանքների անհապաղ վերացման ժամանակահատվածներում հնարավոր հեռավար եղանակով աշխատանքի կազմակերպումը: Մյուս կողմից՝ կորոնավիրուսի համավարակի, հայտարարված արտակարգ դրության պայմաններում աշխատողների՝ ժամանակին, լրիվ աշխատանքային օրով կամ ընդհանրապես աշխատանքի ներկայանալը օբյեկտիվ պատճառներով (օրինակ՝ հիվանդացության պատճառով) երբեմն հնարավոր չէր: Նման դեպքերում, օրենսգրքի գործող կարգավորումների համաձայն, գործատուն իրավունք ուներ աշխատողի նկատմամբ կիրառելու կարգապահական տույժ՝ անգամ լուծարելով աշխատանքային պայմանագիրը:

2020 թ. ապրիլի 29-ին ՀՀ յոթերորդ գումարման ԱԺ-ն ընդունեց ՀՀ աշխատանքային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծը: Օրենքի նախագծով առաջարկվում էր տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների, դժբախտ պատահարների, հրդեհների և արտակարգ այլ հանգամանքների կանխարգելման կամ դրանց հետևանքների անհապաղ վերացման ժամանակահատվածներում, այդ դեպքերով պայմանավորված՝ աշխատանքային հարաբերություններում առաջացող խնդիրների լուծման տարբերակներ: Մասնավորապես այս փոփոխություններն անդրադարձել են նրան, որ հեռավար եղանակով աշխատանքի կազմակերպման հնարավորության պարագայում գործատուները աշխատողներին չհամարեն պարապուրդի մեջ և աշխատավարձն ամբողջությամբ պահպանեն: Ըստ օրենսդրական փոփոխությունների՝ հեռավար եղանակով աշխատանքների կազմակերպումը և աշխատանքի ու հանգստի ռեժիմի փոփոխությունը չպետք է հետայսու համարվեն աշխատանքային պայմանագրի էական պայմանի փոփոխություն, ինչը հնարավորություն կտա գործատուներին լինելու ավելի ճկուն և նախապես չծանուցելու այդ փոփոխությունների մասին: Այն դեպքերում, երբ մասնավոր ոլորտի գործատուն, արտակարգ դրությամբ պայմանավորված, այլևս ի զորու չէ աշխատանքները շարունակելու, այդ թվում՝ հեռավար եղանակով, այնուամենայնիվ պետք է շարունակի վարձատրել աշխատողին չաշխատած յուրաքանչյուր ժամի համար՝ առնվազն օրենսդրությամբ սահմանված նվազագույն ժամային դրույքաչափով: Պետական և համայնքային բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի աշխատողների աշխատավարձն ամբողջությամբ պահպանվում է, իսկ այն դեպքերում, երբ աշխատողն ունի չօգտագործված արձակուրդ, և հնարավոր չէ շարունակել աշխատանքը արտակարգ դրության ժամանակահատվածում, գործատուի համար նախատեսվել է պարտադիր պահանջ, որ աշխատողի ցանկության դեպքում վերջինիս տրամադրի իր չօգտագործված արձակուրդը:

Օրենսդրական փոփոխությունը նաև դրույթներ է սահմանել այն դեպքերի համար, երբ արտակարգ դրությամբ պայմանավորված՝ աշխատողն օբյեկտիվորեն հնարավորություն չի ունեցել ներկայանալու աշխատանքի, աշխատանքի է ներկայացել ուշացումով կամ ոչ լրիվ աշխատանքային օրով, ապա գործատուն չի կարող իր նախաձեռնությամբ լուծել աշխատանքային պայմանագիրը կամ կիրառել կարգապահական տույժ: Այս և նման դեպքերում սահմանվել է, որ գործատուն պետք է նախատեսի վարձատրություն առնվազն աշխատողի փաստացի աշխատած ժամանակին կամ կատարած փաստացի աշխատանքին համապատասխան: Ավելին՝ գործատուին արգելվել է իր նախաձեռնությամբ լուծել աշխատանքային պայմանագիրը կամ կիրառել կարգապահական տույժ ուսումնական (այդ թվում՝ նախադպրոցական) հաստատություններում նախատեսված արձակուրդների չպլանավորված տեղափոխման կամ տրամադրման ժամանակահատվածում, ինչպես նաև այն դեպքերում, երբ երեխայի խնամքը կազմակերպելու նպատակով աշխատողը աշխատանքի է ներկայացել ուշացումով կամ ոչ լրիվ աշխատանքային օրով: Այս դեպքերում գործատուն պետք է նախատեսի ամբողջական վարձատրություն: Այս օրենսդրական փոփոխությամբ նաև նախատեսվել է դրույթ, որ արտակարգ դրության ժամանակ արտաժամյա աշխատանքը իրար հաջորդող երկու օրվա ընթացքում կարող է կազմել մինչև 8 ժամ՝ ներկայիս 4-ի փոխարեն: Փոփոխությունների մեջ նախատեսված էին նաև դրույթներ, որոնք սահմանում են նշված դեպքերում աշխատանքի վարձատրության հարցերը, գործատուների կողմից աշխատանքային օրենսդրության, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերի պահանջների կատարման նկատմամբ պետական վերահսկողությունն իրականացնող մարմնի գործունեությունը (Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին), ինչպես նաև սահմանում են համապատասխան վարչական տույժեր[39]: Անցումային դրույթներով նախատեսվել է նաև, որ վերը թվարկված կարգավորումները տարածվելու են գործատուների և աշխատողների վրա 2020 թ. մարտի 16-ից, այսինքն՝ այն օրվանից, երբ ՀՀ-ում փաստացի հայտարարվեց արտակարգ դրություն:

2020 թ. գարնանը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը հանրային քննարկման ներկայացրեց ՀՀ աշխատանքային օրենսգրքի բարեփոխումների հայեցակարգը հաստատելու մասին ՀՀ Կառավարության որոշման նախագիծը[40]: Վերջինիս ընդունումը նպատակ ունի մատնանշելու ՀՀ աշխատանքային օրենսգրքի իրավակիրառ պրակտիկայում ի հայտ եկած

39 parlament.am. (2020, ապրիլ). «ՀՀ աշխատանքային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը. վերցվել է՝ https://bit.ly/3w2E39T:

40 parlament.am. (2020, ապրիլ). Ֆինանսատնտեսագիտական փորձաքննության բաժնի եզրակացությունը. վերցվել է՝ https://bit.ly/3N3Wctx:

խնդիրները, դրանց պատճառները, ինչպես նաև աշխատանքային հարաբերությունների կարգավորման ոլորտում ՀՀ-ի կողմից վավերացված միջազգային պայմանագրերի պահանջների և ՀՀ աշխատանքային օրենսգրքի գործող կարգավորումների անհամապատասխանությունները և առաջարկել այդ խնդիրների լուծման հնարավոր հիմնական ուղղություններ: Նախագծի ընդունումից հետո ակնկալվում է, որ բարեփոխումների հայեցակարգով նախանշված խնդիրների լուծման նպատակով ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ նախատեսող համապատասխան նախագիծ կմշակվի: Նախագծով առաջարկվում է փոփոխություններ անել աշխատանքային օրենսգրքի այն բաժիններում, որոնք վերաբերում են հարկադիր աշխատանքին, հայցային վաղեմությանը, կոլեկտիվ աշխատանքային հարաբերություններին և ներկայացուցչությանը, աշխատանքային պայմանագրին, աշխատանքային պայմանագրի լուծմանը, ամենամյա արձակուրդին, աշխատաժամանակին և հանգստի ժամանակին, խտրականության արգելքին:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը մի կողմից նշում է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի գործող տարբերակը սպառիչ կերպով կարգավորում է աշխատանքային հարաբերությունները բոլոր փուլերում, մյուս կողմից մատնանշում է այն խնդիրները, որոնց լուծման համար անհրաժեշտ են հայեցակարգով նախատեսված փոփոխություններ, որոնք հետագայում փոփոխությունների տեսքով իրենց տեղը կգտնեն վերանայված և փոփոխված ՀՀ աշխատանքային օրենսգրքում: Այդ փոփոխությունները և առաջարկությունները, ինչպես նաև դրանց հիմնավորումները բաժանվում են 3 խմբի: Մասնավորապես.

1. Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ ներկայիս ՀՀ աշխատանքային օրենսգիրքը «բարոյապես մաշված» է, օրենսգրքում կան կարգավորումներ, որոնք չեն համապատասխանում աշխատանքային իրավունքների ոլորտում սահմանված միջազգային նորմերին և չափորոշիչներին: Այս խմբի խնդիրներից են այնպիսի դրույթներ, որոնցով կարգավորվող աշխատանքային հարաբերությունները ենթարկվել են տեխնոլոգիական, գիտատեխնիկական (այդ թվում՝ առողջապահության ոլորտում) զարգացման, աշխատանքային մշակույթի էվոլյուցիայի և քաղաքակրթական այլ գործոնների ազդեցությանը:

2. Երկրորդ խմբի խնդիրները վերաբերում են այն կարգավորումներին, որոնք իրավակիրառ պրակտիկայում ունեն բարդ կիրառություն կամ խնդրահարույց և տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք են տալիս: Այս խմբում են օրենսգրքի այն նորմերը, որոնց համատեղ կիրառումը գործատուների կամ աշխատողների համար բարդություններ

է առաջացնում, մասնավորապես առանձին նորմերի դեպքում՝ բարդ կամ ոչ հստակ ձևակերպումների պատճառով, համատեղ կիրառություն ենթադրող նորմերի դեպքում՝ տարաբնույթ կամ անհամատեղելի ձևակերպումների հետևանքով:

3. Վերանայման և վերաձևակերպման կարիք ունեն օրենսգրքում կիրառվող մի շարք եզրույթներ:

   Հայեցակարգի նախագիծը ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ, սակայն այս հետազոտական զեկույցի պատրաստման փուլում այն դեռ քննարկումների փուլում չէ:

Չնայած այն հանգամանքին, որ հայեցակարգը չի ընդունվել դեռևս, այնուամենայնիվ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը 2021-ի գարնանը հանրային քննարկման ներկայացրեց «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի և հարակից օրենքներում լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի փաթեթը[41]:

Օրենքների նախագծերի ընդունման անհրաժեշտությունը հիմնավորվում է նրանով, որ նախագծի ընդունմամբ աշխատանքային օրենսգրքի առանձին դրույթները կհամապատասխանեցվեն Սահմանադրությանը և Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններին, կվերացվեն օրենսդրական բացերն ու օրենսգրքի ներքին հակասությունները, կհստակեցվեն տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք տվող մի շարք դրույթներ, կբացառվի կամ նվազագույնի կհասցվի իրավակիրառ պրակտիկայում նախկինում ի հայտ եկած մի շարք խնդիրների հետագա առաջացումը, կներդրվեն աշխատանքային հարաբերությունների լիարժեք կարգավորման համար անհրաժեշտ լրացուցիչ կառուցակարգեր, ինչպես նաև աշխատողների և գործատուների օրինական շահերի պաշտպանության և դրանց ողջամիտ հավասարակշռման ապահովմանն ուղղված առավել արդյունավետ մեխանիզմներ: Նախագծով կկարգավորվեն նաև ոլորտում իրավական որոշակիության սկզբունքի խաթարման դեպքերը, աշխատողների համար կստեղծվեն լրացուցիչ սոցիալ-աշխատանքային երաշխիքներ:

Հանրային քննարկումների փուլում թե՛ աշխատանքային օրենսգրքի բարեփոխումների հայեցակարգի, թե՛ «ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի և հարակից օրենքներում լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծի վերաբերյալ Հայաստանում գործող հասարակական կազմակերպություններ-

41 e-draft.am. «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի և հարակից օրենքներում լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի փաթեթ. վերցվել է՝ https://www.e-draft.am/projects/3213:

ը, արհմիությունների ներկայացուցիչները հանդես են եկել իրենց դիրքորոշումներով և համապատասխան առաջարկներ են ներկայացրել, որոնց մի մասն ընդունվել է, մի մասը քննարկվել է, մի մասն էլ մերժվել է: Հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մտահոգությունը հայեցակարգի շուրջ այն էր, որ հայեցակարգի նախագծում առաջարկվող առանձին դրույթների և իրավահարաբերությունների կարգավորումների բարեփոխումները դրվագային բնույթ ունեն և չեն ծածկում Հայաստանում աշխատանքային իրավահարաբերությունների շրջանակում առաջացող խնդիրների ողջ համալիրը[42]: Ըստ քաղաքացիական հասարակության՝ հայեցակարգը պետք է անդրադառնա ոչ միայն աշխատանքային օրենսգրքում նախատեսվող փոփոխություններին, այլև առհասարակ աշխատանքային հարաբերությունների բոլոր հիմնախնդիրներին, այլապես դրանց դիտարկումը միայն իրավահարաբերությունների տեսանկյունից անարդյունավետ կլինի և չի լուծի աշխատանքային իրավունքների ոլորտում առկա հիմնախնդիրները: Այսինքն՝ անհրաժեշտություն կա, որ բարեփոխվի ոչ միայն աշխատանքային օրենսգիրքը, այլև դատավարական օրենսդրությունը, այլապես միայն աշխատանքային օրենսգրքի փոփոխությունները չեն կարող լուծել այն հիմնախնդիրները, որոնց լուծմանն է միտված տվյալ հայեցակարգը: Առաջարկվող փոփոխությունների մեջ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները նշել են նաև, որ հայեցակարգը պետք է անդրադառնա կամ պետք է պարունակի լրացուցիչ հայեցակարգային կետեր աշխատանքային իրավունքների, աշխատանքի ազատ ընտրության իրավունքի, հավասար և արդար վարձատրության իրավունքի, արհմիությունների՝ աշխատանքային վեճերի դեպքում դատական կարգով աշխատողների կոլեկտիվ և անհատական շահերը ներկայացնելու հնարավորության (որը միավորվելու իրավունքի մասին է), աշխատանքում արժանապատվության և արժանապատիվ աշխատանքի իրավունքների և այլնի մասին[43]:

Իսկ Հայաստանի պետական հիմնարկների, ՏԻՄ-երի աշխատողների արհմիությունը մտահոգություն էր հայտնել աշխատանքային օրենսգրքի փոփոխությունների մշակմամբ զբաղվող աշխատանքային խմբի ձևավորման և կազմի շուրջ, ինչպես նաև հանդես էր եկել սոցիալական գործընկերության, գործադուլի, աշխատանքային հարաբերությունների և այլ հարցերի շուրջ մի շարք առաջարկություններով[44]: Արհմիությունների առաջարկություններն, ըստ էության, ավելի

42 osf.am. Առաջարկներ «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի բարեփոխումների հայեցակարգը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագծի վերաբերյալ. վերցվել է՝ https://bit.ly/3uERLxR:

43 Նույն տեղում:

44 Հայաստանի պետական հիմնարկների, ՏԻՄ-երի աշխատողների արհմիությունը հետագայում տարածեց մեկ այլ հայտարարություն այն մասին, որ իրենց առաջարկությունները չեն ընդունվել նախարարության կողմից: Արհմիության առաջարկություններին կարող եք ծանոթանալ այստեղ՝ Հայաստանի պետհիմնարկների ՏԻՄ-երի աշխատողների արհմիություն. (2020, հունիսի 16). Առաջարկներ «ՀՀ աշխատանքային օրենսգրքի բարեփոխումների հայեցակարգը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագծի վերաբերյալ. վերցվել է՝ https://bit.ly/3PiNtFV:

գործընթացային են, վերաբերում են օրենքների նախագծերի մշակման ձևին և մշակողների կազմին և չեն անդրադառնում նախագծի բովանդակությանը:

Սակայն քանի դեռ թե՛ հայեցակարգը, թե՛ օրենսգրքի փոփոխված վերջնական տարբերակները հասանելի չեն, դժվար է ասել, թե որ փոփոխությունները կամ որ առաջարկներն իրենց տեղը կգտնեն վերջնական տեքստում, ինչ փոփոխություններ կարվեն հետագա հանրային քննարկումների վրա, ինչպես նաև կընդունվե՞ն արդյոք այս փաստաթղթերը, թե՞ ոչ:

2021 թ. հուլիսի 1-ից ուժի մեջ է մտել աշխատանքային օրենսդրության նկատմամբ պետական վերահսկողության մասին դրույթը, ըստ որի՝ ոլորտի լիազորված տեսչական մարմինն օրենքով նախատեսված դեպքերում կիրառում է պատասխանատվության միջոցներ[45]:

Համաձայն Առողջության և աշխատանքի տեսչական մարմնի առ 2021 թ. դեկտեմբերի տվյալների՝ տեսչական մարմին ներկայացված բոլոր դիմումները վարույթ են ստացել: Դիմումատուների ցանկում առաջինը ՊԵԿ-ից եկած դիմումներն են՝ չգրանցված աշխատողների մասով, երկրորդում ՄԻՊ-ի դիմումներն են, իսկ հետո՝ արդեն ՔՀԿ-ների ու անհատների ներկայացրած դիմումները: 2021-ի հուլիս-դեկտեմբերի տվյալներով՝ Տեսչական մարմնում հարուցվել է 532 վարչական վարույթ, որոնցից 255-ը՝ տեսչական մարմնի նախաձեռնությամբ, իսկ 277-ը՝ դիմումի համաձայն, ինչի արդյունքում տրվել է 112 կարգադրանք[46]: Դիմումները մեծ մասամբ առնչվել են աշխատանքային իրավունքների խախտումներին, մասնավորապես վերջնահաշվարկ չկատարելուն, առողջության համար անհրաժեշտ պայմաններ չապահովելուն, աշխատանքային պայմանագրի լուծմանն առնչվող խախտումներին և այլն: Սակայն տեսչական մարմնի՝ որպես աշխատանքային իրավունքների պաշտպանության օղակի գործունակության հարցը շարունակական հետազոտման կարիք ունի, մասնավորապես այն հարցերը, թե ինչպիսի որոշումներ կկայացնի տեսչական մարմինը, և ինչպես դրանք կազդեն աշխատանքային իրավունքների պաշտպանության ոլորտի վրա: Այս ազդեցությունների մասին դեռևս չենք կարող եզրահանգումներ անել առկա տվյալների սղության պատճառով:

45 parliament.am. «ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը. վերցվել է՝ https://bit.ly/3swmlJG:

46 Հայաստանում ԵՄ աջակցությամբ իրականացվող երեք ծրագրերի կողմից կատարված՝ աշխատանքային իրավունքների վերաբերյալ հետազոտությունների հիմնական արդյունքների ներկայացում, [Մեկնաբանություն. Հակոբ Ավագյան, Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի աշխատանքի տարեկան ամփոփում], 2022, փետրվարի 17:

2.2. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՎԱՐԱԿԻՑ ՏՈՒԺԱԾ ԽՄԲԵՐԻՆ

Կորոնավիրուսի համավարակի բռնկման սկզբից ՀՀ Կառավարության տրամադրած սոցիալական աջակցության ծրագրերին զուգահեռ համավարակից տուժած քաղաքացիներին աջակցություն տրամադրելու հարցում իրենց ուժերը մոբիլիզացրին նաև հայաստանյան քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, ինչպես նաև Հայաստանում աշխատող միջազգային կազմակերպություններն ու դիվանագիտական առաքելությունները: Այդ աջակցությունն ուներ ինչպես հումանիտար, այնպես էլ խորհրդատվական և տեղեկատվական բնույթ:

Հումանիտար աջակցություն

Քաղաքացիական հասարակության տարբեր կազմակերպություններ պետության հետ համագործակցությամբ թիրախային հումանիտար աջակցություն են տրամադրել բնակչության առավել խոցելի խմբերին: Տարբեր կազմակերպությունների թիրախում եղել են հենց այդ կազմակերպությունների շահառու խմբերը (ինքնամեկուսացված միայնակ տարեցներ, հաշմանդամություն, քրոնիկ հիվանդություններ ունեցող անձինք, ՄԻԱՎ-ով ապրող անձինք, ընտանեկան բռնության զոհերը, կանայք և այլն), որոնց հասարակական կազմակերպությունները աջակցել են հոգալու առաջնահերթ կարիքները[47]:

Քաղհասարակության և միջազգային կազմակերպությունների ուշադրության կենտրոնում են եղել նաև փակ և կիսափակ հաստատությունները, աշխատանքը կորցրած կանայք, ընտանեկան բռնության զոհերն ու սոցիալապես խոցելի շերտերի ներկայացուցիչները թե՛ հումանիտար աջակցություն, թե՛ իրավունքների պաշտպանություն ապահովելու տեսակետից: Հումանիտար ծրագրերում և ծառայություններում թիրախավորվել են նաև սիրիահայ փախստականները, որոնց քաղհասարակության կազմակերպությունները տրամադրել են աջակցություն կացարանի և սննդամթերքի ծախսերը հոգալու համար[48]:

Պետությունը և Կառավարությունը մի քանի միջոցառումներ են մշակել և նախապատրաստել քովիդի արձագանքման համար հատկապես: Մեծ մասը եղել է դրամական աջակցության ծրագրեր: Իհարկե հիմնականում թիրախավորել են աշխատանք ունեցող, ֆորմալ կբաղվածության մեջ գտնվող անձանց, կանանց, երեխաներին, նաև նպաստառու

47 osf.am. Բաց հասարակության հիմնադրամները 130 միլիոն ԱՄՆ դոլար է հատկացնում՝ օգնելու COVID-19-ի հետևանքով առավել տուժածներին. վերցվել է՝ https://bit.ly/3iGu3fC:

48 Նույն տեղում:

ընտանիքներին որոշակի փոխհատուցում է տրվել կոմունալ ծախսերի գծով, և մենք՝ որպես միջազգային կազմակերպություն, նաև աջակցել ենք հաշմանդամություն ունեցող երեխաներին, տրամադրել ենք մեկանգամյա օգնություն՝ 26,500 դրամ ամեն երեխայի հաշվով՝ հավելելով պետության կողմից իրականացվող ծրագրերը:

Միջազգային կազմակերպության ներկայացուցիչ

Մենք հենց այդ օրերին՝ լոքդաունի ժամանակ, սկսեցինք մի ծրագիր համավարակի պատճառով տանը նստած և աշխատավարձ չստացող մարդկանց համար, բայց որոնք ունեին կարիքներ: Մենք այդ մարդկանց կարիքները փորձեցինք արագ արձագանքման ծրագրի միջոցով հոգալ, տրամադրել նրանց առաջին անհրաժեշտության պարագաները... Մեր թիրախ խմբում հենց կոնկրետ այն մարդիկ էին, ովքեր աշխատանքն էին կորցրել, և նաև ունեինք միայնակ մարդկանց թիրախային խումբը՝ հիմնականում ծերերի, որոնք չեն աշխատում, կենսաթոշակ են ստանում, և իրենց առողջությանը սպառնալիք է խանութ գնալ-գալը... Երկու խմբերին էինք հիմնականում թիրախավորում:

Հասարակական կազմակերպության ներկայացուցիչ

Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները սոցիալական աջակցության ծրագրերը փորձում էին համատեղել ու համաձայնեցնել պետության գործունեության հետ: Օրինակներից մեկը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Հայ առաջադեմ երիտասարդություն» ՀԿ-ի միջև ստորագրված փոխըմբռնման հուշագիրն է, որի շրջանակում կորոնավիրուսի տարածման հետևանքով առաջացած սոցիալ-տնտեսական խնդիրները լուծելու համար Երևանում և հարակից համայնքներում բնակվող 900 ընտանիքի տրամադրվել է մեկամսյա սնունդ, հիգիենայի պարագաներ և այլ անհրաժեշտ իրեր: Աջակցությունը տրամադրվել է մարդասիրական օգնության կարիք ունեցող այն անապահով ընտանիքներին, որոնց անդամները կորոնավիրուսի հետևանքով կորցրել են աշխատանքը և դուրս են մնացել Կառավարության աջակցության ծրագրերից[49]:

Իրազեկվածության բարձրացում և կրթություն

Քանի որ կորոնավիրուսի համավարակը նոր էր, վիրուսի մասին բավական արագ տարածվեցին ապատեղեկատվություն պարունակող նյութեր, դավադրության տեսություններ (Սոցիոսկոպ, 2021): Քաղաքացիական հասարակությունն ուժերը կենտրոնացրեց հանրությանը գիտելիք և տեղեկություն փոխանցելու ուղղությամբ՝ իրականացնելով տեղեկատվական արշավներ: Օրինակ՝

49 apy.am. Սննդի, հիգիենայի պարագաների և այլ անհրաժեշտ իրերի փաթեթներ 900 ընտանիքների ԱՍՀՆ-ի և «Հայ առաջադեմ երիտասարդություն» ՀԿ-ի համագործակցության շրջանակում. վերցվել է՝ https://bit.ly/3g0IavM:

Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի աջակցությամբ «Ֆակտոր Թի-Վի»-ն, «Իրազեկ քաղաքացիների միավորումը», «Բուն Թի-Վի» հեռուստաալիքը, «Հոդված 3» ակումբը, «Միտք» հասարակական կազմակերպությունը, «Քաղաքականության հետազոտական կենտրոնը» և մի շարք այլ կազմակերպություններ նպաստել են համավարակի վերաբերյալ փաստերի և գիտության վրա հիմնված հանրային գիտելիքի ձևավորմանը և այս թեմայով ապատեղեկատվության դեմ պայքարին, մշակել են մատչելի տեսահոլովակներ, պաստառներ, իրականացրել են հանրային իրազեկման տարբեր ակցիաներ: Ավելին՝ ԲՀՀ-Հայաստանը հեռավար ուսուցումից դուրս մնացած երեխաների կրթության շարունակականությունն ապահովելու նպատակով աջակցել է «Մաթեմատիկա» և «Մայրենի լեզու» առարկաների հեռուստադասերի նկարահանումներին և հեռարձակումներին Հայաստանի մարզերում[50]:

Մարդու իրավունքների պաշտպանություն

Արտակարգ դրության պայմաններում մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության այլ կառույցներ ուշադրության կենտրոնում են պահել մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունը: Մասնավորապես քաղաքացիական հասարակության մի շարք կազմակերպություններ «խիստ մտահոգիչ» են որակել Ազգային ժողովի՝ «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրենքում ընդունած փոփոխությունները, որոնք անհամաչափ սահմանափակումներ էին ստեղծում անձնական տվյալների պաշտպանության, մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության, հաղորդակցության ազատության և գաղտնիության իրավունքների իրացման տեսանկյունից:

Ավելին՝ քաղհասարակության որոշ կազմակերպություններ իրականացրին մարդկանց իրավունքների խախտման դեպքերի հավաքագրում և փաստաթղթավորում, դրանց բարձրաձայնում, ինչպես նաև տարբեր ատյաններում բարձրաձայնեցին խախտված իրավունքները, ներկայացրին քաղաքացիների շահերը:

Կորոնավիրուսի համավարակի շրջանում հայտարարված արտակարգ դրության ընթացքում սահմանափակումներն ավելացրել են ընտանեկան բռնության

50 osf.am. Բաց հասարակության հիմնադրամներ–Հայաստանն ավելի քան 1,002,000 ԱՄՆ դոլար է հատկացրել ՔՈՎԻԴ-19-ի հետևանքների չեզոքացման համար. վերցվել է՝ https://bit.ly/3sdeq2s:

դեպքերը[51] և կանանց իրավունքների, աշխատանքային իրավունքների խախտումները: Այս ուղղությամբ ինտենսիվորեն աշխատել են ընտանեկան բռնության հարցերով զբաղվող կազմակերպությունները[52]: Այս կազմակերպությունները, մասնավորապես «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիան», իր ծրագրերից միջոցներ է հատկացրել բռնության և խտրականության ենթարկված կանանց՝ նրանց սոցիալական ծանր վիճակը թեթևացնելու նպատակով: Արտակարգ աջակցության փաթեթները ներառում էին բնակարանային վարձավճարների և կոմունալ ծախսերի փոխհատուցում՝ կոալիցիայի անդամ կազմակերպությունների ծայրահեղ իրավիճակում հայտնված կին շահառուների կենսամակարդակի բարձրացման համար: «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիան» ծրագրային միջոցների մի մասը հատկացրել է կորոնավիրուսից անմիջականորեն տուժած կանանց հզորացմանը: Մասնավորապես կազմակերպությունը աջակցել է սեռական և գենդերային բռնություն վերապրած կանանց, որոնք կոալիցիայի անդամ կազմակերպությունների աջակցությամբ հաղթահարել են բռնությունն ու կարողացել փոքր եկամուտ բերող գործունեություն ծավալել: Շահառու կանանց տրամադրվել են անհրաժեշտ գործիքներ և նյութեր (կարի մեքենաներ, տեքստիլ, ծաղկաբուծության ծաղիկներ, վարսահարդարման պարագաներ և այլն) իրենց փոքր բիզնես նախաձեռնություններն առողջացնելու և տնտեսական անկախությունը պահպանելու համար: Ենթադրամաշնորհների ընդհանուր ծավալը կազմել է 6,395,000 դրամ, որից սոցիալական աջակցության համար՝ 3,803,000 դրամ, իսկ բնակարանային վարձավճարների և կոմունալ ծախսերի փոխհատուցման համար՝ 2,592,000 դրամ[53]:

Խախտված իրավունքների փաստաթղթավորումից և դրանց պաշտպանությունից զատ քաղաքացիական հասարակությունն իրականացրել է նաև ջատագովության միջոցառումներ՝ փոփոխելու արտակարգ դրության ընթացքում ընդունված որոշումների և օրենքների՝ մարդու իրավունքների առնչությամբ ի հայտ եկած խնդրահարույց դրույթները, ինչպես նաև ընդունելու այնպիսի օրենքներ և որոշումներ, որոնք կնպաստեն մարդու իրավունքների պաշտպանությանը համավարակի համատեքստում:

---

51 Արտակարգ դրության պայմաններում «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա» ՀԿ-ի անդամ կազմակերպությունների թեժ գծերին մարտին ստացվել է 803 հեռախոսազանգ, որից 172-ը՝ ընտանեկան բռնության վերաբերյալ, ապրիլին՝ 750 զանգ, որից 250-ը՝ ընտանեկան բռնության վերաբերյալ, և մայիսին արձանագրվել է 915 զանգ, որից 256-ը՝ ընտանեկան բռնության վերաբերյալ: Տես coalitionagainstviolence.org. (2020, հունիս). Ընտանեկան բռնության թեժ գծերին հեռախոսազանգերն աճել են 50%-ով. վերցվել է՝ https://bit.ly/2VOhwOu:

52 Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա (2020, հունիս) Շտապ օգնության փաթեթներ Covid-19-ից տուժած կանանց համար. վերցվել է՝ https://bit.ly/3sbPMzn
osf.am. Բաց հասարակության հիմնադրամներ–Հայաստանն ավելի քան 1,002,000 ԱՄՆ դոլար է հատկացրել ՔՈՎԻԴ-19-ի հետևանքների չեզոքացման համար. վերցվել է՝ https://bit.ly/3sdeq2s:

53 osf.am. Բաց հասարակության հիմնադրամներ–Հայաստանն ավելի քան 1,002,000 ԱՄՆ դոլար է հատկացրել ՔՈՎԻԴ-19-ի հետևանքների չեզոքացման համար. վերցվել է՝ https://bit.ly/3sdeq2s:

Աջակցություն պետությանը

Մի շարք հասարակական կազմակերպություններ և միջազգային կազմակերպություններ, բացահայտելով պետության տրամադրած սոցիալական և տնտեսական հետևանքների հաղթահարման ծրագրերում առկա թերություններն ու բացերը, իրենց աջակցությունն առաջարկեցին պետությանը՝ ծրագրեր մշակելու, տվյալների շտեմարանները թվայնացնելու, ինչպես նաև առավել հասցեական աջակցություն տրամադրելու առնչությամբ: Այսպես՝ պետության ուշադրությունը պետական ծրագրերից և ծառայություններից դուրս մնացած շահառուների և շահառուների կարիքների վրա հրավիրելուց զատ քաղաքացիական հասարակության կազմակերպությունները նաև նպաստել են, որ պետական կառույցները թարմացնեն և թվայնացնեն իրենց գործիքները և տվյալների շտեմարանները:

Հիմա նախարարության հետ աշխատում ենք, որպեսզի փոխենք սոցիալական աջակցության մասին օրենքը, չգիտեմ՝ ինչքանով այնտեղ անդրադարձ կկատարվի աշխատանքին: Նաև օգնելու ենք, որպեսզի նախարարությունն աշխատանքի և սոցիալական պաշտպանության ռազմավարությունը մշակի: Փորձելու ենք օգնել՝ նախարարությանը կոնկրետ ծրագրերի միջոցով լուծեն կորոնավիրուսի և հակամարտության ժամանակ արձանագրված բացերը:

Միջազգային կազմակերպության ներկայացուցիչ

ԳԼՈՒԽ III



ԽՈՑԵԼԻ ԽՄԲԵՐԻ ԵՎ ԿԱՆԱՆՑ ԿԱՐԻՔՆԵՐԻՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔԻ ԲԱՑԵՐԸ



3.1. ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՈՒ ԿԱՆԱՆՑ ՏԵՍԱԿԵՏԸ ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՉԵԶՈՔԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

Համավարակի բռնկումից երկու տարի անց, աչքի առաջ ունենալով համավարակի հետևանքների չեզոքացմանն ուղղված պետության, միջազգային կազմակերպությունների և տեղական քաղաքացիական հասարակության կազմակերպությունների տրամադրած սոցիալական և տնտեսական աջակցության ծրագրերը, կարող ենք վերլուծել դրանց բաղթողումներն ու խնդիրները: Կանանց հետ զրույցներն էլ թույլ են տալիս սեփական փորձով գնահատել պետության տրամադրած աջակցությունը: Համավարակը ստիպեց կառավարություններին արագ արձագանքման միջոցառումներ մշակել: Ընդհանուր առմամբ ՀՀ Կառավարությունը կորոնավիրուսի համավարակի սոցիալ-տնտեսական վնասները չեզոքացնելու համար հատկացրել է 200 մլրդ դրամից ավելի ֆինանսական ռեսուրս (որը կազմում է ՀՆԱ մոտ 2%-ը)՝ աջակցելու ընտանիքներին, միկրոբիզնեսը, ինչպես նաև նրանց, ովքեր կորցրին իրենց աշխատանքը կամ եկամուտը[54]: ՀՀ Կառավարության և տարբեր նախարարությունների հրապարակած տվյալներն առ այն, թե որքանով են այդ ծրագրերը և մատուցված ծառայությունները եղել թիրախավորված, որքանով են իրականում չեզոքացրել կորոնավիրուսի սոցիալական և տնտեսական հետևանքները, սուղ են: Այսպես՝ ՀՀ Կառավարության ծրագրի 2020 թվականի կատարման ընթացքի և արդյունքների մասին զեկույցում ներկայացված է, թե Կառավարությունը կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացմանն ուղղված որ միջոցառման շրջանակում որքան գումար է ծախսել, և որ շահառու խմբին է այն ուղղված եղել[55]: Իրականացված միջոցառումներն ամփոփված են հիմնականում թվային դասիչներով, շահառուների քանակ - ծախսված գումար հարաբերակցությունից բացի այլ տվյալներ ներկայացված չեն: Սա, իր հերթին, հնարավորություն չի տալիս եզրահանգումներ անելու, թե մատուցված ծառայությունները, իրականացված միջոցառումները որքանով են հասել իրենց թիրախներին, որքան (ան)արդյունավետ են իրականացվել թե՛ նյութական՝ ծախս-արդյունավետության, թե՛ ոչ նյութական՝ բովանդակային ու որակական տեսանկյուններից:

Համաձայն «Հայաստանում Covid 19-ի ազդեցության գնահատման» զեկույցի՝

54 imf.org. Policy Responses to Covid 19, Armenia. վերցվել է՝ https://bit.ly/38iACTe:

55 gov.am. (2021, փետրվար). Հավելված ՀՀ Կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի N 242 - Ա որոշման. ՀՀ Կառավարության 2019 թ. փետրվարի 8-ի N 65-Ա որոշմամբ հավանության արժանացած՝ ՀՀ Կառավարության ծրագրի 2020 թ. կատարման ընթացքի և արդյունքների մասին. վերցվել է՝ https://www.gov.am/files/docs/4520.pdf:

ՀՀ Կառավարության ծախսերը 2019-ի համեմատ 2020-ին աճել են 17%-ով՝ պայմանավորված համավարակով առաջ եկած խնդիրները կառավարելու պահանջով (World Bank, 2021):

Ընդ որում՝ էականորեն ավելացել են առողջապահության (50%) և սոցիալական պաշտպանության (20%) ոլորտներում իրականացվող ծախսերի մասնաբաժինները: Իսկ Կառավարության ներկայացրած կորոնավիրուսի սոցիալ-տնտեսական պատճառների վերացման միջոցառումներից ավելի շատ օգտվել են մարզային տնային տնտեսությունները: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ մարզային համայնքներում տնային տնտեսություններից ավելի շատ մարդ է աշխատանք կորցրել, ինչն էականորեն ազդել է այդ տնային տնտեսության եկամտի վրա:

Փորձագիտական գնահատականները, հետազոտության մասնակցած կանանց փորձառությունը, ինչպես նաև մեդիայում հրապարակված նյութերը Կառավարության առաջարկած տնտեսական միջոցառումների և սոցիալական աջակցության ծրագրերի շուրջ ցույց են տալիս, որ թիրախային խմբերը դրանցից օգտվելիս բախվել են խնդիրների, չեն կարողացել օգտվել միջոցառումներից ու ծառայություններից, թեև եղել են այդ ծրագրերի շահառուն[56]: Համաձայն ոլորտի փորձագետների՝ պետության ներդրած գումարը քիչ է, միջոցառումները հստակ չեն, ինչպես նաև ապագայի նվազ կանխատեսելիությունը հետ է պահում շահառուներին և տնտեսվարողներին՝ օգտվելու Կառավարության նախատեսած միջոցառումներից. *«Մինչ օրս հստակ չէ, թե որքան են տևելու կորոնավիրուսի և 44-օրյա ղարաբաղյան պատերազմի հետևանքները: Ուստի ոչ մի խելամիտ բիզնես երկու տարի մարման ժամկետով վարկ չի վերցնի, քանի որ դա պարտք է, որը մարելու համար պետք է եկամուտ ունենալ, մինչդեռ երկար ժամանակ վնասով է աշխատելու: Մյուս խնդիրը միջոցառումների ոչ հստակությունն է: Ըստ գործարարի՝ բանկերը կգուշավոր են վարկեր տրամադրելու հարցում, քանի որ հստակ չէ, թե պետությունն ինչպես է մարելու տոկոսները»*[57]:

Ուսումնասիրությանը մասնակցած որոշ փորձագետների գնահատմամբ էլ կորոնավիրուսի հետևանքների չեզոքացման նպատակով պետության տրամադրած աջակցության ծրագրերն, ըստ էության, եղել են արագ արձագանքման ծրագրեր, որոնք զանգվածային ծառայություններ են տրամադրել հնարավորինս շատ մարդկանց՝ այն մտքով, որ դրանք կհասնեն նաև այն խոցելի խմբերին, որոնք ամենաշատն ունեն աջակցության և մատուցվող ծառայությունների կարիքը:

56 Գևորգյան, Ա. (2020, մայիս). Վարկեր և միանվագ գումարներ. Հակաճգնաժամային միջոցառումներ բիզնես ոլորտին. վերցվել է՝ https://bit.ly/3yuSpBB:

57 Նույն տեղում:

Արագ արձագանքման ծրագրերը խնդիր ունեին այդ պահին մեղմելու ինչքան հնարավոր է շատ կանգվածային խմբերի խնդիրներ: ...Ինձ թվում է, որ ճգնաժամի ժամանակ, երբ գումար ես բաժանում, խնդիրը միշտ մեղմվում է: ...Հասցեականությունը աջակցության ծրագրերի ու ծառայությունների հիմքում որպես խիստ էական չափորոշիչ չի դրվել: Եվ կոնկրետ կորոնավիրուսային համավարակի դեպքում դա արդարացված է, որովհետև տնտեսությունը շարժուն է մնացել:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներկայացուցիչ

2020 թ. հունիսին ՀՌԿԿ–Հայաստանի «Նոր կորոնավիրուսի (COVID-19) համավարակի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություն» հետազոտության[58] հարցվողների 65%-ը նշել է, որ իրենք և իրենց ընտանիքները կորոնավիրուսի սոցիալական ազդեցությունը մեղմելու համար Կառավարության ձեռնարկած աջակցության ոչ մի միջոցառումից չեն օգտվել: Իսկ աջակցություն ստացողների նկարագիրը տրված է Աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3. Կորոնավիրուսի սոցիալական ազդեցությունը մեղմելու համար Կառավարության ձեռնարկած աջակցության ծրագրերը/շահառուները[59]:



Վերոնշյալ հետազոտությանը մասնակցածների մեծամասնությունը հավանություն է տվել Կառավարության աջակցության միջոցառումներին, ինչպես նաև վստահում է պետական կառույցներին, այդ թվում՝ առողջապահական համակարգին և ոստիկանությանը[60]:

Սոցիալական և տնտեսական աջակցության ծրագրերի տրամադրման գործընթացն ավելի հեշտ ու արագ կազմակերպելու համար պետությունը ներդրեց

58 Հետազոտությունն իրականացվել է 2020 թ. հունիսի 21-29-ն ընկած ժամանակահավածում հեռախոսային հարցազրույցների միջոցով: Ընտրանքի ծավալը կազմում է 778 հարցվող՝ 18-ից բարձր տարիքի: Տես ՀՌԿԿ (2020, հուլիս). Նոր կորոնավիրուսի (COVID-19) համավարակի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություն. վերցվել է՝ https://bit.ly/3suHMee:

59 Նույն տեղում:

60 Նույն տեղում:

աջակցության տրամադրման էլեկտրոնային տարբերակը, որի միջոցով մարդիկ առցանց պետք է լրացնեին իրենց տվյալները ու հնարավորություն ստանային օգտվելու այդ ծրագրերից կամ անհամապատասխանության դեպքում մերժվեին: Ինչպես նշում են պետական ոլորտի փորձագետները, համավարակը կարծես թե դարձավ էլեկտրոնային այդ համակարգը ներդնելու խթանը՝ իր խնդիրներով հանդերձ: Հաշվի առնելով, թե ինչ խմբերի էր ուղղված այդ աջակցությունը, ներդրված էլեկտրոնային համակարգն ինքնին խնդրահարույց էր:

Հետազոտության մասնակցած փորձագետներն առանձնացնում են պետության տրամադրած սոցիալական աջակցության ծրագրերի, ինչպես նաև քաղաքացիական հասարակության իրականացրած միջոցառումների հետևյալ խնդիրները.

→ ***Մատչելիություն:*** Հայտադիմումը, որ քաղաքացիները պետք է լրացնեին աջակցության ծրագրերից օգտվելու համար, բարդ էին, բացակայում էին դրանց մեկնաբանող ուղեցույցները, որոնք կօգնեին կողմնորոշվելու, թե ինչպես, քայլերի ինչ հաջորդականությամբ է անհրաժեշտ այն լրացնել: Մատչելիությանն առնչվող մյուս խնդիրը անհամապատասխանության դեպքում գործընթացի կեսից ընդհատելու հնարավորության բացակայությունն էր. մարդիկ անգամ սխալ լրացնելու դեպքում կարողացել են շարունակել գործընթացը, իսկ էլեկտրոնային համակարգն ընդունել է այն՝ չմատնանշելով սխալը: Արդյունքում մարդիկ մերժում են ստացել նաև տեխնիկական անհամապատասխանությունների պատճառով: Մատչելիության հարցին անդրադառնալիս փորձագետները խոսում են նաև օգտվողների դիմում գրելու փորձի բացակայությունից և պետական մարմինների առցանց հարթակներին անտեղյակության խնդիրներից:

> *...կարող եմ անձնական դիտարկումներով [գնահատել], որովհետև օր ու գիշեր քաղաքացիների հետ դիմում ենք լրացրել, որովհետև մեր քաղաքացիները ինչքան էլ ունեն հեռախոս, ինտերնետ, բայց դա երբևէ չեն օգտագործում ճիշտ նպատակի համար: Այստեղ մենք խնդիր ունեցանք, որ մարդիկ անգամ պետական մարմինների էլեկտրոնային հասցեները չգիտեն, սովորական դիմում լրացնել չգիտեն, ընդ որում՝ երիտասարդները: Ես այդ ընթացքում Շիրակի երիտասարդ կանանց հետ էի աշխատում ու բոլորի համար հատիկ-հատիկ դիմում եմ լրացրել, թրեյնինգ էինք անում, թե ինչպես լրացնել դիմումներ:*
>
> ***ԱԺ պատգամավոր***

> *Սոցիալական ծրագրերն ունեին բազմաթիվ բարդություններ: Մի օնլայն համակարգ էր ներդրվել, և հատկապես այն խավը, որն ուներ*

այդ աջակցության կարիքը, ապահովված չէր տեխնոլոգիական միջոցներով և հնարավորություն չուներ նաև օգտվելու այդ ծրագրերից: Դրա հետ կապված բարդություններ շատ կային, և, ըստ էության, այդ համակարգը թիրախային չի աշխատել: Երկրորդ՝ բավականին ուշ է աշխատել, ուշ այն իմաստով, որ մինչև [մարդիկ] տրամադրվում էին, լրացնում էին, հասկանում էին, թե ինչպես պետք է ստանային, բավականին ուշ էր լինում արդեն:

ԱԺ նախկին պատգամավոր

Ծրագրերի դիմելու ընթացակարգը պետք է դարձնել ավելի մատչելի՝ user-friendly, որ մարդը հեշտ մուտք գործի, և երկրորդը, որպեսզի դրանց մասին տեղեկությունը ավելի շատ տարածվի. էկրանից անընդհատ պետք է հնչի, որ այսօր այսինչ ծրագիրն է ու այս-այս-այս չափանիշներով մարդիկ կարող են դիմել: Իրավեկման պակաս է զգացվել, ու մենք այդ ինֆորմացիան փոխանցում էինք հանրային կապերի ՊՈԱԿ-ին ու նշում էինք, թե ինչ բացերի վրա ուշադրություն դարձնեն, երբ իրենք ապդարարում են այդ ծրագրերի մասին: Օրինակ, երբ ասում ես դիմումը գրել առցանց, պետք է հստակ ասել, թե որ կայքում ուր գնալ, ինչ անել, հստակ պատուհաններով պետք է ցույց տալ և լրացնել ՀԾՀ-ն:

ԱԺ պատգամավոր

→ ***Հասցեականություն:*** Սոցիալական աջակցության ծրագրերի տրամադրման գործընթացում խնդիրներ են առաջացել ամենախոցելի մարդկանց գտնելու և նրանց թիրախային աջակցություն տրամադրելու առումով: Այդ պատճառով որոշ ծրագրեր ուղղված էին հասարակության բոլոր անդամներին՝ հնարավոր դարձնելով նաև ամենախոցելիներին հասնելու հավանականությունը, որոնց շարքում են, օրինակ, չգրանցված աշխատողները, ոչ հաստիքային աշխատողները: Զանգվածային այս մոտեցումը ենթադրում էր լրացուցիչ վարչարարություն, թղթաբանություն, ոչ լիարժեք թիրախավորում՝ բաց թողնելով ոլորտային առանձնահատկությունները: Հասարակական ոլորտի փորձագետները քննադատում են պետական մարմիններին՝ նշելով, որ ստեղծված ծանրաբեռնվածության պատճառները զանգվածային մոտեցումը և չհամակարգված աշխատանքն էին, քանի որ դիմումների ընթացակարգը ճիշտ չէր կազմակերպված՝ ծանրաբեռնելով առաջնային տարբեր օղակներին: Պետական ոլորտի ներկայացուցիչները նշում են, որ հասցեականության բացը հնարավոր է եղել լրացնել մարդկանց դիմումներով:

Հիմնական խնդիրն այն է, որ կարողանաս բաց թողնված մարդկանց ներառես, ինչն էլ լուծվում է արդեն դիմում-բողոքներով: Այսինքն, եթե

ինչ-որ մեկին չես գտել, ինքը դիմում է, ասում է, որ իրեն էլ տրամադրեն աջակցություն: Հույսն այն է, որ դու կանխատեսում ես, որ կլինեն որոշակի խոցելի խմբեր, նրանց համար նախատեսում ես ծրագրեր ու ծառայություններ և հույս ունենում, որ ովքեր դուրս են մնացել այդ ծրագրերից ու ծառայություններից, կգրեն դիմում-բողոքներ՝ դրանցից օգտվելու համար, կամ հասարակական կազմակերպությունները մատնացույց կանեն նրանց:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներկայացուցիչ

→ ***Հասանելիություն:*** Այստեղ կարող ենք առանձնացնել մարդկանց՝ առցանց համակարգին տեխնիկական հասանելիության, համակարգիչ ունենալ/չունենալու հարցը: Որոշ դեպքերում մարդիկ չեն կարողացել տեխնիկապես գտնել իրենց անունները ցուցակներում՝ աջակցություն ստանալու համար: Պետական ոլորտի ներկայացուցիչները սա մեկնաբանում են նրանով, որ քաղաքացիական կյանքում և ֆորմալ փաստաթղթային ամրագրումներում կան տարբերություններ և անհամապատասխանություններ: Պետությունը չի կարողացել նույնականացնել մարդկանց նման խնդիրներով, ինչն էլ էականորեն ազդել է ծառայությունների մատուցման հասցեականության վրա:

Դիմումների հիմնական հարցն ու խնդիրները կապված էին նրա հետ, որ մարդիկ չեն կարողացել գտնել իրենց անունները ցուցակներում, նույնականացման խնդիրների են բախվել և չեն կարողացել դիմել: Հիմնական խնդիրները կապված են եղել այդ տեխնիկական հարցերի հետ: ...Դիմումները կապված են եղել նաև նրա հետ, որ մեր քաղաքացիական կյանքը և պաշտոնականը՝ ինստիտուցիոնալացվածը, համարժեք չեն: Օրինակ՝ մարդիկ կարող են ամուսնացած լինել, բայց դա ոչ մի տեղ ամրագրված չէ, երեխաների տվյալները չեն նույնականացվում, չեն համապատասխանում ծնողների տվյալներին, որովհետև շտեմարանների հետ կապված խնդիրներ կան: Կամ մարդիկ ունեն ծննդյան վկայական և չունեն անձնագիր. որքան էլ տարօրինակ է, բայց նման դեպքերը շատ-շատ են:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներկայացուցիչ

Աջակցության ծրագրերը լրիվ օնլայն էին, և հասարակությունը դրան պատրաստ չէր: Իհարկե ցանկացած նոր բանի ներդրում բավական երկար ժամանակ է պահանջում, որ հասարակությունը սովորի: Ցանկացած ռեֆորմի մի քիչ թերահավատությամբ են արձագանքում, բայց տվյալ դեպքում հասարակությունը և ավելի ծանր սոցիալական

վիճակում գտնվող մարդիկ անցան օնլայն տիրույթ: Իրենց համար շատ դժվար էր՝ նաև հաշվի առնելով կրթական ցենզը:

ՄԻՊ գրասենյակի ներկայացուցիչ

→ ***Տվյալների բացակայության հարցը, կրկնություններ***: Կորոնավիրուսի համավարակը և դրանով պայմանավորված ճգնաժամային դրությունը ենթադրում էին արագ արձագանքում: Սակայն համավարակի հենց սկզբում պարզվեց, որ պետությունը չունի բավարար վստահելի և համապարփակ վիճակագրական տվյալներ ՀՀ քաղաքացիների մասին՝ թիրախային և արդյունավետ սոցիալական աջակցության ծրագրեր մշակելու համար: Պաշտոնական տվյալների բազաները չեն պարունակում թարմ տվյալներ, առանձին գերատեսչությունների տվյալները միմյանցից տարբերվում են, անհամադրելի են և ունեն նույնականացման լուրջ խնդիրներ: Այս մասին խոսում են թե՛ պետական ոլորտի ներկայացուցիչները, թե՛ հասարակական ոլորտի փորձագետները, և բոլորը միակարծիք են, որ տվյալները թարմացման և թվայնացման ընդհանուր համակարգում տեղադրման կարիք ունեն՝ հասանելիություն տալով պետական բոլոր գերատեսչություններին:

Պետական համակարգում դատաբանների, նորմալ համակարգերի խնդիր կա, դրանց թվայնացման խնդիր կա, որովհետև, օրինակ, կա նպաստների 1997 թ. բազա: Նպաստների բազայի հանելը, համադրելը, դրա հետ ինչ-որ գործողություն անելը շատ ժամանակատար է: Եթե մենք ունենայինք լավ թվայնացված շտեմարաններ, աջակցությունների տրամադրումը շատ արագ կլիներ: Իսկ հիմա հավար տեղից պետք է պեղես, գտնես, համադրես, ֆիլտրես քո ցանկացած տվյալը:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներկայացուցիչ

Տվյալների պակասի կամ տվյալների անհամադրելիության պատճառով նախարարությունը չէր կարողանում արագ արձագանքել: Դրա պատճառով միգուցե եղել են նաև կրկնություններ դրամական աջակցության տրամադրման ժամանակ: Այսինքն՝ նախարարությունում տարբեր բազաներ էին գործում՝ մոտ 14 թե՛ 15 հատ, և շատ դժվար էր ճշտել կամ ճշգրտել տվյալները: Մինչև հիմա աշխատում ենք այդ ուղղությամբ:

Միջազգային կազմակերպության ներկայացուցիչ

Պետությունը չէր կարող 100 տոկոսով ապահովել սոցիալական ցածր խավին, քանի որ մարդկանց ամբողջական բազան չուներ: Իմ կարծիքն այն է, որ ամբողջական չէր, ոչ մի երկրում էլ ամբողջական չէր

կարող լինել: Համակարգվածության հարցն էր նաև: Այս աստիճանի մեծ խնդիր պետությունը չէր ունեցել, որ կարողանար համակարգված բաղա ունենալ: Սա նաև բերեց նրան, որ պետությունը մտածի, որ նմանատիպ դեպքեր նորից կարող են լինել, ու համակարգի այդ ամեն ինչը:

Առողջության և աշխատանքի տեսչական մարմնի ներկայացուցիչ

→ ***Կարճաժամկետ լուծումներ:*** Համավարակով պայմանավորված խնդիրները պահանջում էին արագ արձագանքում, և ստեղծված ճգնաժամային իրադրությունում Կառավարության մշակած լուծումներն ու աջակցության ծրագրերը կարճաժամկետ բնույթ ունեին՝ չապահովելով շարունակականություն երկարաժամկետ հեռանկարում: Թիրախային ծրագրերը շատ կարճ տևեցին. դրանք հիմնականում մեկանգամյա աջակցության միջոցառումներ էին, սակայն համավարակը շարունակվում է, և աշխատանքային իրավունքների, մասնավորապես չգրանցված աշխատողների խնդրի կարգավորման առնչությամբ իրական և էական քայլերը դեռևս անտեսանելի են: Որքան էլ պետությունը փորձում էր արագ արձագանքել առկա խնդիրներին, նոր խնդիրներն այնքան արագ էին ծագում, որ հաճախ պետության տրամադրած աջակցությունը կամ ոլորտի օրենսդրական փոփոխությունները ժամանակավրեպ էին թվում: Ինչպես պետական, այնպես էլ հասարակական սեկտորի ներկայացուցիչների հետահայաց գնահատականները ցույց են տալիս, որ համավարակի ընթացքում սոցիալական խնդիրներին տրված արագ լուծումները ենթակա են վերանայման՝ հետագայում հնարավոր ճգնաժամերին առավել արդյունավետ արձագանքի եղանակներ մշակելու համար:

Թիրախային ծրագրերը շատ կարճ տևեցին, համավարակը շարունակվում է, բայց այդ ծրագրերը կարծես գոյություն չունեն: Չեմ կարծում, որ պատկան մարմինները կամ ՊԵԿ-ը աշխատանքային իրավունքների մասով որևէ քայլ են ձեռնարկել, որպեսզի առավել խիստ վերահսկողություն սահմանվի կամ որպեսզի տեսնեն, օրինակ, մի ընկերությունը քանի աշխատանքային պայմանագիր է կասեցրել այդ ընթացքում: Որքան գիտեմ, չկան հետապոտական տվյալներ, թե քանի աշխատող աշխատանքը կորցրեց, ինչպես նաև այս մասով չկա որևէ հարուցված դատական գործ, երբ աշխատակիցները դատի են տալիս գործատուին, որովհետև իրավական հարաբերությունների մեջ չեն եղել նրանց հետ: Եթե խոսում ենք մեծ գործատուների մասին՝ սուպերմարկետներ, գործարաններ և այլն, շատ հաճախ մարդիկ այնտեղ սև շուկայում են աշխատում, չեն երևում ոչ մի տեղ կամ գրանցվում են որպես անհատ ձեռներեց և նույնպես ոչ մի իրավունք չունեն որևէ արձակուրդի և այլն, և այլն:

Հասարակական կազմակերպության ներկայացուցիչ

Այն համակարգային խնդիրները, որ տարիներ շարունակ բոլոր ոլորտներում կային, նույն աշխատանքային, ավելի խորացան, տպավորությունն այն է, որ միշտ ուշ է արձագանքը. խնդիրը լինում է, ավարտվում է, նոր արձագանքում են: Եվ հենց էդտեղ է, որ նաև իրավական առումով պատրաստ չէր պետությունը, ճիշտ է, օրենսդրական փոփոխություններ արվեցին, բայց դրանք կամ ուշացած էին, կամ հետադարձության հետ կապված խնդիրներ եղան ու հիմա էլ, մինչև խնդիրը չի հասնում ոսկորին, չի կարգավորվում:

ՄԻՊ գրասենյակի ներկայացուցիչ

→ ***Իրականացրած ծրագրերի ազդեցության և արդյունավետության գնահատման խնդիր:*** Պետությունը մինչ այժմ կորոնավիրուսի համավարակի հետևանքների չեզոքացմանն ուղղված ծրագրերի գնահատում չի իրականացրել: Ծրագրերի ազդեցության և արդյունավետության գնահատման բացակայությունը լուրջ բաց են համարում նաև պետական ոլորտի ներկայացուցիչները: Հասարակական ոլորտի փորձագետները քննարկում են նաև պետության կարողությունների բացը խնդիրների ուսումնասիրության, դրանց հիման վրա որոշումներ կայացնելու հարցում: Ըստ էության՝ աջակցություն տրամադրելուց առաջ կարիքի գնահատում չի իրականացվել՝ արագ արձագանքելու անհրաժեշտությամբ ու ժամանակի սղությամբ պայմանավորված:

Այն ծրագրերը, որ Կառավարությունն արել է, այդքան արդյունավետ չեն եղել: Վատն այն է, որ եթե գնահատմանն անդրադառնամ, ապա Կառավարությունը չի անում ազդեցության գնահատում, ինչն ամենակարևորն է: ...Ընդհանուր առմամբ ես կարևորում եմ ազդեցության գնահատումը, որ նոր ծրագրերում [սխալը] չկրկնվի, բայց մենք տեսանք, որ պատերազմի հետևանքներին ուղղված նմանատիպ միջոցառումները, որ կյանքի կոչվեցին, հասցեականության, հասանելիության, մատչելիության նույն խնդիրներն ունեին:

ՄԻՊ գրասենյակի ներկայացուցիչ

Ավելին՝ համավարակի սկզբում վարակակիրների և կոնտակտավոր անձանց մեկուսացմանն ուղղված պետության իրականացրած միջոցառումները տարբեր փորձագետներ հետահայաց գնահատում են իբրև անարդյունավետ և պետության վրա դրված լրացուցիչ ֆինանսական ծանր պարտականություն, որը պետական սեկտորի ներկայացուցիչները համարում էին վարակի տարածման շղթան կոտրելու միակ տարբերակ: Իսկ փորձագետների մեկ այլ խումբ էլ քննադատում է կոնտակտավորներին առանձնացնելու մոտեցումն այն տեսանկյունից, որ դա

միտված չէր մարդկանց պաշտպանելուն ու վարակի շղթան կոտրելուն, այլ տնտեսավարողներին գումար տրամադրելու և զբոսաշրջության ոլորտը հյուրանոցային լոքդաունի պայմաններում չթուլացնելու ու չքանդելու համար էր:

Քաղաքացիական հասարակության գործունեության խնդիրները համավարակի համատեքստում

Համավարակի հետևանքների մեղմմանն ուղղված աջակցության տրամադրման մեխանիզմներն անմշակ էին, և պետությունը պատրաստ չէր ճգնաժամային իրավիճակին: Կառավարության թերացումները և իրավիճակին ոչ պատշաճ արձագանքը, ինչպես նաև խնդիրների լուծման պատասխանատվությունը և եղանակները չգիտակցելու խորքային հիմնախնդիրը լավագույնս արտացոլված է 2020 թվականի մարտի 21-ի ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հայտարարության մեջ. *«Համացանցում տեղեկություններ են հայտնվել, որ նոր կորոնավիրուսի տարածմամբ պայմանավորված՝ Հայաստանի Հանրապետությունում սահմանված արտակարգ դրության պայմաններում որոշ գործատուներ աշխատակիցներին ստիպում են իրենց հաշվին արձակուրդ վերցնելու դիմում գրել՝ այդպիսով խուսափելով հարկադիր պարապուրդի ժամանակահատվածի համար աշխատավարձ վճարելուց: Թեև մենք մշակել ենք Աշխատանքային օրենսգրքի փոփոխության նախագիծ, և օրենքը այս պահին էլ կարգավորում է գործատու-աշխատող հարաբերությունները, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը չունի որևէ լիազորություն դրանք վերահսկելու համար: Նախարարությունը պատրաստ է պարկաբանումներ տալ օրենքի վերաբերյալ և համագործակցել շահագրգիռ մարմինների հետ՝ արդյունավետ լուծումներ գտնելու նպատակով: Տեղեկացնում ենք, որ ստեղծված իրավիճակում աշխատանքային իրավունքների խախտման դեպքում Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակն առաջարկում է իր օգնությունը[61]»:*

Քաղաքացիական հասարակությունը և միջազգային կազմակերպությունները այս համատեքստում համագործակցել են պետության հետ, ինչպես նաև սեփական նախաձեռնություններն են իրականացրել՝ տրամադրելով օգնություն համավարակից տուժած մարդկանց:

Համավարակի սկզբնական շրջանում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների միջև համագործակցությունը համեմատաբար թույլ է եղել, ինչի հետևանքով ռեսուրսներն արդյունավետորեն չեն բաշխվել: Քաղաքացիական հասարակության այն ներկայացուցիչները, որ սոցիալական աջակցության փաթեթների տրամադրումը կազմակերպում էին մարզերում, առանձնացնում են

61 Lurer.com. (2020, մարտ 16). Զարուհի Բաթոյանը քաղաքացիներին ուղղորդում է դիմել Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ. վերցվել է՝ https://lurer.com/?p=361171&l=am:

համայնքային աշխատողների հետ համագործակցության բացերն ու խնդիրները: Դրանք էին տեղեկատվությանը, մարդկանց նույնականացման բազաներին և աշխատանքային գործիքներին չտիրապետելը, ինչը լրացուցիչ ժամանակ է խլել կազմակերպություններից: Բացի այդ՝ համավարակին առնչվող իրավիճակը ցույց տվեց, որ որոշ համայնքային կառույցներ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ համագործակցելու և աշխատելու փորձ և կարողություններ չունեն:

Բացի դրանից՝ համավարակը օրակարգային դարձրեց հումանիտար օգնության հարցը, և քաղաքացիական հասարակության կազմակերպությունները ստիպված էին իրենց թե՛ ֆինանսական, թե՛ մարդկային ռեսուրսները կենտրոնացնել այդ խնդիրների լուծման համար՝ միաժամանակ բախվելով ֆինանսական մարտահրավերների և ծրագրային կրճատումների խնդրին:

Երևի առաջին մեծ խոչընդոտը, որը մենք ունեցանք, երբ մի քիչ մեծացան մեր ծրագրերը, կապն էր համայնքների հետ և արդյունավետ համագործակցությունը: Դա մի քիչ խնդիր էր, որովհետև իրենք սովոր չէին աշխատել հասարակական կազմակերպությունների հետ և մեկ դիտարկում էին այսպես՝ «դուք պարտավոր եք դա անել», և ամբողջը մեկ վրա էին դնում:

Հասարակական կազմակերպության ներկայացուցիչ

Ֆինանսական ռեսուրսների խնդիրն էր, որովհետև մեր գործունեությունն ինչ-որ առումով չէր աջակցվում, այսինքն՝ ամեն ինչ մնացել էր մեր fundraising-ի վրա և մեր ֆինանսական ռեսուրսների, saving-ների վրա, դա բավականին բարդ էր: Համավարակի ընթացքում ու ընդհանրապես բոլոր ճգնաժամերի ընթացքում հասարակական կազմակերպությունները, քաղհասարակությունը իրենց համայնքին աջակցելու շատ կարևոր դեր ունեն, չէ՞, բայց ստացվում էր մի իրավիճակ, որ այն շրջանում, երբ մեր կարիքը մարդիկ ունեն, այդ ժամանակ մենք ոչ ֆունկցիոնալ վիճակում ենք: Մի կողմից կարիքները շատ-շատ են, մյուս կողմից՝ մեր բոլոր ծրագրերը կանգնած են, որովհետև ոչինչ հնարավոր չի անել, ֆինանսավորումները կանգնած են, ստիպված դու աշխատակիցների հետ պայմանագրերը պիտի խզես և այլն:

Հասարակական կազմակերպության ներկայացուցիչ

Համավարակի առաջին 3-4 ամիսներին ոլորտի դերակատարները չհամակարգված գործողություններ էին անում: Ընդհանրապես համագործակցությունը մեր դաշտում բավականին բարդ է, բայց ճգնաժամերի

Ժամանակ գոնե պետք է կարողանայինք միավորվել և տեսնել, թե ով ինչ հսաա է փակում, ով որ խմբին է աջակցում: Հստացվեր, որ բոլորս նույն գործն ենք անում նույն խմբի համար, և մեր ռեսուրսները վատնում ենք, այն քիչ, քիչ ռեսուրսները, որ ունեինք: Իսկ սկզբում դրանք իրոք շատ-շատ քիչ էին:

Հասարակական կազմակերպության ներկայացուցիչ

Կանանց փորձառությունը

Պետության տրամադրած ծրագրերի և ծառայությունների մասին կանայք տեղեկացել են մեդիայից, սոցիալական գովազդներից, սոցիալական մեդիայից, որոշ դեպքերում նաև՝ գործատուներից, որոնք ուղղորդել են իրենց աշխատակիցներին սոցիալական աջակցության ծրագրերից օգտվելու հարցում:

Սրճարաններում աշխատանքային փորձ ունեցած կանայք դրական են գնահատում պետության տրամադրած աջակցության ծրագրերից օգտվելու իրենց փորձը: Նույնիսկ հետագայում, երբ վերսկսել են աշխատել, գործատուն ֆինանսական խրախուսման միջոցներ է տվել նրանց չաշխատած ժամանակահատվածի համար: Այս ոլորտում աշխատող կանայք, ընդհանրացնելով սեփական փորձը, մատնանշում են, որ ռեստորանների, սրճարանների աշխատակիցները հիմնականում օգտվել են պետության տրամադրած սոցիալական աջակցության ծրագրերից:

Առանձնանում են նաև այն դեպքերը, երբ կանայք աշխատանքը չեն կորցրել կամ ժամանակավոր չեն աշխատել, բայց աշխատավարձ ստացել են և միաժամանակ օգտվել են պետության տրամադրած աջակցության ծրագրերից: Այն կանայք, որոնք օգտվել են սոցիալական աջակցության ծրագրերից, իրենց փորձառությունը դրական են գնահատում: Երիտասարդ կանայք կարողացել են ինքնուրույն կազմակերպել ու լրացնել դիմումներ, տվյալներ, նույնիսկ օգնել տարեցներին, իսկ միջին տարիքի կանանց իրենց դիմումները լրացնելիս օգնել են ընտանիքի երիտասարդ անդամները:

Որևէ խնդիր չեմ ունեցել ծրագրին դիմելու ընթացքի, քայլերի հետ կապված, ինչպես մեծ մասի մոտ էր: Տեղեկացել եմ լուրերի, նախարարության կայքի, սոցցանցերի միջոցով, ինքս լրացրել եմ, երևի հարյուրավոր մարդկանց եմ օգնել, դիմումներ գրանցել՝ ծանոթ-անծանոթ: Որևէ խրթին բան չկար, հասկանալի էր ամեն ինչ:

Հագուստի առևտրի ոլորտում աշխատող կին

Սոցիալական աջակցության ծրագրերից օգտվելու փորձ ունեցող կանայք

արդար են համարում պետության՝ այս կամ այն խմբին աջակցություն տրամադրելու մոտեցումը: Միաժամանակ կանայք չեն կարծում, թե մեծ աջակցություն են ստացել: Պետական օժանդակության միջոցով կարողացել են հոգալ որոշ կենցաղային խնդիրներ:

Մեծ հաշվով բավարար աջակցություն էր, որովհետև տան միակ աշխատողը չէի: Բայց եթե միակը լինեի, բնականաբար մեծ դժվարությունների առաջ կկանգնեի: Ֆինանսական դժվարություն չեմ ունեցել:

Հագուստի առևտրի ոլորտում աշխատող կին

Որ ասեմ՝ այդ փաթեթը ինչ-որ փոփոխություն է արել... Այնպես չէր, որ մեծ գումար էր, ես երկու ամսվա ընթացքում դրանից շատ կաշխատեի... Օրինակ՝ 2 ամիս տևեց, մինչև կարանտինից հետո սալոնները բացվեցին: Այնպես չէ, որ 30 հազարը ինձ երկու ամսվա համար հերիքեց: Կոմունալի, ուտելիքի, խանութի ծախսերը... Բայց ինչ-որ չափով [օգնեց], մարդիկ կան, դա էլ չեն ստացել:

Գեղեցկության սրահում աշխատող կին

Հետազոտությունը ցույց է տալիս նաև, որ եղել են կանայք, որոնց համար անհասկանալի ու անիմն է եղել սոցիալական աջակցության ծրագրից իրենց դուրս մնալու պետության որոշումը: Հարցն այն է, որ կանանց մի մասը պարզապես չի իմացել սոցիալական աջակցության ծրագրերի մասին. պետության տրամադրած տեղեկությունը լիարժեք ու մատչելի չի եղել, ինչի հետևանքով սոցիալական տարբեր շերտերի մարդիկ չեն կարողացել հեշտությամբ դիմել և օգտվել աջակցության ծրագրերից: Սա ակնբախ է դարձնում, որ հետադարձ կապը հանրության հետ, տեղեկության հստակ և համակարգային փոխանցումը շահառու խմբերին հետագա վերանայման անհրաժեշտություն ունեն:

Ես գրել եմ, ամեն ինչ արել եմ՝ տրամադրել եմ իմ անձնագիրը, երեխայի անձնագրի տվյալները, բայց, մեկ է... Երևի բավարար չի եղել: Չգիտեմ՝ ինչպես են իրենք հաշվել: Մտածել են, որ ինձ մոտ ամեն ինչ նորմալ է, չեմ դժգոհում Աստծուց, բայց կուզենամ, որ այդ հատվածը վերանայվի, որ կարիքավորներին տան ամեն ինչ, ոչ թե ում պետք չի, իրենք ամեն ինչ ստանան: Ինձ ուղղակի մերժել են, [ասել են], որ չի հասնում քեզ, ու վերջ: Ինչ-որ պատճառ չեն գրել, որ չի հասնում, ուղղակի գրել են, որ չի հասնում:

Մննդի առևտրի ոլորտում աշխատող կին

Կանայք, ելնելով իրենց փորձառությունից, նաև խոսում են տրամադրված սոցիալական աջակցության ծրագրերի այնպիսի փոփոխությունների մասին, որոնք առավել մեծ չափով հաշվի կառնեն մարդկանց սոցիալ-տնտեսական դրությունը:

Դե ինձ թվում է՝ կես դրույքներն էլ պետք է գոնե 60 հազար դրամից սկսած ստանային, իսկ մի դրույքը՝ գոնե մի քիչ շատ, որովհետև լսել եմ, որ մեկը շատ է ստացել (մեր ոլորտում էլ, ուրիշ ոլորտում էլ), իսկ մյուսը՝ քիչ: Մարդ կա՝ մի ամիս վարձով է ապրում, չէ՞: Եթե նստի տանը, 30 հազարով ինչ ա վարձ տալու կամ ապրելու:

Գեղեցկության սրահում աշխատող կին

3.2. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ

Համավարակի համատեքստում սոցիալ-տնտեսական դրության վատթարացումը մղում է որոշում կայացնողներին մտածելու ապագա ճգնաժամերն առավել կառավարելի դարձնելու, այդ իրավիճակներում ավելի արդյունավետ ու թիրախային աջակցություն տրամադրելու և հանրության համար սոցիալապես արդար պայմաններ ապահովելու շուրջ: Միաժամանակ համավարակը հետաձգեց ու խոչընդոտեց Հայաստանում սոցիալական քաղաքականության ոլորտում համակարգային փոփոխությունների ընթացքը՝ առաջնահերթ դարձնելով կորոնավիրուսի սոցիալական հետևանքների չեզոքացմանն ուղղված արագ արձագանքման ծրագրերի իրականացումը: Սոցիալական արդարության տեսլականի մասին խոսելիս պետական ոլորտի ներկայացուցիչները նախևառաջ կարևորում են այդ հասկացության վերաձևակերպումը և սոցիալական հավասարության գաղափարից դրա տարբերակումը:

> *Կարիք կա վերագտնելու սոցիալական արդարության գաղափարը: Սոցիալական արդարության հաստատման համար նպաստի համակարգի վերանայման ու այդ համակարգը հասցեական դարձնելու անհրաժեշտություն կա: Համակարգը գնահատման չափանիշների հստակության, սուբյեկտիվության նվազեցման և հստակ մեխանիկմների ներդրման խնդիր ունի, որպեսզի նպաստների տրամադրումն իսկապես ըստ կարիքի լինի:*
>
> ***ԱԺ պատգամավոր***

Պետական ոլորտի փորձագետները մատնանշում են պետական նպաստ համակարգի խնդրային լինելը և հիմնարար բարեփոխումների անհրաժեշտությունն այդ ուղղությամբ, որպեսզի հնարավոր լինի թիրախային աջակցություն տրամադրել սուբյեկտիվություն չպարունակող հստակ չափանիշներով: Այս խնդրի մասին խոսում են նաև կանայք, որոնք այս կամ այն չափով երբևէ առնչվել են նպաստ համակարգին և ունեն անարդարության զգացում:

> *Ես միայնակ մայր եմ, բայց որպես միայնակ մայր գրանցված չեմ: 17 տարի է՝ իմ բալիկին մենակով եմ մեծացնում, բայց երբեք պետությունից 10 դրամի օգուտ չեմ ստացել: Ոչ մի տեսանկյունից՝ ոչ գումար, ոչ այն օգնությունը, որ միայնակներին տրամադրում են: Գիտե՞ք, կան մարդիկ, որ իրենց պետք չի այդ գումարը և օգնությունը, բայց պետությունը տրամադրում է, ու դու զարմանում ես: Իմ շրջապատում լիքն են, որ ամուսին ունեն, սկեսուր, սկեսրայր, աշխատում են, մի խոսքով՝ ընտանիք են: ...Պետությունը կուզենամ վերանայի նաև դա:*
>
> ***Մննդի առևտրի ոլորտում աշխատող կին***

Նպաստը ամոթի համակարգ է: Մարդիկ հարմարվել են նպաստառու համարվելու դերին, ինչն էլ քողարկված թույլ է տալիս չգրանցված աշխատող լինել, աշխատել, կուգահեռ նպաստ ստանալ: Երկշերտ խնդիր է առաջանում, և մարդիկ հրաժարվում են կյանքի բարեկեցությունը ապահովել կբաղվածության միջոցով, նախընտրում են համարվել նպաստառու՝ թաքնված, չգրանցված աշխատանք կողքից ունենալով:

ԱԺ պատգամավոր

Տարիներ շարունակ գործող պետական նպաստ համակարգի առկայությունը պայմանավորում է օգնություն ստանալու մարդկանց շարունակական ակնկալիքը: Սոցիալական արդարության տեսլականը նախևառաջ ենթադրում է չգրանցված աշխատողների խնդրի հանգուցալուծում: Գրանցված աշխատանք ունենալու անհրաժեշտությունն ապագայում սոցիալապես պաշտպանված լինելու և աշխատանքային իրավունքները պաշտպանելու, տարբեր ծառայություններից օգտվելու երաշխիք է: Այդուհանդերձ, Հայաստանում մարդիկ տարբեր պատճառներով համաձայնում են չգրանցված աշխատանք ունենալու պրակտիկային: Այդ պատճառների շարքում են գործազրկության բարձր մակարդակը, հարկ չվճարելու ցանկությունն ու անպատրաստակամությունը, պետական նպաստ համակարգից դուրս չմնալու ցանկությունը, իսկ գործատուների կողմից՝ պարտավորություններից ազատվելը, աշխատակիցների համար հարկեր վճարելուց խուսափելը: Այս պրակտիկաներն ակնբախ են դարձնում պետական հստակ քաղաքականության մշակման անհրաժեշտությունը և հանրությանը աշխատանքային իրավունքների մասին իրազեկելու, գործատուներին վերահսկելու հարցերը:

Իհարկե դրա համար կան շատ օբյեկտիվ պատճառներ՝ գործազրկության շատ բարձր մակարդակ կա, դրա համար մարդը համաձայնում է այդ խնդրի հետ, դրա համար սա պետք է միշտ հիշեցնել, պետք է միշտ օրակարգում լինի, ու մարդը հասկանա, որ վաղը կօգտվի այլ ծառայությունից, եթե ինքը դե յուրե ապահովի իր կարգավիճակը, որ ինքը լիքը իրավունքներից կօգտվի, առավել լավ վիճակում կհայտնվի, եթե ունենա այդ կարգավիճակը:

ՄԻՊ գրասենյակի ներկայացուցիչ

Ըստ փորձագետների դիտարկումների՝ սոցիալական արդարության հասնելու ճանապարհը պետք է սկսել հասարակության և պետական սեկտորի համագործակցության, մտածելակերպի և վերաբերմունքի փոփոխությունից: Հասարակության տարբեր շերտեր պետք է վստահ լինեն ապագայում իրենց ունեցած երաշխիքների հարցում, ինչն էլ կխթանի աշխատանքային հարաբերություններն

օրինականացնելու նրանց շարժառիթը: Այս հարցում պետությունը պետք է կարողանա տեսանելի արդյունքներ ու հնարավորություններ ապահովել հասարակության հատկապես խոցելի շերտերի համար, ինչպես, օրինակ, արժանապատիվ աշխատավարձի ապահովում, կենսաթոշակների բարձրացում, ծայրահեղ աղքատության և աղքատության վերացում, ապահովագրական համակարգի ներդրում և այլն: Գործող պայմանների առկայության դեպքում հասարակական ոլորտի որոշ փորձագետներ դժվար են պատկերացնում սոցիալական արդարության հաստատման հեռանկարը:

Ինչ է սոցիալական արդարությունը, և արդյոք հնարավոր է սոցիալական արդարության հասնել մեր նման երկրում, որտեղ ոչ մի ոլորտում արդարություն [չկա]... Արդարության մասին խոսելը ուղղակի անիմաստ է: Բնակչության մեծամասնությունը աղքատության մեջ է ապրում՝ ծայրահեղ կամ ոչ ծայրահեղ, բայց այս պայմաններում չեմ պատկերացնում՝ սոցիալական արդարությունը ինչպես պետք է ապահովվի, և ինչ ծրագրեր կարող են մշակվել այդ ուղղությամբ:

Հասարակական կազմակերպության ներկայացուցիչ

Համավարակը ստիպեց ներդնել և իրականացնել կարճաժամկետ աջակցության ծրագրեր, սակայն համակարգային փոփոխությունների և սոցիալական արդարության կարելի է հասնել միայն երկարատև, լավ պլանավորած ռազմավարական գործողությունների իրականացմամբ: Համավարակը նաև ցույց տվեց, որ հասարակությունն ապահովագրված չէ ճգնաժամերից և արհավիրքներից, չունի սոցիալական երաշխիքներ, և այս պարագայում գործազրկության նպաստը կամ այլ խթանող միջոցառումների, ապահովագրական համակարգի ներդրումն ու ապահովումն են, որ կարող են մասամբ նվազեցնել կամ չեզոքացնել սոցիալ-տնտեսական մարտահրավերները:

Մենք չունենք Հայաստանում գործազրկության նպաստ, այսինքն, եթե դու աշխատանքը կորցնում ես, դու համարյա ոչ մի երաշխիք չունես պետության կողմից: Մենք ունենք միայն ակտիվ զբաղվածության ծրագրեր, և այս համավարակը նաև ցույց տվեց, որ միգուցե որոշ մեխանիզմներ կամ ծրագրեր պետք է իրականացվեն այս ուղղությամբ, քանի որ որպես ֆորմալ զբաղված աշխատող դու ոչ մի երաշխիք չունես: Մեկանգամյա, միգուցե, ինչ-որ աջակցություն ստանաս, բայց հետագայում ոչ մի բան չունես հենվելու համար:

Միջազգային կազմակերպության ներկայացուցիչ

Ինձ թվում է, որ ավելի մեծ incentive-ներ են պետք ընկալումը փոխելու համար: Օրինակ, եթե մենք ունենայինք գործազրկության ապահովագրության համակարգ, որ մարդն իմանար, որ ինքն աշխատում ու

այդ աշխատածի հիման վրա կարող է գործակրկության նպաստ ստանալ այն ժամանակ, երբ կորցրեց աշխատանքը: Եթե իր աշխատանքի համար ինքն ունենա ապահովագրություն, կուզենա արդեն գրանցված աշխատող լինել: ...Այսինքն, եթե ապահովագրական փաթեթներ լինեն աշխատողների համար... Խթանիչներ պետք է լինեն հատուկ, միայն աշխատանքը չի հարցը:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներկայացուցիչ

Անդրադարձ է արվում նաև սոցիալական արդարության հասնելու ճանապարհին կանանց ու տղամարդկանց համար հավասար աշխատանքային պայմաններ ստեղծելու խնդրին՝ առանց խտրականության ու հավասար պայմաններով:

Չգիտեմ, գուցե [սոցիալական արդարության] սերմը գցեն, որ ինքն իրեն կարգավորվի: Մնում է շուկան, որն այսօր չի կարգավորվում ոչ մի պետական միջամտությամբ ու չի կայանում, և խտրականության բացառումը: Սոցիալական արդարության հետ կապված տարբեր ոլորտներում՝ կանանց նկատմամբ խտրականության, կին-տղամարդ աշխատավարձի տարբերության հարցերը կան: Այսինքն՝ սոցիալական արդարության քաղաքականություն՝ ուղղված խտրականության բացառմանը, որը հավասարություն կապահովի:

ՄԻՊ գրասենյակի ներկայացուցիչ

Սոցիալական արդարության հաստատումը մարդկանց հնարավորություն կտա ավելի արժանապատիվ կյանքով ապրելու, որի առանցքային տարրերից են առողջապահական ապահովագրության ներդրումը, հարկային համակարգում արդարության հաստատումը և այլն:

Նախ՝ հարկային արդարությունը չունենք: Դա էլ է ուղղված սոցիալական արդարությանը: Երկրորդ՝ առողջության ապահովագրման համապարփակ համակարգ չունենք: Ինչ-որ պետպատվերներ կային, հիմա դա էլ չկա: Այսինքն՝ առողջության ապահովագրությունը ջրի պես բան է: Թոշակի հարցն է, մինիմալ աշխատավարձի ձևավորման խնդիրն է: Պետք է վերջապես նստենք, խոսենք, միջակային նորմեր կան հաշվարկի, որ այդ ձևով գոնե հաշվարկվի, մարդիկ ստանան մինիմալ աշխատավարձը այնպես, որ կարողանան մի քիչ արժանապատիվ կյանք ունենալ, ոչ թե իրենց այդ կյանքում իսկուր ապրած կգան: Թոշակն էլ, եթե մինիմալ աշխատավարձից ցածր է, փաստորեն այդ թոշակառուն էլ է անտեսված: Պետական աշխատողների աշխատավարձն էլ է ցածր:

Արհմիությունների ներկայացուցիչ

ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2020 թվականի մարտի 11-ին նոր տեսակի կորոնավիրուսի համավարակի տարածման մասին Առողջապահության համաշխարհային կազմակերպության հայտարարությանը հաջորդեց արտակարգ դրության ռեժիմի հայտարարումը տարբեր երկրներում, այդ թվում՝ նաև Հայաստանում: Արդյունքում սահմանափակվեցին մարդկանց հիմնարար իրավունքներն ու ազատությունները: Թե՛ ՀՀ Կառավարությունը, թե՛ միջազգային կազմակերպությունները, թե՛ քաղաքացիական հասարակության կազմակերպությունները ստեղծված իրավիճակի առնչությամբ առաջարկեցին տարբեր լուծումներ՝ իրականացնելով սոցիալական և տնտեսական աջակցությանն ուղղված միջոցառումներ:

ՀՀ Կառավարությունը արտակարգ իրավիճակի արձագանքման, տնտեսական և սոցիալական հետևանքների չեզոքացման ծրագրեր մշակելու և այդ համատեքստում ռեսուրսներ կենտրոնացնելու բավարար ներուժ ցուցաբերեց: Ծրագրերը մշակվեցին և գործարկվեցին համավարակի բռնկման սկզբնական փուլում: Այդուհանդերձ, բնակչության թիրախային խմբերի բացահայտման մեխանիզմները բավարար չէին տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգերի թույլ կառավարման, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և այլ պատասխանատու նախարարությունների միջև համագործակցության բացերի, ինչպես նաև հասարակության հետ ոչ համակարգային, առանց հետադարձ կապի հաղորդակցության պատճառով: Սոցիալական պաշտպանության համակարգը բավականաչափ կայացած և դիմակայուն չէ ճգնաժամերի ժամանակ խոցելի խմբերի և համայնքների կարիքներին համապարփակ և համընդգրկուն արձագանքելուն: Սոցիալական աջակցության ծրագրերը հիմնականում զանգվածային բնույթի են, կիրառում են հասցեականության ապահովման պարզ մեթոդաբանություններ, ինչը չի երաշխավորում հասանելիություն առավել խոցելի, համակարգերից դուրս մնացած խմբերին և անձանց: Որպես արդյունք՝ այս մոդելը աջակցում է միայն սահմանափակ թվով ընտանիքների, քանի որ հաշվի չի առնում խոցելիության այլ գործոններ, ինչպիսիք են ընտանեկան բռնությունը, հմտությունների զարգացման կամ եկամուտ հայթայթելու հնարավորությունների բացակայությունը, կլիմայական ցնցումները կամ անապահով կենսապայմանները և այլ գործոններ[62]:

Այս հետազոտության շրջանակում հավաքված և վերլուծված տվյալները ցույց են տալիս, որ.

- Համավարակի շրջանակում ՀՀ Կառավարության նախատեսած և

62 Հայաստանի սոցիալական պաշտպանության համակարգի խորքային ախտորոշում, https://uni.cf/3k8wmb9:

իրականացրած միջոցառումները լուծել են որոշակի սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներ, այնուամենայնիվ, դրանք բավարար չեն եղել համավարակով պայմանավորված խնդիրների համալիր լուծման համար: Սա պայմանավորված էր նաև նրանով, որ համավարակը ինչպես աշխարհում, այնպես էլ Հայաստանում նոր էր, իսկ դրա առաջ բերած խնդիրներին համարժեք արձագանք տալու պետության մոտեցումներն անմշակ և չփորձարկված էին: Ուստի հետահայաց կարող ենք փաստել, որ միջոցառումների մի մասը կարող էր իրականացվել առավել նպատակային և թիրախավորված:

- Պետության իրականացրած հակաճգնաժամային միջոցառումները նախապես չուսումնասիրված, չգնահատված ռեակցիոն լուծումներ էին, իսկ որոշ դեպքերում ժամանակավրեպ՝ արագ փոփոխվող խնդիրների և կարիքների պայմաններում: Պետության առաջարկած լուծումները համակարգային և ինստիտուցիոնալ չէին, աջակցության տրամադրման մոտեցումը ընդհանուր էր և ոլորտային առանձնահատկությունները հաշվի չառնող: Դրանք ունեին հասցեականության, մատչելիության և հասանելիության խնդիրներ:

- Պետական տարբեր գերատեսչություններում հասանելի տվյալների բազաները թարմացված չեն, որոշ դեպքերում նույնական և համադրելի չեն:

- Համավարակի սկզբնական շրջանում Կառավարության հակաճգնաժամային սոցիալ-տնտեսական աջակցության ծրագրերին դիմած աշխատողները միայն մերժումից հետո տեղեկացան գործատու-աշխատող հարաբերություններում առկա իրավական խնդիրների մասին: Մասնավորապես նրանք իմացան, որ գրանցված չէին կամ աշխատանքային պայմանագրի փոխարեն կնքել էին ծառայությունների մատուցման պայմանագիր, կամ աշխատանքային պայմանագրում որպես աշխատավարձ ֆիքսված գումարը չէր համապատասխանում իրական աշխատավարձի թվին և այլն:

- Համաշխարհային մակարդակում կանայք ավելի են տուժել համավարակով պայմանավորված աշխատանքի կորստից: Կանանց աշխատատեղերի 4,2%-ը փակվել է՝ ի տարբերություն տղամարդկանց աշխատատեղերի 3%-ի (ILO, 2021)՝ կազմելով համապատասխանաբար 54 մլն աշխատատեղ կանանց և 60 մլն աշխատատեղ տղամարդկանց համար: Սակայն եթե 2021 թ. 2019-ի համեմատ աշխատատեղերը տղամարդկանց համար գրեթե ամբողջությամբ վերականգնվել են (59 մլն), ապա կանանց համար այս թիվը 41 մլն է: Այսինքն՝ 2021 թ. տվյալներով աշխատաշուկայում 13 միլիոնով ավելի քիչ զբաղված կին կա, քան 2019 թ. ցուցանիշն էր:

- Կորոնավիրուսի համավարակից Հայաստանում ամենատուժած ոլորտներն են մշակող արդյունաբերության, շինարարության, առևտրի, հյուրանոցային և հանրային սննդի կազմակերպման, մշակույթի, ժամանցի և սպասարկման այլ ծառայությունների ոլորտները: Առևտրի, հյուրանոցային և հանրային սննդի կազմակերպման, մշակույթի և զվարճանքի, սպասարկման այլ ծառայությունների ոլորտներում կանանց ներգրավվածությունը բավականին բարձր է: Եթե կանանց ընդհանուր զբաղվածությունն աշխատաշուկայում 45,5% է, ապա այս տուժած ոլորտներում նրանց ներգրավվածությունը (օրինակ՝ հյուրանոցային և հանրային սննդի ապահովման, մշակույթի և ժամանցի, սպասարկման այլ ծառայություններ և այլն) հասնում է մինչև իսկ 50%-ի:

- Հետազոտությանը մասնակցած կանայք մեծ մասամբ չեն տիրապետում իրենց աշխատանքային իրավունքներին, չեն մեկնաբանում իրենց աշխատանքային իրավունքների ոտնահարումները որպես այդպիսին, ինչպես նաև խուսափում են դրանց բարձրաձայնումից՝ աշխատանքը կորցնելու և առանց սոցիալական երաշխիքների մնալու վախից դրդված: Նույնիսկ աշխատանքային պայմանագրի առկայությունը երբեմն չի երաշխավորել, որ կանայք ժամանակին և լիարժեք վարձատրություն ստանան իրենց աշխատանքի համար:

- Սպասարկման ոլորտում գործունեությունն առհասարակ դադարեցրած հաստատություններում աշխատող կանայք համավարակի հետևանքով ոչ միայն կորցրել են իրենց աշխատանքը, այլև ստիպված են եղել փոխել աշխատանքի ոլորտը: Սա դժվար փոփոխություն է եղել կանանց համար, սակայն այս հանգամանքներում՝ լուծման միակ տարբերակը՝ սոցիալական, տնտեսական, կենցաղային հարցերը կարգավորելու և ավելի կայուն աշխատանքային պայմաններ ունենալու համար:

- Կորոնավիրուսի համավարակը ստիպեց ներդնել և իրականացնել կարճաժամկետ աջակցության ծրագրեր, սակայն համակարգային փոփոխությունների և սոցիալական արդարության կարելի է հասնել միայն երկարատև, լավ մշակած ռազմավարական գործողությունների իրականացմամբ: Համավարակը ցույց տվեց, որ մարդիկ ապահովագրված չեն ճգնաժամերից ու արհավիրքներից, չունեն երաշխիքներ, իսկ այս պարագայում գործազրկության նպաստը, ապահովագրական համակարգի, այլ խթանող միջոցառումների ներդրումն ու ապահովումը կարող են որոշակիորեն նվազեցնել կամ չեզոքացնել նման աղետների սոցիալ-տնտեսական բացասական հետևանքները:

առաջարկություններ

Կառավարությանը և ԱԺ-ին.

1. Ներդնել բոլոր ջանքերը Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայով սահմանված իրավունքների և սկզբունքների արդյունավետ իրականացման համար, մասնավորապես.

   - Ապահովել բոլոր աշխատողների անվտանգ և առողջարար աշխատանքային պայմանների իրավունքը:
   - Պայմաններ ստեղծել աշխատողների առողջական վիճակի հնարավոր լավագույն աստիճանն ապահովելու համար: Ապահովել բոլոր աշխատողների և նրանց խնամառուների սոցիալական պաշտպանվածությունը:
   - Զբաղվածության և աշխատանքի հարցերում ապահովել բոլոր աշխատողների համար հավասար հնարավորություններ առանց գենդերային խտրականության:
   - Աշխատանքի դադարեցման դեպքում ապահովել բոլոր աշխատողների պաշտպանված լինելու իրավունքը:
   - Գործատուի անվճարունակության դեպքում ապահովել բոլոր աշխատողների պահանջների/հայցերի պաշտպանվածության իրավունքը:
   - Ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ յուրաքանչյուր ոք պաշտպանված կլինի աղքատությունից և սոցիալական անարդարությունից:

2. Վավերացնել Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի՝ ՀՀ-ի չվավերացրած դրույթները, որոնք առնչվում են անվտանգ և առողջության համար անվնաս աշխատանքային պայմանների, առողջության պաշտպանվածության, սոցիալական ապահովության, մատչելի բնակարանի հասանելիության իրավունքներին:

3. Ձեռնարկել անհրաժեշտ քայլեր ազգային մակարդակում աշխատանքային իրավունքների պաշտպանության միջազգային մեխանիզմների ներդրման և ընդլայնման համար:

4. Իրականացնել աշխատանքային իրավունքների իրազեկվածության բարձրացման միջոցառումներ կանանց շրջանում:

5. Ապահովել քաղաքացիների համար բավարար սոցիալական երաշխիքներ՝ որպես չգրանցված աշխատողներին ստվերից դուրս հանելու նախապայման:

6. Կանոնավորել և զարգացնել ինստիտուցիոնալ համակարգային հիշողություն պետական համակարգում, որն անկախ է անհատներից:

7. Պետական աջակցության ծրագրերում ներառել միջոցառումների գնահատման և մշտադիտարկման պլան հստակ չափորոշիչներով՝ ծրագրերն ու ծառայություններն առավել մատչելի դարձնելու նպատակով: Իրականացնել արդեն իսկ տրամադրված սոցիալ-տնտեսական աջակցության ծրագրերի սոցիալական ազդեցության գնահատում:

8. Թվայնացնել պետական համակարգում տվյալների բազաները՝ ներառելով հնարավորինս թարմ ու ճիշտ նույնականացված տվյալներ, երաշխավորել պետական տարբեր մարմիններում և գերատեսչություններում այդ բազաների հասանելիությունը:

9. Մշակել հանրային զգայունություն ունեցող հարցերը (այս պարագայում կորոնավիրուսի համավարակն ու աշխատանքային իրավունքները) հանրությանը ներկայացնելու և հանրության հետ դրանք քննարկելու ռազմավարական հաղորդակցության քաղաքականություն և գործողությունների ծրագիր, ինչը թույլ կտա մեղմել հասարակության հետ հաղորդակցությունում առկա խզումները և բացերը:

Կառավարությանը, ԱԺ-ին և քաղաքացիական հասարակությանը.

10. Բարելավել պետության, հասարակական և միջազգային կազմակերպությունների միջև առկա համագործակցությունը՝ ճգնաժամային իրավիճակներում այն առավել արդյունավետ դարձնելու համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՂՈՒՄՆԵՐ

- Խալաթյան, Մ., Մարգարյան, Ն., Մանուսյան, Ա. (խմբ.). (2021). Դավադրության տեսությունները և հակագենդերային արշավները կորոնավիրուսի համատեքստում. «Սոցիոսկոպ» ՀԿ:
- ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան. (2020). ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին. տարեկան հաղորդում. վերցվել է՝ https://bit.ly/383oqWB:
- ՀՔԱՎ. (2020). Կովիդ 19-ը և կանանց իրավունքները. ուղեցույց. վերցվել է՝ https://bit.ly/3FEBvSA:
- ՀՀ վիճակագրական կոմիտե. (2009). Աղքատության մակարդակի գնահատումը Հայաստանում. մեթոդաբանական պարզաբանումներ. վերցվել է՝ https://armstat.am/file/article/poverty_2009_6.pdf:
- ՀՀ վիճակագրական կոմիտե. (2021). Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը. վերցվել է՝ https://armstat.am/am/?nid=81&id=2438:
- ՀՀ վիճակագրական կոմիտե. (2021). Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը. վերցվել է՝ https://armstat.am/file/article/sv_12_20a_142.pdf:
- ՀՀ վիճակագրական կոմիտե. (2021). Հայաստանի կանայք և տղամարդիկ. վերցվել է՝ https://www.armstat.am/file/article/gender_2021.pdf:
- Campbell, D., Karapetyan, S., Ronnås,P. (2019). The Armenian Labor Market: Considerations for the Next National Employment Strategy: ILO Draft Submitted to the Government of Armenia.
- ILO. (2020). Rapid Assessment of the Employment Impact and Policy Responses of the COVID-19 Pandemic on Armenia. Retrieved from https://bit.ly/3vMsqDU.
- ILO. (2021). Policy Brief. Building Forward Fairer: Women's Rights to Work and at Work at the Core of the COVID-19 Recovery. Retrieved from https://bit.ly/3vZ4ugF.
- World Bank. (2021). Monitoring Impacts of Covid-19 in Armenia (Armenia High frequency survey wave -1 (AHFS-1): July-September 2020.